



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱՏԱԽԱՂԱՏՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 102 2017

ՀՀ ԳՐԱՏԱԽԱՂԱՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դավիթ Մելքոնյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, դոցենտ (գլխավոր խմբագիր)

Գևորգ Բաղդասարյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Միեր Հակոբյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի խորհրդական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Վահրամ Շահինյան Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության պետ, իրավ. գիտ. թեկնածու (համաձայնությամբ)

Հովհաննես Սրեփանյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Խմբագրության հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511-589, ֆաքս՝ 585-152
Էլ. հասցե՝ orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

Հանձնված է արտադրության՝ 12.12.2017թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 6 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

© Համակարգչային շարվածքը, ոճը, տառաձևերը և էջադրումը՝ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Տպագրված է «Աստղիկ Գրատուն» հրատարակչության տպարանում Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅԵՐ, ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍԱԿԵՏ

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի աշխատանքային այցը ՌԴ Կազան քաղաք.....	3
Արթուր Դավթյանն ու Յուրի Չայկան քննարկել են կիրքերի անցագրերի դեմ պայքարի խնդիրը.....	4
ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ գրասենյակի տնօրենը՝ ՀՀ դատախազությունում.....	5
ԵՆ գլխավոր քարտուղարության պատվիրակությունը՝ ՀՀ գլխավոր դատախազությունում.....	5
Հայաստանի և Արցախի դատախազությունների համատեղ նիստ՝ Ստեփանակերտում.....	6

ԿՈՒԵԳԻՆ

ՀՀ դատախազությունը դիմում է կոշտ միջոցների՝ հետախուզման ոլորտում առկա խնդիրները լուծելու համար	7
--	---

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արգիշտի Քյարամյան Խարդախությունների դեպքերով քրեական գործի հարուցման փուլում առկա խնդիրները ..	9
Հայկ Պետրոսյան Պաշտոնեական լիազորությունների չարաշահման օբյեկտիվ հատկանիշների առանձնահատկությունները	15
Գուրգեն Ներսիսյան Համագործակցության վարույթին քննիչի մասնակցության հիմնախնդիրները.....	19
Հայկ Կարապետյան Հակամրցակցային գործունեությունը որպես քրեական օրենսգրքով արգելված արարք	30
Բագրատ Ղազինյան, Գոռ Ալոյան Կիրքերի անցավորության դեմ պայքարի որոշ հիմնախնդիրների մասին	35

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Սուրեն Քրմոյան, Արփինե Սարգսյան Ազատագրված վայրերում հացադուլի իրականացման ընթացակարգի առանձնահատկությունները.....	40
--	----

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Հայկ Կետոյան Որոշ նկատառումներ անմիջական ժողովրդախիշխանության երաշխավորման վերաբերյալ՝ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության համատեքստում	48
Լիլիթ Ղազանջյան Արժանապատվությունը որպես անձի իրավունքների և ազատությունների հիմք.....	53

ՔԱՂԱՔԱՅԻՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գևորգ Վիրաբյան Ապրանքի պատահական կորստի կամ վնասվածքի ռիսկի անցման ընդհանուր բնութագիրն ԱՄԱՊ կոնվենցիայի և Ինկոտերմսի համատեքստում	58
Զարինե Ազիզյան Հաջորդող գրավի նոր իրավական կարգավորումները. խնդիրներ և լուծումներ.....	65

ՔԱՂԱՔԱՅԻՆԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Լուսինե Սարգսյան Հայցի ապահովման ինստիտուտի կիրառման տեսագործական հիմնահարցերը ՀՀ քաղաքացիական դատավարությունում	71
--	----

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Лусине Варданян Биоправа человека: общий взгляд на новые права человека.....	75
--	----

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Աշոտ Հայրապետյան Միգրացիայի միջազգային կազմակերպությունը և նրա առաքելությունը Հայաստանի Հանրապետությունում	81
--	----

ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts	85
---	----

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները	96
---	----

ՀՀ ՂԵՄԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅԸ ՌԴ ԿԱԶՄԸ ՔԱՂԱՔ



ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը սեպտեմբերի 27-ին Կազանում մասնակցել է ԱՊՀ կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի նիստին:

Խորհուրդը կոչված է համակարգելու կոռուպցիայի համատեղ հակազդմանն ուղղված աշխատանքները, դիտարկման ենթարկելու անդամ երկրների՝ այս ոլորտում ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը, համագործակցելու միջազգային համապատասխան կառույցների հետ: Խորհրդի նպատակներից են հակակոռուպցիոն համատեղ ծրագրերի իրականացումը, տեղեկատվության ակտիվ փոխանակումը և այլն:

Նիստի ընթացքում քննարկվել են Միջպետական խորհրդի նախորդ նիստին ընդունված որոշումների իրականացման արդյունքները, կոռուպցիայի հակազդման ոլորտում ԱՊՀ անդամ երկրների համագործակցության համաձայնագրի նախագիծն ու դրանից բխող հակակոռուպցիոն պայքարի կոնցեպցիայի մշակ-

ման ընթացքը: Վերջիններս ուղղված են ԱՊՀ-ի շրջանակում կոռուպցիայի հակազդման իրավական և կազմակերպական հիմքերի զարգացմանը, անդամ երկրների միջև այս ոլորտում փոխգործակցության սկզբունքների, խնդիրների և ձևաչափերի հստակեցմանը: Միջպետական խորհրդի անդամներն անդրադարձել են նաև ՄԱԿ-ի թմրանյութերի և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի հետ համագործակցության կառուցակարգերին, հաստատել Խորհրդի 2018թ. գործունեության պլանը, ստորագրել նիստի եզրափակիչ բոլոր փաստաթղթերը:

Խորհուրդը մեկամյա ժամկետով ՌԴ գլխավոր դատախազ Յուրի Չայկային ընտրել է ԱՊՀ կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի նախագահ: ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն ստանձնել է Խորհրդի համանախագահի պաշտոնը՝ որպես հաջորդ տարի նախագահությունն ընդունող կողմ:

ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆՆ ՈՒ ՅՈՒՐԻ ՉԱՅԿԱՆ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ԿԻՔԵՐՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԽՆԴԻՐԸ

Աշխատանքային այցով ՌԴ-ում գտնվող ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը Սանկտ-Պետերբուրգում հանդիպել է ՌԴ գլխավոր դատախազ Յուրի Չայկային:



ՀՀ գլխավոր դատախազը շնորհակալություն է հայտնել հյուրընկալության համար և ընդգծել, որ ՀՀ-ի և ՌԴ-ի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակի շրջանակներում ուրախ է արձանագրել երկու դաշնակից, բարեկամ երկրների դատախազությունների միջև հարաբերությունների մակարդակի բարձրացման միտումները:

Արթուր Դավթյանը շեշտել է երկու երկրների դատախազությունների միջև համագործակցության խորացումն առավել ծրագրահեն դարձնելու անհրաժեշտությունը՝ առաջին հերթին նկատի ունենալով հատկապես ԵՏՄ շրջանակներում մարդկանց և էլեկտրոնային ծառայությունների ազատ տեղաշարժի աճող ծավալներն ու այդ համատեքստում քննությունից և արդարադատությունից խուսափող անձանց հայտնաբերելու, կիբերհանցագործությունների, ահաբեկչության դեմ պայքարում ներդրվող համատեղ ջանքերն ավելացնելու անհրաժեշտությունը:

ՌԴ գլխավոր դատախազ Յուրի Չայկան բարձր է գնահատել ԱՊՀ մասնակից-պետու-

թյունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի գործունեությունն առավել նպատակային դարձնելու՝ ՀՀ դատախազության ջանքերը: Նա նշել է, որ հաստատված իրավապայմանագրային բազան, ինչպես նաև երկու երկրների դատախազությունների միջև հաստատված երկկողմ և բազմակողմ ձևաչափերով համագործակցությունն անհրաժեշտ պայմաններ են ստեղծել երկու երկրներում միմյանց քաղաքացիների իրավունքների պաշտպանության, իրավական փոխօգնության, ինչպես նաև միջազգային հանցավորության դեմ պայքարի արդյունավետությունն էլ ավելի բարձրացնելու համար:

Գլխավոր դատախազները քննարկել են նաև իրավական փոխօգնության և դատախազական ոլորտում գործակցությանն առնչվող հարցեր:

Արթուր Դավթյանն իր ռուս գործընկերոջը 2018թ. հրավիրել է Հայաստան՝ ՀՀ դատախազության կազմավորման 100-ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառումներին մասնակցելու նպատակով:

Հանդիպման արդյունքներով Արթուր Դավթյանը և Յուրի Չայկան ստորագրել են ՀՀ և ՌԴ գլխավոր դատախազությունների միջև 2018-2020թթ. համագործակցության ծրագիրը, որով, մասնավորապես, նախատեսվում են համատեղ աշխատանքներ ԵԱՏՄ տարածքում հանցավորության դեմ պայքարի և հանցավոր ճանապարհով ձեռք բերված ակտիվների վերադարձման ուղղությամբ: Արթուր Դավթյանն իր խոսքում նշել է, որ երկու երկրների դատախազությունների միջև 2006 թվականից առ այսօր ստորագրվող համագործակցության՝ թվով 5-րդ ծրագրով նախատեսված միջոցառումները կարևոր նշանակություն ունեն կողմերի միջև հետագա իրավական համագործակցության խորացման համար:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՏՆՕՐԵՆԸ՝ ՀՀ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն ընդունել է ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) տնօրեն Ինգիբյոր Սոլրուն Գիսլադոտիրին:



Առաջին անգամ Հայաստանում գտնվելու կապակցությամբ ողջունելով տիկին Գիսլադոտիրին՝ գլխավոր դատախազն արժևորել է ԺՀՄԻԳ-ի հետ տարբեր ուղղություններով ծավալված համագործակցության կուտակված հարուստ փորձը, հատկապես՝ անցնող տարվա ընթացքում կայացած համապետական ընտրությունների բնականոն, ժողովրդավարական ընթացքն ապահովելու շրջանակներում ունեցած ակտիվ, կառուցողական շփումները: Արթուր Դավթյանը կարևորել է տիկին Գիսլադոտիրի այցը հատկապես սահմանադրական փո-

փոխություններով պայմանավորված՝ դատական և դատախազական համակարգերում ընթացող օրենսդրական լուրջ բարեփոխումների ներկայիս շրջանում և վստահություն հայտնել, որ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի հետ հետագա համագործակցությունը կընդգրկի նաև դրանց կենսագործմանն աջակցությունը: Ներկայացվել են վերջին շրջանում քաղաքացիների հիմնարար, կոնվենցիոնալ իրավունքների պաշտպանության քրեադատավարական մեխանիզմները կատարելագործելու ուղղությամբ ՀՀ դատախազության կողմից իրականացված աշխատանքները:

ԺՀՄԻԳ գրասենյակի տնօրենն իր գոհունակությունն է հայտնել իրավունքի գերակայության ապահովման ուղղությամբ Հայաստանում իրականացվող բարեփոխումների կապակցությամբ: Նա համոզմունք է հայտնել, որ դրանք կնպաստեն ինչպես դատախազության գործառույթների իրականացման արդյունավետության բարձրացմանը, այնպես էլ ստանձնած հանձնառությունների կատարման գործընթացում Հայաստանի հետագա ձեռքբերումներին:

Հանդիպման ընթացքում մտքեր են փոխանակվել մի քանի կոնկրետ ուղղություններով համագործակցությունը սերտացնելու և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի շուրջ:

ԵՄ ՉԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒԴԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ ՉԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դավիթ Մելքոնյանն ընդունել է Եվրոպայի խորհրդրդի նախարարների կոմիտեի կողմից ԵԽ-ին անդամակցությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի վերահսկման գործընթացի շրջանակներում Հայաստանում գտնվող ԵԽ քաղաքական տնօրինության ղեկավար Ա-

լեքսանդր Գեսելի գլխավորած՝ ԵԽ Գլխավոր քարտուղարության պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում պատվիրակության անդամներին հանգամանալից ներկայացվել են Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման ուղղությամբ դատախազության կողմից ձեռնարկված միջոցառումները, այդ թվում՝ ուղղված խոշտանգում-

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 102 2017

ների կանխարգելման և քննության, անձի ազատության, անձնական անձեռնմխելիության ապահովման և արդար դատաքննության կոն-



վենցիոնալ իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած չափանիշների ներդրմանն ու կենսագործմանը:

Երկուստեք կարևորվել է քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի ըն-


դունման անհրաժեշտությունը, որը հնարավորություն կտա քրեական գործերով վարույթի ընթացքում էլ ավելի ընդլայնելու ապացուցման գործընթացին կողմերի հավասար մասնակցության հնարավորությունը: Հանդիպման ընթացքում ներկայացվել են նաև առանձին ոլորտներում դատախազության գործունեության արդյունավետության բարձրացման մասին վկայող վիճակագրական տվյալներ:

Ա. Գեսելը գոհունակություն է հայտնել ստանձնած հանձնառությունների կատարման ուղղությամբ ՀՀ պատկան մարմինների ցուցաբերած հետևողականության կապակցությամբ և կարևորել այդ ուղղությամբ կատարվող աշխատանքների շարունակականության անհրաժեշտությունը:

Հանդիպմանը, որին մասնակցում էին նաև ԵԽ երևանյան գրասենյակի ղեկավար Նատալիա Վուտովան և ԵԽ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչ Պարույր Հովհաննիսյանը, քննարկվել են նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐՃԱՄԻ ԴԱՏԱՍԱԶՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԻՍՏ` ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ

Ստեփանակերտում տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դատախազությունների կոլե-



գիայի համատեղ նիստ, որը բացել է ԱՀ գլխավոր դատախազ Արթուր Մոսիյանը, ով, ողջունելով Հայաստանի գործընկերներին, կարևո-

րել է նման ձևաչափով համատեղ միջոցառումների պարբերաբար կազմակերպման նշանակությունը:

Նիստի ընթացքում քննարկվել են հայկական երկու պետություններում շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման, այս գործերով նախաքննության նկատմամբ հսկողության և դատարաններում մեղադրանքի պաշտպանության պրակտիկան և դրա ընթացքում ի հայտ եկող գործնական խնդիրները: Հիմնական ուշադրություն է դարձվել ապօրինի անտառահատումների կանխարգելման, հանցագործությունների բացահայտման, հարուցված քրեական գործերով օբյեկտիվ և բազմակողմանի նախաքննության անցկացման, պետությանը հասցված վնասի վերականգնման, այս հանցագործություններում ներգրավված անձանց ամբողջական

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 102 2017

շրջանակի բացահայտման և պատասխանատվության ենթարկելու խնդիրներին, վարվող պատժողական քաղաքականությանը: ՀՀ դատախազության ներկայացուցիչներն Արցախի իրենց գործընկերներին են ներկայացրել այս ուղղություններով ՀՀ դատախազության կուտակած փորձն ու վերջին նախաձեռնությունների արդյունավետությունը:

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը շեշտել է երկու հայկական պետությունների օրենքների համապատասխանեցման և հանցավորության դեմ պայքարում միասնական

պրակտիկայի կիրառման անհրաժեշտությունը, փորձի փոխանակումն ու գերակա ուղղություններում իրականացված աշխատանքների վերաբերյալ փոխադարձ իրազեկումը: Նա հանձնարարել է միջոցներ ձեռնարկել՝ այսուհետև ՀՀ դատախազությունում անցկացվող կոլեգիաների նիստերին ու կարևոր թեմաներով քննարկումներին արցախցի գործընկերների մասնակցությունն ապահովելու, ինչպես նաև ընդունվող որոշումներն օպերատիվ կերպով Արցախի դատախազությանը հասու դարձնելու համար:

ԿՈՒԵԳԻԱ

ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՄՈՒՄ Է ԿՈՇՏ ՄԻԶՈՋՆԵՐԻ՝ ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՀՀ Դատախազության կոլեգիայի հերթական ընդլայնված նիստում քննարկվել է քննությունից խուսափող անձանց հետախուզական աշխատանքների կազմակերպման և իրականացման նկատմամբ դատախազական հսկողության վիճակը, նիստին մասնակցել են նաև իրավապահ մարմինների ներկայացուցիչներ:



2017թ. մայիսին ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ստեղծված աշխատանքային խումբը խորությամբ ուսումնասիրել է 2000-2016թթ. հետախուզական աշխատանքների կազմակերպման և իրականացման արդյունավետության վիճակը:

Աշխատանքային խմբի կատարած վիճակագրական ցուցանիշների վերլուծություններն ի հայտ են բերել հետախուզական աշխատանք-

ների արդյունավետության, դրանցում առկա որոշակի բացթողումների օրինաչափություններ, այդ թվում նաև՝ այդ աշխատանքների կանոնակարգմանն առնչվող իրավակարգավորումների անհստակությունները:

Աշխատանքային խումբը վեր է հանել հետախուզվող անձանց հայտնաբերման ուղղությամբ իրականացված աշխատանքներում նախաքննական և օպերատիվ-հետախուզական աշխատանքներ իրականացնող մարմինների թույլ տված բոլոր խախտումներն ու թերությունները, դրանց նկատմամբ դատախազական հսկողության բացերը:

Եթե մինչև 2016 թ. հայտնաբերվել է հետախուզման մեջ գտնվող մեղադրյալների ընդամենը 12,6%-ը, ապա 2016 թվականի ընթացքում՝ դրանց 49,4%-ը, ինչը հաստատում է, որ որքան օպերատիվ են կազմակերպվել հետախուզական աշխատանքները, այնքան դրանք ավելի արդյունավետ են եղել:

- Բացահայտվել են այն դեպքերը՝
1. երբ հետախուզում հայտարարելու մասին որոշում կայացրած լինելու պայմաններում փաստացի հետախուզում չի իրականացվել,
 2. հետախուզական գործեր չեն կազմվել,
 3. քրեական գործերում բացակայել են հետախուզումը դադարեցնելու հիմքերի մասին

● ՕՐԻՆԱԿԱՆ ԼՈՒԹՅՈՒՆ № 102 2017

տվյալները, մինչդեռ հետաքննության մարմինների որոշումներով փաստացի անհիմն դադարեցվել են հետախուզումները,

4. արձանագրվել են դեպքեր, երբ հետախուզում իրականացնելու համար պարտադիր համարվող փաստաթղթերը քննիչները հետաքննության մարմնին չեն ուղարկել, կամ թեև կազմվել են հետախուզական գործեր, սակայն դրանք չեն հաշվառվել հետախուզության ստորաբաժանման հաշվառման մատյանում,

5. երբ անձի վերաբերյալ տարբեր քրեական գործերով կազմված հետախուզական գործերով հանցանքներից միայն մեկով հետախուզումը դադարեցնելու հիմքերի առկայության դեպքում տվյալ անձի նկատմամբ ընդհանրապես դադարեցվել են հետախուզական աշխատանքները, հետախուզման մեջ գտնվող անձը փոխել է անձը հաստատող փաստաթղթերը և հեռացել երկրից, կամ տևական ժամանակ հետախուզման մեջ գտնվող անձինք իրենց իսկ բնակավայրերում դարձել են նոր հանցագործություններից տուժողներ և հայտնաբերվել հիվանդանոցներում,

6. երբեմն հետաքննության մարմնի կողմից չեն ստուգվել հետախուզվողների վերաբերյալ ՀՀ ՍԷԿՏ համակարգում առկա տվյալները՝ հետախուզվողների կողմից ՀՀ սահմանը հատելու հանգամանքը պարզելու համար:

7. Մի շարք գործերով էլ անձինք շարունակել են մնալ հետախուզման մեջ այնպիսի արարքների համար, որոնք ապաքրեականացվել են, կամ հետախուզվողների մեղադրանքը չի համապատասխանեցվել գործող քրեական օրենսգրքին: Ավելին. պարզվել է նույնիսկ, որ մահացած անձը քրեական գործով անցնում է որպես հետախուզվող: Ի հայտ են բերվել նաև հետախուզվող անձանց անձնական տվյալների անհամապատասխանություններ, և այդ պայմաններում ևս անձինք փաստացի չեն փնտրվել:

Աշխատանքային խմբի ուսումնասիրություններին զուգահեռ՝ արձանագրված խախտումները վերացնելու, ուղղելու նպատակով քրեա-

կան գործերով հսկողություն իրականացնող դատախազների ցուցումներով վերսկսվել են քրեական գործերի վարույթները, ձեռնարկվել են անհրաժեշտ դատավարական միջոցներ, որոնց շնորհիվ ապահովվել է պատշաճ հետախուզական գործերի կազմումը, խախտումների ու անհամապատասխանությունների վերացումը, անհրաժեշտ փնտրողական աշխատանքների իրականացումը, որոնց շնորհիվ փաստացի հայտնաբերվել են նաև հետախուզվող անձինք:

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը, անընդունելի համարելով հայտնաբերված խախտումները, հանգամանորեն անդրադարձել է դրանց պատճառների վերլուծմանը, այդպիսիք վերացնելու ուղղությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ տվել կոնկրետ հանձնարարականներ և շեշտադրել մեղավոր անձանց խիստ պատասխանատվությունն ապահովելու անհրաժեշտությունը: ՀՀ գլխավոր դատախազը, բացահայտված խնդիրների մի մասը պայմանավորելով իրավական ընթացակարգերի անհստակություններով, իսկ մյուս մասը՝ հետախուզական գործերով վարույթ իրականացնող մարմինների անբարեխղճությամբ, անպատասխանատու, անփույթ վերաբերմունքով, դատախազներին հանձնարարել է կոնկրետ մեխանիզմներով խստացնել հսկողությունն իրենց վարույթում գտնվող քրեական գործերով փնտրվող անձանց հայտնաբերելու ուղղությամբ նախաքննության և օպերատիվ-հետախուզական մարմինների կողմից տարվող աշխատանքների նկատմամբ, դատախազական ներգործության միջոցների կիրառմամբ սկսել ներգրավվածություն ունենալ դրանցում:

Դատախազության կոլեգիայի քննարկումներից ելնելով՝ հանձնարարվել է նաև հնարավորինս արագ ձեռնարկել հետախուզման գործընթացի արդյունավետության բարձրացմանը և արձանագրված խախտումների վերացմանն ուղղված մի շարք կոշտ և խիստ միջոցներ:

ԱՐԳԻՇՏԻ ՔՅԱՐԱՄՅԱԼ

Երևան քաղաքի դատախազության դատախազ

**ԽԱՐՊԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊԵՐՈՎ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ
ՀԱՐՈՒՑՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Սույն հոդվածը միտված է խարդախությունների դեպքերով քրեական գործի հարուցման փուլում պարզաբանման ենթակա հանգամանքների վերհանմանը և նշված դեպքերով քրեական գործի հարուցման համար անհրաժեշտ հիմքերի բավարարության հարցի վերլուծությանը: Նշված հանգամանքները հոդվածում քննարկման առարկա են դարձել, քանի որ գործնական դժվարություններ են առաջանում խարդախությունների դեպքերը քաղաքացիաիրավական հարաբերություններից տարբերակելու հարցում, ինչը, շատ հաճախ, հանգեցնում է քննարկվող դեպքերի վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին չհիմնավորված որոշումների կայացման:

Քրեական դատավարությունում գործով վարույթն սկսվում է քրեական գործի հարուցման հարցը լուծելիս: Քրեական գործի հարուցման փուլում վարույթն իրականացնող մարմինը սահմանափակ քրեադատավարական գործիքակազմի և ժամկետների պայմաններում պետք է ստուգի քրեական գործ հարուցելու առիթի օրինականության և հիմքերի բավարարության հանգամանքը և այդ կերպ լուծի քրեական գործ հարուցելու կամ քրեական գործ հարուցելը մերժելու հարցը: Հանցագործությունների մասին հաղորդումները քննարկելիս վերը նշված հանգամանքներն ստուգելու և քրեական գործի հարուցման հարցը լուծելու նպատակով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը տասնօրյա ժամկետ է սահմանել, որի ընթացքում վարույթն իրականացնող քննիչը կամ հետաքննության մարմինը հնարավորություն ունի ստանալու լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր, կատարելու դեպքի վայրի զննություն, բերման և անձնական խուզարկության ենթարկելու անձանց, հետազոտման համար վերցնելու նմուշներ, նշանակելու փորձաքննություններ: Այն դեպքերում, երբ չի ստացվել նշանակված փորձաքննության եզրակացությունը, և առանց դա

ստանալու հնարավոր չէ լուծել հանցագործության մասին հաղորդման կապակցությամբ քրեական գործ հարուցելու կամ քրեական գործ հարուցելը մերժելու հարցը, հիշյալ ժամկետը կարող է երկարացվել քսան օրով, որի ընթացքում վարույթն իրականացնող մարմինը կարող է կատարել միայն այնպիսի դատավարական գործողություններ, որոնք ուղղված են փորձագետի գրավոր միջնորդության բավարարմանը:

Միևնույն ժամանակ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը սահմանել է, որ քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը որոշում է կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Քրեական գործի հարուցման փուլի կարևոր խնդիրներից մեկը հանցագործության ենթադրյալ դեպքի առկայության վերհանումն է: Քրեական օրենսդրությունում «հանցագործություն» հասկացությունը բնորոշվում է որպես մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վտանգավոր արարք, որը նախատեսված է օրենսգրքով, իսկ «հանցակազմ» հասկացությունը բնորոշվում է որպես հանրորեն վտանգավոր արարքի՝ քրեական օրենքով սահմանված հատկանիշների համակցություն: Հանցագործության յուրաքանչյուր տեսակի համապատասխանում է իր կոնկրետ հանցակազմը, որի հիմնական տարրերն են օբյեկտը, օբյեկտիվ կողմը, սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը: Այս տարրերից թեկուզ մեկի բացակայությունը վկայում է հանցակազմի, հետևաբար նաև՝ հանցագործության բացակայության մասին:

Քրեական գործի հարուցման փուլում վարույթն իրականացնող մարմինը պետք է ձեռք բերի բավարար փաստական տվյալներ, որոնք համակցության մեջ կվկայեն ՀՀ քրեական օրենսգրքով արգելված արարքի հնարավոր առկայության կամ բացակայության փաստը: Քրեա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 102 2017

դատավարական այս փուլի խնդիրների մեջ չի ներառվում հանցագործության հանցակազմի բոլոր տարրերի վերհանումը, առավել ևս՝ հանցագործության կատարման մեջ անձի մեղավորության կամ անմեղության հարցի լուծումը, այլ՝ դա ուղղված է միայն քրեական գործ հարուցելու առիթների օրինականության և հիմքերի բավարարության ստուգմանը, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածով նախատեսված ապացուցման ենթակա հանգամանքների վերհանումը քրեադատավարական մեկ այլ փուլի՝ նախնական քննության խնդիրն է, և միայն այդ փուլին բնորոշ գործիքակազմի օգնությամբ է հնարավոր ամբողջությամբ լուծել հիշյալ փուլի առջև ծառայած խնդիրները:

Քրեական գործի հարուցման փուլի առավել կարևորությունն այն է, որ այդ փուլում, վերը նշված սահմանափակումների պայմաններում, վարույթն իրականացնող մարմնի առջև դրված է գործով վարույթը շարունակելու՝ նախնական քննության փուլ սկսելու կամ գործով վարույթն ավարտելու՝ նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու հարցը: Քննարկվող փուլում վարույթն իրականացնող մարմնի օպերատիվությունը և ճիշտ կողմնորոշվելու ունակությունը, թերևս, կարող են հանդիսանալ հանցագործությունների բացահայտման գործունե քրեախնդիրներ:

Միևնույն ժամանակ՝ պետք է փաստել, որ առիթներն ապօրինի լինելու կամ հիմքերի բացակայության պայմաններում քրեական գործ հարուցելու դեպքում դա դառնում է անհրաժեշտ և առաջացնում է համապատասխան բացասական հետևանքներ: Սույն համատեքստում պետք է նշել, որ ապօրինի հարոցված քրեական գործերը հանգեցնում են վարույթն իրականացնող մարմնի կողմից ռեսուրսների վատնման և կարող են առաջացնել անձանց իրավունքների չհիմնավորված սահմանափակումներ: Հակառակ նշվածին՝ քրեական գործ հարուցելու օրինական առիթների և հիմքերի առկայության պարագայում քրեական գործ հարուցելը մերժելու դեպքում՝ կատարված հանցագործությունը չբացահայտելու լուրջ վտանգ է ստեղծվում, ինչն ինքնին խոչընդոտում է Հայաստանի Հանրապետության քրեական քաղաքականությամբ պայմանավորված խնդիրների իրականացմանը: Թե-

պետ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը ենթակա է դատախազական հսկողության և դատական վերահսկողության, այնուամենայնիվ, երբեմն հապաղումը կարող է լուրջ դժվարություններ առաջացնել հանցանք կատարած անձանց բացահայտելու և մերկացնելու հարցում: Ասվածն առավելապես վերաբերում է այն դեպքերին, երբ պարզաբանման ենթակա հանգամանքների վերհանման նպատակով անհրաժեշտ է կատարել տարաբնույթ առաջնային քննչական գործողություններ:

ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում խարդախության՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակության կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելու համար:

Խարդախության հանցակազմը զետեղված է ՀՀ քրեական օրենսգրքի՝ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գլխում: Հիշյալ հանցակազմի օբյեկտն այն հասարակական հարաբերություններն են, որոնք կարգավորում են գույքի, գույքային իրավունքի օրինական տիրապետումը, տնօրինումը և օգտագործումը:

Օբյեկտիվ կողմից խարդախության հանցակազմը դրսևորվում է կատարման հատուկ եղանակով՝ խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելով: Խաբեությունը գույքի սեփականատիրոջը կամ գույքը տիրապետողին մոլորության մեջ գցելու նպատակով իրական, ճշմարիտ փաստերի դիտավորյալ խեղաթյուրումն է կամ ճշմարտության մասին լռելը: Այսպիսով՝ խաբեությունը դրսևորվում է հետևյալ երկու եղանակով՝

ա) իրական, ճշմարիտ փաստերի դիտավորյալ խեղաթյուրում,

բ) ճշմարտության մասին լռել:

Վստահությունը չարաշահելն ուրիշի գույքին տիրանալու կամ դրա նկատմամբ իրավունք ձեռք բերելու նպատակով հանցավորի կողմից՝ նրա և գույքի սեփականատիրոջ կամ գույքը տիրապետողի միջև ձևավորված վստահության հարաբերությունների օգտագործումն է: Արարքը խարդախություն որակելու համար բավարար չէ, որ անձն իր արարքներով կամ որոշակի հանգամանքների բերումով տուժողի վստահությունը վայելի, այլ անհրաժեշտ է, որ

նա համոզի տուժողին՝ իրեն փոխանցել գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները¹:

Սուբյեկտիվ կողմից խարդախությունը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ և շահադիտական նպատակով: Խարդախությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորության մեղքի ձևով. հանցավորը պետք է գիտակցի, որ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով հափշտակում է ուրիշի գույքը, ինչպես նաև պետք է նախատեսի և ցանկանա դա²:

Ինչպես արդեն նշվել է՝ քրեական գործ հարուցելու համար պարտադիր նախապայման է քրեական գործի հարուցման փուլում հանցակազմի բոլոր հատկանիշների վերհանումը: Այս համատեքստում տեղին է մեջբերել ՀՀ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի իմաստով՝ քրեական գործ հարուցելու հիմքեր են այն տվյալները, որոնք վկայում են հանցագործության հատկանիշների առկայության մասին: Այլ կերպ ասած՝ եթե իրավասու պաշտոնատար անձը որոշում է կայացնում քրեական գործ հարուցելու մասին, ապա նա ձեռք բերված տվյալները բավարար է համարում հանցագործության փաստի (հանցակազմի օբյեկտիվ կողմի և օբյեկտի) առկայությունը հաստատված համարելու համար³:

Ուշագրավ է, որ Գերմանիայի Դաշնային Հանրապետության ընթացակարգային իրավունքը քրեական գործի հարուցման հանգամանքը կապում է «նախնական կասկած» անվանվող հասկացության առկայության հետ: Ըստ գերմանացի իրավաբան, պրոֆեսոր Վերներ Բոյլկեի՝ նախնական կասկածը փաստական տվյալների համակցություն է, որը, կրիմինալիստիկական փորձը հաշվի առնելով, թույլ է տալիս հետևություններ կատարել կոնկրետ անձի կողմից քրեորեն հետապնդելի արարքի կատարմանը հնարավոր մասնակցություն ունենալու մասին: Նախնական կասկածի առկայության հա-

մար անհրաժեշտ են հստակ փաստեր: Նախնական կասկածը չի կարող հիմնավորվել միայն ենթադրությունների միջոցով: Քրեական գործ հարուցելու համար անհրաժեշտ փաստական տվյալների բավարարության հարցը որոշում է դատախազությունը՝ սեփական հայեցողությամբ:

Հետաքննության իրականացումը թույլատրելի է նաև անձանց չկոնկրետացված շրջանակի նկատմամբ: Բոլորովին պարտադիր չէ, որ նախնական կասկածն ուղղված լինի կոնկրետ անձի դեմ⁴:

Նշվածից հետևում է, որ Գերմանիայի Դաշնային Հանրապետության դատավարական իրավունքը քրեական գործ հարուցելու հանգամանքը կապում է նախնական կասկածի առկայության հետ, ինչը ենթադրում է, թե վարույթն իրականացնող մարմինը հանցագործության դեպքի առկայության կամ հանցանք կատարած անձի վերաբերյալ խիստ նախնական տվյալներ ունենալու պայմաններում կարող է հարուցել քրեական գործ և սկսել քրեական հետապնդում՝ հետագայում այդ կասկածը հաստատելու կամ հերքելու նպատակով:

Խարդախությունների դեպքերով քրեական գործի հարուցման փուլի պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործնականում հաճախ վարույթն իրականացնող մարմինը, շեշտադրելով խարդախության սուբյեկտիվ կողմի բացակայության հանգամանքը, որոշում է կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին: Քիչ չեն դեպքերը, երբ իրավակիրառ մարմինը հիշատակված որոշումը կայացնում է՝ հիմք ընդունելով վիճարկվող իրավահարաբերության՝ քաղաքացիաիրավական բնույթ ունենալու հանգամանքը: Նշված դեպքերում, շատ հաճախ, կողմերի միջև կայացված քաղաքացիաիրավական բնույթի որևէ գործարք հավաստող փաստաթղթի (պայմանագիր, ստացական և այլն) առկայությունը հիմք է դառնում քննարկվող խնդիրը քրեական իրավունքի տիրույթից դուրս հոչակելու և, համապատասխանաբար՝

¹ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ին կայացված, Լիա Արտյոմի Ավետիսյանի վերաբերյալ, թիվ ԵԿԴ/0176/01/09 որոշում, կետ 23, 24:

² Տե՛ս նույն որոշումը, կետ 26, 26.1:

³ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի փետրվարի 15-ին Սուսաննա Անտոնյանի բողոքի հիման վրա կայացված, թիվ ԵԿԴ/0077/11/12 որոշում, կետ 27:

⁴ Вернер Бойльке. Уголовно-процессуальное право ФРГ: 6-е изд., под ред. Л.В.Майоровой. Красноярск: РУМЦ ЮО, 2004, с. 182, 183.

քրեական գործ հարուցելը մերժելու համար: Պետք է նշել նաև, որ լինում են դեպքեր, երբ վարույթն իրականացնող մարմինը գումարներ կամ գույք հափշտակած և հետագայում դրա մի մասը փոխհատուցած անձի արարքում բացառում է խարդախության հանցակազմը՝ պատճառաբանելով խարդախության սուբյեկտիվ կողմի, մասնավորապես՝ սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող նախնական դիտավորության բացակայության հանգամանքը:

Խարդախության սուբյեկտիվ կողմի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել նաև առ այն, որ հիշյալ հանցակազմի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է նաև շահադիտական նպատակի առկայությամբ, այսինքն՝ մինչև գույքը վերցնելը կամ գույքին տիրանալը հանցավորն ի սկզբանե նպատակ է ունենում հափշտակելու, չվերադարձնելու գույքը, չկատարելու խոստումը կամ պայմանագրային պարտավորությունները:

Հակառակ դեպքում, երբ գույքը չվերադարձնելու, խոստումը կամ պարտավորությունները չկատարելու դիտավորությունն առաջանում է գույքը վերցնելուց հետո (շարժառիթից անկախ), խարդախության հանցակազմը բացակայում է⁵:

Նշվածի կապակցությամբ պետք է փաստել, որ կողմերի միջև քաղաքացիաիրավական գործարքի առկայությունը կամ անձի կողմից խարդախության առարկա հանդիսացող գույքը վերցնելու և դրա մի մասը հետագայում հետ վերադարձնելու հանգամանքը, ինքնին, չի կարող վկայել խարդախության հանցակազմի բացակայության մասին: Նշված հանգամանքները պետք է գնահատվեն ձեռք բերված այլ փաստական տվյալների հետ համադրմամբ:

Հատկանշական է, որ հնարավոր են դեպքեր, երբ խարդախություն կատարելու նախնական դիտավորություն ունեցած և խարդախության օբյեկտիվ կողմի կիրառմամբ հափշտակություն կատարած անձը հետագայում հետ վերադարձնի հափշտակած գումարի մի մասը կամ մասամբ կատարի ստանձնած պարտավորությունը: Սակայն, հիշատակված գործողությունները կատարելով, վերջինս կարող է հե-

տապնդել հափշտակությունից տուժած անձին մոլորության մեջ գցելու նպատակ և այդ կերպ կարող է կանխել (հետաձգել) նրա կողմից իրավապահ մարմինների օգնությանը դիմելու հնարավորությունը: Խարդախի կողմից նշված վարքագծի դրսևորումը կարող է ուղղված լինել նաև զոհի վստահությունն ամրապնդելուն, այդ կերպ մինչև սկզբնական խարդախության բացահայտումը հանցավորը կարող է նույն անձից կրկին կամ վերջինի շրջապատից խարդախությամբ նոր հափշտակություններ կատարել և այլն:

Հնարավոր են նաև դեպքեր, երբ խարդախություն կատարելու դիտավորություն ունեցող անձը՝ զոհի վստահությունը ձեռք բերելու նպատակով, սկզբնական շրջանում պատշաճ կերպով կատարի իր ստանձնած պարտավորությունները, ապա, ավելի մեծ ծավալով համագործակցության պատրվակով՝ զոհից սկզբնականից ավելի շատ գույք ստանա, որը խարդախությամբ հափշտակի: Նմանատիպ դեպքերում հանցանք կատարած անձինք, շատ հաճախ, իրենց ստանձնած պարտավորությունները չկատարելու հանգամանքը պայմանավորում են տարատեսակ տեխնիկական խնդիրներով, գործարարական ոլորտում ունեցած անհաջողություններով և այլն:

Բացի այդ՝ խարդախություն կատարած անձինք, ովքեր իրավական առումով պատկերացնում են քննարկվող հանցակազմը և ծանոթ են այդ հանցագործության վերաբերյալ պրակտիկայում առկա մեկնաբանություններին, կարող են դրսևորել վերը նկարագրված վարքագիծը՝ հույս ունենալով հետագայում այդ կերպ խուսափել քրեական պատասխանատվությունից:

Նշվածից տեսանելի է, որ խարդախության դեպքերով քրեական գործի հարուցման փուլում վարույթն իրականացնող մարմինը պետք է գործուն քայլեր ձեռնարկի՝ վերը նշված հանգամանքների հնարավոր առկայությունն ստուգելու նպատակով:

Ինչ վերաբերում է քաղաքացիաիրավական գործարքների օգտագործմամբ խարդախություններ կատարելու դեպքերին՝ նմանատիպ նյութերով վարույթն իրականացնող մար-

⁵ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ին կայացված, Լիա Արտյոմի Ավետիսյանի վերաբերյալ, թիվ ԵԿԴ/0176/01/09 որոշում, կետ 26.2:

մինը պետք է ուշադրություն դարձնի մի շարք հանգամանքների, նախ և առաջ՝ պետք է ստուգվի ենթադրյալ խարդախություն կատարած անձի կողմից գործարքով ստանձնած պարտավորությունների կատարման համար իրական հնարավորություն ունենալու հանգամանքը. եթե անձը քաղաքացիաիրավական գործարքը կնքելու պահին օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել (այդ հնարավորությունն օրինաչափորեն չէր կարող հետագայում առաջանալ) իր կողմից ստանձնած պարտավորությունները կատարելու համար, ապա դա, այլ փաստական տվյալների հետ համադրման արդյունքով, կարող է վկայել վերջինիս՝ խարդախությամբ հափշտակություն կատարելու նախնական դիտավորություն ունենալու մասին, այդ մասին կարող է վկայել նաև՝ հանցանք կատարած անձի կողմից զոհին դիտավորյալ քաղաքացիաիրավական գործարքի հետ առնչվող սխալ կամ խեղաթյուրված տեղեկություններ տրամադրելու հանգամանքը:

Գործնականում, օրինակ՝ հաճախ են հանդիպում դեպքեր, երբ որպես գործարարական գործունեություն իրականացնող անձ ներկայացած և համատեղ գործարարություն իրականացնելու պատրվակով հափշտակություն կատարած անձն, իրականում, նույնիսկ, նմանատիպ գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ տարրական միջոցների չի տիրապետել, անգամ՝ համապատասխան կազմակերպություն չի ունեցել: Նմանատիպ դեպքերում վարույթն իրականացնող մարմինը քրեական գործի հարուցման փուլում պետք է ամբողջությամբ վերհանի ենթադրյալ խարդախություն կատարած անձի կողմից քաղաքացիաիրավական գործարքի արդյունքով ստանձնած պարտավորությունների կատարման համար իրական հնարավորություն ունենալու հանգամանքը: Քննարկվող դեպքերում կարևոր է նաև պարզել, թե ենթադրյալ հանցանք կատարած անձն ինչ գործնական քայլեր է ձեռնարկել ի կատարումն իր կողմից ստանձնած պարտավորությունների: Մինևնույն ժամանակ՝ պետք է փաստել, որ գործարքային պարտավորությունների ոչ էական խախտումները չեն կարող վկայել խարդախության հանցակազմի առկայության մասին:

Նշվածի կապակցությամբ հարկ ենք համարում անդրադառնալ նաև այն հանգաման-

քին, որ խարդախության հանցակազմի առկայության տեսանկյունից այդքան էլ կարևոր չեն քաղաքացիաիրավական գործարքի կնքման ձևը և եղանակը, ավելին՝ հնարավոր են դեպքեր, երբ պատշաճ մակարդակով կնքված պայմանագրերը հանցավորի կողմից օգտագործվեն որպես միջոց՝ նույն անձից բազմակի անգամներ հափշտակություններ կատարելու համար, բացի այդ՝ նոտարական վավերացմամբ կամ այլ գրավոր պայմանագիր կնքելու առաջարկը կարող է զոհի վստահությունը ձեռք բերելու արդյունավետ միջոց հանդիսանալ: Պայմանագրային փոխհարաբերությունների առկայության պայմաններում ևս վարույթն իրականացնող մարմինը պետք է պարզի, թե ենթադրյալ հանցանք կատարած անձն ինչ գործուն միջոցներ է ձեռնարկել ստանձնած պարտավորությունների կատարման ուղղությամբ և իրականում ինչ հնարավորություններ է ունեցել այդ պարտավորությունները կատարելու համար: Օրինակ՝ քննարկվող դեպքերով քրեական գործի հարուցման փուլում, շատ հաճախ, անհրաժեշտություն է առաջանում պարզելու ենթադրյալ հանցանք կատարած անձի նյութական միջոցների ծավալն ինչպես գործարքը կնքելուց առաջ, այնպես էլ դրանից հետո, այդ անձի, վերջինիս ներկայացրած կազմակերպության՝ համապատասխան գործունեություն իրականացնելու համար լիազորված լինելու հանգամանքը, եթե խնդրո առարկա գործունեությունը լիցենզավորում է պահանջում, և այլն: Հարկ է նշել, որ իրավաբանական անձանց ֆինանսատնտեսական վիճակը, այդ թվում՝ վճարունակությունը պարզելու համար արդյունավետ միջոց կարող է հանդիսանալ դատատընտեսագիտական փորձաքննությունը:

Պետք է փաստել նաև այն, որ գործնականում, շատ հաճախ, քաղաքացիաիրավական հարաբերությունների պատճառով որոշակի կորուստներ կրած անձինք փորձում են իրենց վնասները վերականգնել քրեաիրավական դաշտում: Այս համատեքստում անհրաժեշտ է ընդգծել որոշակի տոկոսադրույքով փոխառություններ տրամադրած անձանց հաղորդումները, ովքեր պարտապաններին մեղադրում են խարդախությամբ գումարներ հափշտակելու մեջ, իսկ վերջիններս էլ հայտարարում են, թե պարտատերերը վաշխառուներ են և բարձր տոկոսներով

են իրենց գումարներ տրամադրել: Նմանատիպ դեպքերում կարևոր է, որ վարույթն իրականացնող մարմինը պարզի փոխատուի (գրավատուի) կողմից գումարներ տրամադրելու իրական նպատակը, մինչև գործարքի կնքումը կողմերի միջև փոխհարաբերությունների բնույթը և այլն: Քննարկվող դեպքերում կարող է օգտակար լինել նաև փոխատուի՝ քաղաքացիաիրավական վեճերի, այդ թվում՝ դատական վեճերի վերհանումը, դրանց ուսումնասիրությունն ու հետաքրքրող դեպքի հետ համադրումը:

Քննարկվող հանցակազմի սուբյեկտիվ կողմի առկայությունն ստուգելու նպատակով վարույթն իրականացնող մարմինը քրեական գործի հարուցման փուլում պետք է քայլեր ձեռնարկի նաև պարզելու համար, թե ենթադրյալ հանցանք կատարած անձի և տուժած անձի միջև գործարք կնքելու կամ այլ գույքային հարաբերություններ հաստատելու նախաձեռնությունն ունի կողմից է եղել. եթե նշված նախաձեռնությունը բխել է ենթադրյալ հանցանք կատարած անձից, ապա այդ հանգամանքը, այլ փաստական տվյալների հետ համադրման արդյունքով, ևս կարող է վկայել հանցավորի՝ խարդախություն կատարելու նախնական դիտավորության առկայության մասին: Միևնույն ժամանակ՝ եթե հիշյալ նախաձեռնությունը բխել է տուժած անձից, ապա դա, ինքնին, ամենևին էլ չի վկայում, որ ենթադրյալ հանցանք կատարած անձը չի ունեցել խարդախություն կատարելու նախնական դիտավորություն, քանի որ հնարավոր են դեպքեր, երբ հանցավորի՝ խարդախությամբ հափշտակություն կատարելու դիտավորությունն առաջանա, միայն երբ վերջինս զոհից գույքային հարաբերությունների մեջ մտնելու առաջարկ ստանա: Նկարագրված իրավիճակում հանցավորի՝ խարդախությամբ հափշտակություն կատարելու դիտավորությունը կոնկրետանում և առարկայական է դառնում, երբ վերջինս զոհից որևէ առաջարկ է ստանում: Օրինակ՝ պարտադիր լիցենզավորման ենթակա որոշակի գործունեություն իրականացնելու թույլտվություն չունեցող կազմակերպության ղեկավարը, նման գործունեություն ծավալելու վերաբերյալ առաջարկ ստանալուց հետո, որոշում է պատվիրատուից խարդախությամբ գումար հափշտակել, համաձայնում է վերջինիս առաջարկին և հափշտակում է պատ-

վերի կատարման նպատակով իրեն տրամադրված գումարը:

Խարդախությունների դեպքերով քրեական գործի հարուցման փուլում գործնական խնդիրներ են առաջանում նաև այն իրավիճակներում, երբ, նյութերի նախապատրաստման ընթացքում կողմերի հակասական բացատրություններից և այլ շահագրգիռ անձանց բացատրություններից բացի՝ ուրիշ փաստական տվյալներ ձեռք չեն բերվում: Նշված դեպքերում, որպես կանոն, տուժող կողմի ներկայացրած տվյալների համաձայն տեղի ունեցածը համապատասխանում է խարդախության հանցակազմին, իսկ մյուս կողմը կամ հերքում է տուժողի հետ որևէ գույքային հարաբերություն ունենալու հանգամանքը, կամ ավելի հաճախ եղելությունն այնպես է ներկայացնում, որ կատարվածում բացակայի խարդախության հանցակազմը: Մեր կարծիքով՝ նմանատիպ դեպքերում, եթե քրեական գործի հարուցման փուլի համար օրենքով սահմանված ժամկետում և սահմանափակ դատավարական գործողություններ կատարելու հնարավորության պայմաններում ձեռք չի բերվել կամ հնարավոր չի եղել ձեռք բերելու իրարամերժ բացատրություններ տված կողմերի հայտնած տեղեկությունների իսկությունը ստուգող այլ փաստական տվյալներ, ապա վարույթն իրականացնող մարմինը պետք է հարուցի քրեական գործ, որպեսզի կարողանա հասանելի ողջ գործիքակազմի օգտագործմամբ պարզել հակասական տեղեկությունների արժանահավատությունը:

Ընդհանրացնելով՝ պետք է փաստել, որ խիստ կարևոր է քրեական գործի հարուցման փուլում որակյալ նյութեր նախապատրաստելու և այդ գործընթացի նկատմամբ հետևողական հսկողություն իրականացնելու հանգամանքը, քանի որ նշված փուլում հանցագործությունների օպերատիվ բացահայտման լեգիտիմ շահը հակադրվում է պետական ռեսուրսների վատնման խնդրին: Ինչ վերաբերում է խարդախությունների դեպքերին՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում ներկայումս առկա սոցիալ-տնտեսական իրավիճակը՝ դրանք և սեփականության դեմ ուղղված այլ հաճախ կատարվող հանցագործությունները պետք է գտնվեն վարույթն իրականացնող մարմնի առավել ուշադրության կենտրոնում:

ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ Գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության ավագ դատախազ,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԱՇԱՀՄԱՆ ՕՐԵՆԱԳՐԻ ԿԱՏԱՆՈՒՄԻ ԿԱՏԱՆԱԿԱՆ ԺԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արդի քրեական իրավունքի՝ որպես գիտության համար անկյունաքարային նշանակություն ունեն պետության պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների հայեցակարգերի ուսումնասիրությունն ու պարզաբանումը: Հայտնի է, որ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի խնդիրն արդիական է եղել բոլոր պետությունների համար, քանի որ այդ հանցագործությունները ոտնձգում են կարևորագույն սոցիալական արժեքների դեմ, էական վնաս են հասցնում տնտեսությանը, պետական ապարատի բնականոն գործունեությանը, պետական իշխանության հեղինակությանը, պայմաններ են ստեղծում այլ ծանր հանցագործությունների համար, խախտում են սոցիալական արդարությունը: Պաշտոնեական լիազորությունների չարաշահումը դասվում է պետական ծառայությունների դեմ ուղղված հանցագործությունների շարքը: Հատկանշական է, որ, ՀՀ քր. օր.-ի հոդված 308-ի համաձայն՝ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների համատեքստում, պաշտոնատար անձ են համարվում՝

- 1) մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող անձինք.
- 2) պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ գործերում և զինվորական միավորումներում մշտապես,

ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք:

Հատկանշական է, որ պաշտոնական լիազորությունների չարաշահումը ՀՀ քրեական օրենսգրքով սահմանվում է՝ որպես *պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելը՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, որն էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին (ընդգծումը մերն է՝ Հ.Պ.)*:

Դիտարկվող հանցագործություններն ընդգրկված են ՀՀ քրեական օրենսգրքի «Պետական իշխանության դեմ ուղղված հանցագործություններ» վերտառությամբ 11-րդ բաժնում և նշված բաժնի գլուխ 15-ում՝ «Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություններ»: Քննարկվող թեմայի շրջանակներում հարկ է նշել, որ քրեական իրավունքի տեսությունում համընդհանուր ճանաչում է ստացել հանցագործության օբյեկտի քառանդամ (քառաստիճան) դասակարգումը և, ըստ այդմ՝ առանձնացվում են հանցագործության ընդհանուր սեռային, տեսակային և անմիջական օբյեկտները²: Արդի իրավաբանական գրականության մեջ քննարկվող բաժնում ընդգրկված հանցագործությունների սեռային օբյեկտ է այն հասարակական հարաբերությունների ամբողջությու-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 102 2017

¹ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրք, հոդվ. 308 <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=5/27.05.2017/>:
² Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք. Ընդհանուր մաս/Խմբ. Գ.Ս. Ղազինյան, 3-րդ հրատ. փոփոխ. և լրաց. եր., 2007, էջ 117-122:

նը, որն ապահովում է ՀՀ պետական իշխանության (իշխանության բոլոր ճյուղերի) բնականոն գործունեությունը, իսկ տեսակային օբյեկտի առանձնահատկությունները՝ համապատասխան գլուխներում:

Դիտարկելով պաշտոնեական լիազորությունների չարաշահման օբյեկտի առանձնահատկությունները՝ հարկ է նշել, որ նշված հանցագործության հիմնական օբյեկտը պետական ապարատի կոնկրետ օղակի նորմալ (բնականոն) գործունեությունն է: Միևնույն ժամանակ՝ տվյալ հանցագործությունն օժտված է նաև լրացուցիչ օբյեկտով, որպիսին կարող են հանդիսանալ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, քաղաքացիների, կազմակերպությունների, պետության գույքային, տնտեսական և այլ շահեր: Հատկանշական է, որ արտասահմանյան իրավաբանական գրականությունում պաշտոնեական լիազորությունների չարաշահման օբյեկտի վերաբերյալ մոտեցումն այլ է³: Հանրաճանաչ իրավագետներից ոմանք բացառում են հատուկ և լրացուցիչ օբյեկտների դասակարգումը՝ դիտարկելով պաշտոնեական լիազորությունների չարաշահման օբյեկտի ներքո միայն մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, քաղաքացիների, կազմակերպությունների, պետության գույքային, տնտեսական և այլ շահերը: Իրավագետների մյուս խումբն իրավացիորեն կարծում է, թե անհրաժեշտ է կիրառել դասական մոտեցումը ներկայանալով հիմնական և լրացուցիչ օբյեկտների առանձնահատկությունները:

Պաշտոնեական լիազորությունների չարաշահման օբյեկտիվ կողմն օժտված է երեք պարտադիր հատկանիշներով. 1) պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական դիրքը հա-

կառակ ծառայության շահերին օգտագործելը, 2) հանրորեն վտանգավոր հետևանքները՝ անձանց, կազմակերպությունների իրավունքներին և օրինական շահերին էական վնաս հասցնելու ձևով, 3) արարքի և հետևանքի միջև պատճառական կապը⁴:

Պաշտոնեական լիազորությունների չարաշահումը կարող է կատարվել ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ: Ակնհայտ է, որ պաշտոնատար անձը գործողությամբ հանցանք կատարելու դեպքում ակտիվորեն օգտագործում է իր ծառայողական լիազորությունները, իսկ անգործության դեպքում՝ դիտավորությամբ չի կատարում պարտականությունները⁵: Այսինքն՝ անգործությամբ հանցանքը կատարելու դեպքում անձը (պետական ծառայող) պետք է կատարեր որևէ գործողություն՝ օգտագործելով իր լիազորությունները, սակայն ձեռնպահ է մնում դրանք կատարելուց: Այնուամենայնիվ, արդի իրավագետներից ոմանց կարծիքով՝ պաշտոնատար անձի կողմից պաշտոնական դիրքն օգտագործելն ինքնին ենթադրում է ակտիվ գործողություններ: Հետևաբար՝ ծառայողական պարտականություններ չկատարելը չի կարող ուղղված լինել պետական ծառայության դեմ⁶: Տվյալ հարցի շուրջ հետաքրքրություն են առաջացնում Վ.Վ. Գոլուբևի՝ պաշտոնական լիազորությունների չարաշահման վերաբերյալ կատարած ուսումնասիրությունները: Վ.Վ. Գոլուբևի կարծիքով՝ այն դեպքում, երբ պաշտոնատար անձը գիտակցաբար չի կատարում իր պարտականությունները, տվյալ դեպքում անձը այլ հանցագործության սուբյեկտ է՝ կատարող կամ համակատարող⁷:

Մեր կատարած ուսումնասիրությունները վկայում են, որ վերոնշյալ տարաբնույթ կար-

³ Մանրամասն տե՛ս Здравомыслов Б.В. Должностные преступления. Понятие и квалификация. М., 1975. С. 11-13; Лысов М.Д. Ответственность должностных лиц по советскому уголовному праву. Казань, 1972. С. 71-81; Сахаров А.Б. Ответственность за должностные преступления по советскому уголовному праву. М., 1956. С. 35-38; Светлов А.Я. Ответственность за должностные преступления. Киев, 1978. С. 34, 35; Утевский Б.С. Общее учение о должностных преступлениях. М., 1948. С. 300:

⁴ Տե՛ս Уголовное право. Особенная часть/ Под ред. Л.В. Иногамовой-Хагай, М., 2008. С. 606.

⁵ Տե՛ս Пионтковский А.А., Меньягин В.Д., Чиквадзе В.М. Курс советского уголовного права. Особенная часть. М., 1959. Т. 2. С. 148-150; Лысов М. Д. Ответственность должностных лиц по советскому уголовному праву. Казань, 1972. С. 112-113; Владимиров В.А., Кириченко В.Ф. Должностные преступления. М., 1965. С. 6.

⁶ Տե՛ս Минькова А.М. Уголовная ответственность за злоупотребление полномочиями в коммерческих и иных организациях: Дис.... канд. юрид. наук. Ростов н/Д, 2001. С.59.

⁷ Տե՛ս Голубев В.В. Злоупотребление должностными полномочиями как основа отечественной коррупции// Законодательство. 2002. №6. С. 81.

ծիքները միայն առաջացնում են շփոթմունք, քանի որ հեռանում են իրավացի և հստակ գաղափարից՝ պաշտոնեական լիազորությունների չարաշահումը կարող է կատարվել ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ: Ինչպես իրավացիորեն նշում է Ա. Գաբուզյանը՝ հիմնականում անգործությամբ կատարված հանցանքը դրսևորվում է թողտվությամբ: Օրինակ՝ պաշտոնատար անձը, ով պարտավոր էր խափանել հանցագործությունը, չի անում այդ, կամ վերստուգիչ վերահսկիչ մարմինների ծառայողները չեն ամրագրում հայտնաբերված խախտումները և այլն⁸:

Ակնհայտ է, որ պաշտոնեական լիազորությունների չարաշահման օբյեկտիվ կողմի հատկանիշների բացահայտման համար անհրաժեշտ է պարզել պաշտոնեական դիրքի օգտագործման առանձնահատկությունները: Պաշտոնեական դիրք օգտագործելը դրսևորվում է պաշտոնատար անձի կողմից իրեն վերապահված լիազորությունները հակառակ ծառայության շահերի օգտագործելու մեջ: Ուշագրավ է Ե.Վ. Լվովիչի դիտարկումն այն մասին, որ պաշտոնատար անձը կարող է օգտագործել իրեն վերապահված լիազորությունները հակառակ ծառայողական շահերին նաև անգործության տեսքով, քանի որ պարտականությունների կատարումը անձի գիտակցությունից բխող և նպատակներին համահունչ ակտ է: Պետական լիազորություններն ընդգրկում են ինչպես անձի իրավունքները, այնպես էլ պարտականությունները: Հետևաբար՝ հեղինակը կարծում է, թե անգործության դեպքում պաշտոնատար անձն ի սկզբանե կիրառում է իրեն վերապահված իրավունքը՝ դրանով իսկ գերծ մնալով հակաիրավական արարք կատարելուց⁹: Կարծում ենք՝ այդպիսի մոտեցումն ուռճացված է և չի համապատասխանում իրականությանը:

Հատկանշական է, որ պաշտոնատար անձի լիազորությունները սահմանվում են համապատասխան օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով, որոնք կարգավորում են նրա իրավունքների և պարտականությունների շրջա-

նակը: Ուստի, պաշտոնեական լիազորություններն օգտագործել ասելով, պետք է հասկանալ միայն այնպիսի արարքի կատարում, որը բխում է պաշտոնատար անձի լիազորություններից: Ավելին՝ պաշտոնատար լիազորությունների օգտագործելը մատնանշում է այն փաստը, որ տվյալ պաշտոնատար անձը գործում է միայն իրեն վերապահված լիազորությունների շրջանակում: Այնուամենայնիվ, քննարկվող հանցագործության հանցակազմի առկայության համար անհարժեշտ է, որ այդ լիազորություններն օգտագործվեն հակառակ ծառայության շահերին, ինչը նշանակում է, որ պաշտոնատար անձը կատարել է պետական ծառայության անհրաժեշտությունից չբխող արարք: Ընդ որում՝ պետական շահեր ասելով՝ պետք է նկատի առնել ողջ պետական, հանրային ապարատի շահերը: Իրավաբանական գրականությունում դասական օրինակ է այն, որ պետական ծառայողը փորձում է արդարանալ, որ իր արարքը չի հակասում հիմնարկության, կազմակերպության շահերին, այլ, ընդհակառակն՝ նպատակահարմար է այդ շահերի համար: Այնուամենայնիվ, պաշտոնեական լիազորությունների չարաշահման հանցակազմն առկա է, եթե պաշտոնատար անձի արարքը թեկուզ և չի հակասում տվյալ հաստատության շահերին, սակայն, ընդհանուր առմամբ՝ հակասում է ողջ պետական ապարատի շահերին: Միևնույն ժամանակ՝ արարքում հանցակազմը բացակայում է, երբ պաշտոնատար անձը գործում է ծայրահեղ անհրաժեշտության կամ անհրաժեշտ պաշտպանության վիճակում¹⁰:

Քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել նաև պաշտոնից բխող հեղինակությունն օգտագործելով, երբ անձը, իր հեղինակությունն օգտագործելով, ներգործում է այլ ծառայողների վրա՝ դրդելով նրանց իր կամ երրորդ անձանց օգտին որևէ արարք կատարել:

Հարկ է նշել, որ պաշտոնեական լիազորությունների չարաշահման հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ են հան-

⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք. Հատուկ մաս/ Խմբ. Գ.Ս.Ղազինյան, 2-րդ հրատ. փոփոխ. և լրաց. եր., 2006, էջ 790:

⁹ Տե՛ս Львович Е.В. Должностное злоупотребление: проблемы криминализации, квалификации и отграничения от правонарушений, не являющихся преступлениями: Автореф. дис.... канд. юрид. Саратов, 2004. С.20.

¹⁰ Տե՛ս Уголовное право. Особенная часть/ Под ред. Л.В. Иногамовой-Хагай, М., 2008. С. 607-608.

րորեն վտանգավոր հետևանքները՝ անձանց, կազմակերպությունների իրավունքներին և օրինական շահերին, ինչպես նաև հասարակության կամ պետության օրինական շահերին պատճառված վնասը: Միևնույն ժամանակ՝ էական վնասը կարող է դրսևորվել ինչպես գույքային, այնպես էլ այլ վնասի տեսքով, օրինակ՝ իշխանության մարմինների հեղինակագրկումը, քաղաքացիների սահմանադրական իրավունքների և ազատությունների ոտնահարումը և այլն: Գույքային վնասը կարող է դրսևորվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի վնասի ձևով: Ընդ որում՝ ոչ գույքային վնասի էական լինելը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել պետությանը, հասարակությանը, քաղաքացիներին հասցված բարոյական վնասի ծանրությունը, ոտնահարված իրավունքների և օրինական շահերի կարևորությունը, տուժած քաղաքացիների քանակը և այլ գործոններ:

Միևնույն ժամանակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 308-ի համաձայն՝ էական գույքային վնաս է համարվում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը:

Պաշտոնեական լիազորությունների չարաշահման հանցակազմը նյութական է, հետևաբար՝ հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշ է պատճառական կապը պաշտոնատար անձի արարքի և վրա հասած վտանգավոր հետևանքների միջև: Այսինքն՝ էական վնասը պետք է պատճառվի հենց պաշտոնատար անձի արարքների հետևանքով, հակառակ դեպքում՝ հանցակազմը բացակայում է: Հետևաբար՝ ակնհայտ է, որ պաշտոնեական լիազորությունները չարաշահելը բարդ հանցագործություն է՝ յուրահատուկ օբյեկտիվ հատկանիշներով օժտված:



ԳՈՒՐԳԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Արցախի Հանրապետության Գլխավոր դատախազության կոռուպցիոն, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով բաժնի ավագ դատախազ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԻՆ ՔՆՆԻՉԻ ՄԱՍՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծում (այսուհետ՝ Նախագիծ) որպես համագործակցության վարույթի կողմեր են ներկայացված **դատախազը** և **մեղադրյալն ու նրա պաշտպանը**: Թեև համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագրի կազմմանը մասնակցում է նաև քննիչը, այդուհանդերձ՝ նա համաձայնագրի տեքստը չի ստորագրում և այդ պատճառով ճանաչվում է որպես համագործակցության վարույթի մասնակից և ո՛չ որպես կողմ: Նախագծի 457-րդ հոդվածի 2-րդ մասի ձևակերպումից հետևում է, որ քննիչի անունը և ազգանունը համաձայնագրում նշված չեն նույնիսկ որպես մասնակից: Այդպիսով՝ Նախագիծը չի պարունակում համագործակցության համաձայնագիր կնքելու փուլում քննիչի մասնակցության ձևաչափի ու գործառույթների շրջանակի վերաբերյալ լիարժեք իրավադրույթներ, ինչն իրավական անհստակություն է առաջացնում բովանդակային առումով համաձայնագրի վրա քննիչի դերակատարության ազդեցության և դրա կնքման հետևանքով կողմերի ու մասնակցի իրավունքների և փոխադարձ պարտավորությունների ծավալի շուրջ: Քննիչին համագործակցության համաձայնագրի կողմ չդիտարկելը կարող է առաջացնել որոշակի խնդիրներ, որոնք կարող են կասկածի տակ առնել այդ վարույթի արդյունավետությունն ու համագործակցության ցանկություն հայտնած մեղադրյալի շահերի պաշտպանության երաշխիքների առկայությունը: Մեր կարծիքով՝ Նախագծում քննիչը պետք է դիտարկվի որպես համագործակցության համաձայնագրից բխող որոշակի պարտականություն-

ներ ստանձնած սուբյեկտ, ինչը հիմնավորելու համար ստորև ներկայացվում են հետևյալ փաստարկները:

1. Արդյոք գործարքի ուժով որոշակի իրավունքներ և պարտականություններ ստանձնած սուբյեկտը ենթակա չէ՞ ճանաչման՝ որպես նույն գործարքի կողմ:

Համաձայնագիր եզրույթը քրեադատավարական հարաբերությունների իրավակարգավորման մոտեցումներում կիրառվում է առաջին անգամ: Ա.Սուքիասյանի հոմանիշների բառարանում համաձայնագիրը հավասարեցվում է պայմանագրին:¹ Հայոց լեզվի բացատրական մեկ այլ բառարանում համաձայնագիր նշանակում է պայմանագիր, հավանագիր, կողմերի միջև կնքված դաշինք:² Համաձայնագրին բնորոշ է երկու կամ ավելի կողմերի առկայությունը:

Գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն (*ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 289*): Գործարքները կարող են լինել երկկողմ կամ բազմակողմ (պայմանագիր), ինչպես նաև՝ միակողմ: Պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է երկու կողմի (երկկողմ գործարք) կամ երեք ու ավելի կողմերի (բազմակողմ գործարք) համաձայնեցված կամքի արտահայտությունը (*ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 290*): ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածում գրավոր գործարքը ներառում է հետևյալ պայմանները՝ փաստաթուղթ կազմելը, դրանում գործարքի բովանդակությունը նշելը, գոր-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 102 2017

¹ Աշոտ Մուրադի Սուքիասյան: Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակչություն, Երևան, 1967, էջ 356:
² Արտաշէս Տէր Խաչատուրեան, Հրանդ Գանգրունի եւ Փարամազ Կ. Տօնիկեան: Կ. Տօնիկեան եւ Որդիք Հրատարակչատուն, Պէյրուֆ, 1968, էջ 406:

ծարք կնքող անձի կամ անձանց կամ նրանց կողմից պատշաճ ձևով լիազորված անձանց ստորագրությունը:

Պայմանագրերը լինում են մասնավոր-իրավական և հանրային-իրավական և, հաշվի առնելով, որ քրեական դատավարության իրավունքն ունի հանրային-իրավական բնույթ, համագործակցության համաձայնագիրը ևս պետք է դասել դրանց շարքը:

Ցանկացած գործարք պետք է բավարարի հետևյալ պայմանները՝ ա) պետք է լինի կամային ակտ, բ) կողմերի կամարտահայտությունը պետք է համապատասխանի նրանց իրական կամքին, գ) գործողությունները պետք է լինեն իրավաչափ, դ) կողմերի գործողությունները պետք է ուղղված լինեն քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն, ե) գործարքի կողմ հանդիսացող ֆիզիկական անձինք պետք է օժտված լինեն գործունակությամբ, իսկ իրավաբանական անձինք՝ ընդհանուր կամ հատուկ իրավունակությամբ, զ) գործարքի առարկայի առկայություն՝ գույքային կամ ոչ գույքային իրավունքների հետ կապված, է) օրենքով կամ կողմերի համաձայնությամբ սահմանված գործարքի ձև:

Ըստ Գ.Վ.Աբշիլավայի՝ գործարք հասկացությունն ունի վերսալ նշանակություն ունի նաև հանրային իրավունքի ճյուղերի համար և, թեկուզ որոշակի առանձնահատկություններով, բայց քաղաքացիական իրավունքում դրան տրված բնութագրությամբ կիրառելի է նաև քրեական դատավարությունում և քրեական իրավունքում:³

Ն.Ա.Դուդինան առաջարկում է համագործակցության համաձայնագիր ասելով հասկանալ մեղադրանքի ու պաշտպանության կողմի կամավոր արտահայտած կամքը, որով մեղադրյալը պաշտպանի մասնակցությամբ պարտավորվում է աջակցել իրեն մեղսագրվող և կամ այլ

դեպքի օրենքով սահմանված կարգով քննությանը և հանցագործության բացահայտմանը, իսկ դատախազը պարտավորվում է դրան տալ դատավարական ձև և մեղադրյալի կողմից պարտավորությունները պատշաճ կատարվելու դեպքում որոշում է ընդունում դատական քննության հատուկ կարգ կիրառելու մասին, որը հետագայում հիմք է հանդիսանում մեղադրյալի նկատմամբ պատիժ նշանակելիս քրեական օրենքի համապատասխան նորմերը կիրառելու համար:⁴

Վ.Վ.Գորսկին և Մ.Վ.Գորսկին համագործակցության համաձայնագիրը դասում են կոնսենսուսային գործարքների շարքը, քանի որ դա համարվում է կնքված կողմերի միջև պայմանների շուրջ համաձայնություն ձեռք բերելուց և համաձայնագիրը ստորագրելու պահից: Նրանք համագործակցության համաձայնագրի՝ որպես գործարքի էական պայմաններ են նշում համաձայնագրի առարկան, ձևն ու կատարման ժամկետը:⁵

Վերոհիշյալ իրավագետները, համագործակցության համաձայնագրի առարկայի շուրջ իրավունքների ու պարտականությունների տեսանկյունից քննարկելով դատախազի՝ որպես համաձայնագրի կողմ հանդիսանալու հարցը, այն տեսակետն են արտահայտել, որ համաձայնագրի առարկան կողմերի փոխադարձ գործողություններն են. քրեական դատավարության օրենսդրությունը պարտադիր պայման է սահմանում համաձայնագրում շեշտել այն գործողությունները, որոնք պետք է կատարի մեղադրյալը, իսկ դատախազը բացառապես ամրագրում է մեղադրյալի պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև քրեական օրենսգրքի այն հոդվածները, որոնք կարող են կիրառվել մեղադրյալի կողմից պարտավորությունները կատարվելու դեպքում:

Ընդհանուր առմամբ՝ քրեադատավարական այն ինստիտուտները, որոնք կողմերի դիր-

³ Абшилава Г.В., Соглашение сторон как способ разрешения уголовно-правового спора, Российский следователь-2012, номер 5, с. 21-25.
⁴ Дудина Н.А., Досудебное соглашение о сотрудничестве, понятие и сущность, Вестник Санкт-Петербургского университета МВД России, Выпуск №4 (60) / 2013.
⁵ В.В. Горский, М.В. Горский, Досудебное соглашение о сотрудничестве с позиций обеспечения прав участников уголовного судопроизводства (отдельные проблемы). Досудебное соглашение о сотрудничестве (правовые и криминалистические проблемы): материалы научно-практической конференции (Воронеж, 21-22 декабря 2009 года).– Воронеж: Изд-во Воронеж. гос. ун-та, 2010, Вып. 6. – С. 111-118.

քորոշման համաձայնեցման տեսքով պարունակում են գործարքի տարրեր, պետք է համահունչ լինեն քաղաքացիական օրենսգրքով նախատեսված՝ գործարքներին տրված բնութագրությանը՝ ընդունելով նաև որոշակի տարբերակիչ հատկանիշների առկայությունը, օրինակ՝ համագործակցության համաձայնագրի կողմերի իրավունքները որոշվում են ոչ թե սեփական հայեցողությամբ, այլ՝ նախատեսված են օրենքով, բացառվում է պարտադրել դատախազին կամ մեղադրյալին կնքել համագործակցության համաձայնագիր և այլն:

Եթե որպես համաձայնագրի առարկա ընդունենք նաև մեղադրյալի կողմից պարտավորվող գործողությունները, ապա ընդհանուր կանոնից հետևում է, որ առարկայի շուրջ պայմանավորվածությունը, ըստ էության, գործում է հիմնականում քննիչի ու մեղադրյալի միջև, ավելին՝ այդ պայմանի իրացումն ուղղակիորեն կապված է նաև քննիչի ու մեղադրյալի՝ իրավունքներ ու պարտականություններ առաջացնող գործողությունների հետ: Համաձայնագրի կնքմամբ մեղադրյալը, ըստ էության, «հայտարարում» է համագործակցության առարկայի շուրջ պայմանավորված գործողությունները կատարելու մասին, իսկ դատախազը պարտավորվում է արձանագրել մեղադրյալի կողմից համաձայնագրի պայմանները կատարելու դեպքում դատարանի կողմից օրենքով նախատեսվածից առավել մեղմ պատժի ենթարկվելու կամ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությունը: Հատկանշական է, որ ինքը՝ դատախազը, որպես համաձայնագրի կողմ, բացի վերոհիշյալ արձանագրությունը կազմելուց՝ որևէ արտոնություն կամ քրեական պատասխանատվության որակական ու քանակական չափի որևէ մեղմացում չի կարող «տալ» մեղադրյալին, քանի որ համաձայնագրում նախատեսված գործողությունները մեղադրյալի կողմից կատարվելու դեպքում նույն համաձայնագրում նշված՝ քրեական օրենքի կիրառման գործառույթը պետք է ապահովվի ոչ թե դատախազի, այլ՝ դատարանի կողմից և բացառապես համագործակցության նպատակի նվաճումը հաստատված համարվելու դեպքում: Համաձայնագրի մյուս կողմ հանդիսացող մեղադրյալը, ի տարբերություն դատախազի, ունի անմիջականորեն ծագող պարտավորություններ, որոնք, սակայն, պետք է կատարվեն միջնորդավորված՝ քննիչի միջոցով: Այսինքն՝ մեղադրյալը դատախազին տրված «խոստմամբ» պարտավորվում է հրաժարվել լռելու իրավունքից (nemo tenetur se detegere) և քննիչին հայտնել կամ տրամադրել համաձայնագրով նախատեսված տեղեկությունները, ապացույցները, իսկ քննիչը ենթադրաբար պետք է ստանձնի այդ տեղեկություններն ստանալու և ամրագրելու **պարտականություն**: Դրանից հետևում է, որ համաձայնագրով մեղադրանքի կողմի համար ծագող՝ հիշյալ պարտականությունները պետք է կատարվեն հենց քննիչի կողմից, այսինքն՝ վերջինս պետք է հանդես գա որպես համաձայնագիր-գործարքի կողմ՝ դրանից բխող իրավունքներով ու պարտականություններով:

Վերը նկարագրվածը թույլ է տալիս եզրահանգել, որ, թեև Նախագիծը մեղադրանքի կողմը ներկայացնող սուբյեկտներից համաձայնագրի կողմ է դիտում միայն դատախազին, սակայն վերջինս՝ որպես գործարքի կողմ, գործարքի առարկայի շուրջ անմիջական գործողություններ չի կատարում, մինչդատական վարույթում մեղադրյալի հետ նույն համաձայնագրի շուրջ համագործակցելու դատավարական գործառույթների հիմնական ծավալը բաժին է ընկնում քննիչին, իսկ դատախազն ընդամենը օժտված է նախաքննության ավարտից հետո մեղադրյալի կողմից համաձայնագրով ստանձնած պարտականությունների կատարման պատշաճությունը գնահատելու իրավասությամբ՝ որպես արդյունք՝ ընդունելով Նախագծի 460-րդ հոդվածով նախատեսված որոշումներից որևէ մեկը: Հետևաբար՝ քննիչը ևս պետք է դիտարկվի որպես համաձայնագիր-գործարքի կողմ և ստորագրի դա: Այդ կերպ կապահանվի նաև գործարքներին ներկայացվող քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված պայմանը:

2. **Եթե քննիչը համագործակցության համաձայնագրի կողմ չէ, ապա դատավարական ինքնուրույնությամբ օժտված այդ սուբյեկտը պարտավոր է արդյոք ապահովել համաձայնագրի կողմ ճանաչված մեղադրյալի՝ դատախազի առջև ստանձնած պարտականությունների կատարումը:**

Համագործակցության համաձայնագիր կնքելու փուլում քննիչի մասնակցության ձևա-

չափի կապակցությամբ անհանգստություն են արտահայտել շատ իրավագետներ: Ֆ.Կ. Չիննորովը և այլ տեսաբաններ նշել են, որ համաձայնագրի կազմման գործընթացում քննիչին ներգրավելն աննպատակ գործողություն է, եթե նրան չի ընձեռնվելու համաձայնագրի տեքստը ստորագրելու հնարավորություն:⁶

Ըստ Լ.Գ.Վալուևայի՝ թեև համագործակցության համաձայնագրի սուբյեկտներ են պաշտպանության և մեղադրանքի կողմերը, իսկ քննիչը նույնպես ներկայացնում է մեղադրանքի կողմը, այդուհանդերձ քննիչի մասնակցությունն արտահայտվում է **միջնորդի** տեսքով, ում չի ընձեռնվում համաձայնագիրն ստորագրելու հնարավորություն:⁷

Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին 05.06.2007թ. թիվ 87-ԴՕ օրենքի նախագծում ՌԴ կառավարությունն առաջարկություն էր ներկայացրել՝ փոփոխել նախագիծը և միջնորդությունը լուծելու, համաձայնագիր կնքելու և որոշում ընդունելու դատախազի լիազորությունները փոխանցել քննիչին⁸: Նույն դիրքորոշման կողմնակից և վերոհիշյալ պատճառաբանություններին համակարծիք է նաև Ե.Ի.Սըչեվան:⁹

Դ.Պ.Վելիկիյը անտրամաբանական է համարում համագործակցության վարույթում դատախազին որպես հիմնական դերակատար ճանաչելը՝ դա համարելով մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական լիազորությունների համեմատական սահմանափակման միտմանը հակասող: Ըստ նրա՝ համաձայնա-

գիրը պետք է կնքվի քննիչի կամ քննչական բաժնի պետի կողմից, իսկ դատախազը՝ լուծի քրեական գործը նշված սուբյեկտների կազմած համաձայնագրով դատարան ուղարկելու կամ չուղարկելու հարցը:¹⁰

Լ.Տ. Ույանովայի կարծիքով՝ համագործակցության համաձայնագիր կնքելու համար քննիչի ունեցած տեղեկատվությունը բավականին մեծ կարևորություն ունի, որը միջնորդության քննարկման փուլում քննիչը պետք է ներկայացնի դատախազին՝ վերջինիս կողմից համաձայնագիր կազմելու համար, հետևաբար՝ միայն քննիչը կարող է լիարժեք գնահատական տալ մեղադրյալի կողմից համաձայնագրի պայմանները պահպանելուն և պարտականությունները կատարելուն:¹¹

Ա.Ա. Վասյանայի կարծիքով՝ դատախազը համաձայնագիր կազմելու համար ստիպված է տեղեկատվություն ստանալ գործի նյութերից, որոնք նրան է ներկայացնում քննիչը, հետևաբար՝ ավելի տրամաբանական կլիներ, եթե համաձայնագիրը կազմելու լիազորությունը տրվեր քննչական բաժնի պետին:¹²

Ե.Ա. Բուգլանևան և Լ.Վ.Վինիցկին առաջարկում են մինչդատական համաձայնագիր կազմելու լիազորությունը դնել քննիչի վրա: Ընդ որում՝ նույն առաջարկության համաձայն՝ համաձայնագիրը պետք է համարել կնքված միայն այն դեպքում, եթե հաստատվել է դատախազի կողմից, ինչը կընդունվի որպես այդ համաձայնագրի օրինականության, հիմնավորվածության և նպատակահարմարության շուրջ դատախազի դրական գնահատական:¹³

⁶ Досудебное соглашение о сотрудничестве, проблемы совершенствования, Ф.К.Зиннуров, Г.Б.Мирзоев, Ф.Р.Хисамутдинов, С.Я.Казанцев, Н.Д.Эриашвили, Д.Р. Марданов, А.С.Виноградов, Н.В.Лантух, А.Ч.Хаиров, Ф.Ф.Исмаилов, А.А.Хайдаров, М. Юнити дана, Закон и право, 2014, с. 16.

⁷ Валуева Л.Г. Уголовно-процессуальные аспекты досудебного соглашения о сотрудничестве // Досудебное соглашение о сотрудничестве (правовые и криминалистические проблемы): материалы научно-практической конференции (Воронеж, 21-22 декабря 2009 года). – Воронеж: Изд-во Воронеж. гос. ун-та, 2010, Вып. 6. – С. 92-101.

⁸ Официальный отзыв на проект Федерального закона “О внесении изменений в Уголовный кодекс и в Уголовно-процессуальный кодекс РФ”, вносимый депутатами Государственной Думы В.А Васильевым, А.Е.Лебедевым и В.Н.Плигиным от 16 октября 2007г. N4308-П4 на N АЛ-305 от 5 июня 2007г. //URL:http://www.duma.gov.ru дата обращения: 05.11.2011/.

⁹ Сычева Е.И. Соглашение в Арбитражном процессе и досудебное соглашение о сотрудничестве в уголовном процессе (сравнительно-правовой анализ) //Современная наука.2010. N 2, с. 172-178.

¹⁰ Великий Д.П., Досудебное соглашение о сотрудничестве в российском уголовном процессе //Журнал российского права. 2010. N2// СПС “КонсультантПлюс”.

¹¹ Ульянова Л.Т., Субъекты досудебного соглашения о сотрудничестве //Российский следователь. 2010. N 15 // СПС “КонсультантПлюс”.

¹² Васяев А.А. Сделка с правосудием или сделка с Обвинением? //Современное право. 2010. N 2, СПС “КонсультантПлюс”.

¹³ Буглаева Е.А., Веницкий Л.В. Участие прокурора в ходе предварительного следствия. М.: Юрлитинформ, 2013. С. 168-169.

Նախագծի 455-457-րդ հոդվածներով սահմանվում է համագործակցության միջնորդություն ներկայացնելու, միջնորդությունը լուծելու և համաձայնագիր կնքելու կարգը¹⁴:

Հիշյալ իրավանորմերի վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ մեղադրյալի կողմից համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիր կնքելու միջնորդություն ներկայացվելու դեպքում այդ գործընթացին քննիչի մասնակցությունն արտահայտվում է բացառապես հետևյալում՝ վերջինս կազմում է դրա վերաբերյալ **գրավոր կարծիք, միջնորդությունն ու կարծիքը փոխանցում է դադարախազին**, ինչպես նաև **մասնակցում է** համագործակցության համաձայնագրի կազմմանը:

Համագործակցության վարույթի տրամաբանությունից ենթադրվում է, թե մեղադրյալի՝ համաձայնագրով նախատեսված գործողությունները կատարելու ցանկությունը պետք է հանգեցնի քննիչի՝ հիշյալ գործողությունների կատարումն ապահովելու պարտականությանը: Այլ կերպ ասած՝ եթե մեղադրյալը պարտավորվել էր, օրինակ, նոր ցուցմունքներ տալով մերկացնել հանցակիցներին, առերես հարցաքննությունների ընթացքում հարցադրումներ ուղղելով մյուս հարցվողներին՝ համագործակցության վարույթի նպատակների նվաճման համար անհրաժեշտ ապացույցներ ամրագրելու հիմք ստեղծել, տվյալներ հաղորդել քննչական փորձարարության, իր մասնակցությամբ կատարված խուզարկությունների և այլ քննչական գործողությունների միջոցով, ապա դրանք կազմակերպելու միակ հնարավորությունն ու իրավասությունը պատկանում են քննիչին, ում միջոցով էլ պետք է իրականացվեն, իսկ եթե քննիչն այդ հարցում ցուցաբերի կամայականություն կամ դրանք կազմակերպելը և կազմակերպելու եղանակները դիտարկի որպես խիստ հայեցողական գործառույթ, ապա դա լրջագույնս կասկածի տակ կառնի համագործակցության վարույթի արդյունավետությունը և ընդհանրապես այդ ինստիտուտի կիրառման նպատակահարմարությունը:

Վերոգրյալից բխում է, որ համագործակցության վարույթի շրջանակում՝

ա) քննիչը առնվազն պետք է ունենա համագործակցող մեղադրյալին՝ սրանձնած պարտականությունները կատարելու առաջարկություն ներկայացնելու իրավունք,

բ) համաձայնագիրը կնքելուց հետո մեղադրյալի կողմից սրանձնած պարտականությունները կատարելու պարտաստականություն հայտնելու պահից պետք է ծագի համագործակցող մեղադրյալից համաձայնագրով նախատեսված՝ ակնկալվող ապացույցները սրանալու, ամրագրելու և գործին կցելու քննիչի պարտականությունը:

Նախագծի 6-րդ հոդվածի 12-րդ կետի համաձայն՝ **քննիչը** համարվում է վարույթի հանրային մասնակից, 35-րդ հոդվածով սահմանվում է, որ քրեական վարույթի ընթացքում իր լիազորություններն իրականացնելիս վարույթի հանրային մասնակիցը գործում է ինքնուրույն՝ **հիմնվելով օրենքի**, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև իրավասու անձի **հանձնարարությունների** վրա: Քննիչը պատասխանատու է նախաքննության **համակողմանիության**, բնականոն ընթացքի, քննչական գործողություններն օրենքով սահմանված կարգով ու ժամանակին կատարելու համար:

Վերոհիշյալ իրավանորմերից հետևում է, որ քննիչը նախաքննությունը կազմակերպում է **ինքնուրույն, օրենքով** իր վրա դրված պարտականությունների և հսկող դատախազի կամ քննչական բաժնի պետի կողմից տրված **հանձնարարությունների** հիման վրա: Ընդ որում՝ քննիչի իրավունքներն ու պարտականությունները պետք է սահմանված լինեն օրենքով, լինեն հստակ ու որոշակի, իսկ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ նա իրավասու է կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված է Սահմանադրությամբ կամ օրենքներով:¹⁵

Եթե համաձայնագիրը կնքելուց հետո մեղադրյալի կողմից ստանձնած պարտականությունները կատարելու պարտաստականություն հայտնելու պահից պետք է ծագի համաձայ-

¹⁴ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագիծ, www.parliament.am կայքից:

¹⁵ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունվել է 1995թ. հուլիսի 5-ին՝ 06.12.2015թ. փոփոխություններով հանդերձ:

նագրով նախատեսված՝ համագործակցող մեղադրյալից ակնկալվող ապացույցներն ստանալու, ամրագրելու և գործին կցելու **քննիչի պարտականությունը**, ապա ենթադրվում է, թե նա պետք է կատարի միայն այն գործողությունները, որոնք նախատեսված են համագործակցության համաձայնագրով՝ բացառությամբ դրանցից բխող քննչական և վարութային այլ գործողությունների: Դրանից հետևում է, որ համաձայնագիր կնքելուց հետո քննիչի դատավարական **ինքնուրույնությունը** պետք է որոշակիորեն սահմանափակվի:

Քննիչի դատավարական ինքնուրույնությունը ճիշտ ընկալելու և բնութագրելու համար ներկայացնենք ուսումնասիրության որոշակի արդյունքներ: Քննիչի դատավարական ինքնուրույնության սկզբունքը նրա ընդունած որոշումների հիմնավորվածության ու օրինականության հիմնական երաշխիքն է, քանի որ քննիչին հնարավորություն է տալիս իրեն տրված իրավազորության շրջանակում ձեռք բերված ապացույցների հիման վրա ինքնուրույն ձևավորելու հետևություններ և դատողություններ, ընդ որում՝ որպես կանոն՝ ոչ ոք չի կարող գործով ընդունել առավել օպտիմալ, ճիշտ և ռացիոնալ որոշում, քան տվյալ գործը քննող քննիչը:¹⁶

Ս.Ն. Խարյակովը քննիչի ինքնուրույնությունը դիտարկում է որպես այդ պաշտոնատար անձի կողմից իր հայեցողությամբ ու ներքին համոզմունքով դատավարական գործողություններ կատարելու և որոշումներ ընդունելու ազատություն (*բացառությամբ այն դեպքերի, որոնք վերապահված են դատախազին*), որը հիմնված է օրենքի ու խղճի վրա:¹⁷

Վ.Յու. Ռոկովան և Ա.Վ. Բաբիչը համարում են, որ քննիչի ինքնուրույնությունը նրան հնարավորություն է տալիս ինքնուրույն ընդունելու որոշումներ և սեփական հայեցողությամբ կատարելու բոլոր գործողությունները՝ հարուցել քրեական գործ, ուղղություն տալ քննությանը, կատարել այս կամ այն քննչական և այլ դատավարական գործողությունները՝ առանց նրա գործունեության նկատմամբ հսկողություն կամ

վերահսկողություն իրականացնող մարմինների ու պաշտոնատար անձանց միջամտության: Դրան համակարծիք է նաև Բ.Խ. Բիլյալովիչը:

Այսպիսով՝ քննիչի դատավարական ինքնուրույնությունը ասելով՝ պետք է հասկանալ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով քրեական գործով քննչական ու իր իրավասությանը վերապահված այլ վարութային գործողությունները սեփական նախաձեռնությամբ ու հայեցողությամբ կատարելու իրավունքը և ազատությունը:

Նախագծի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դա չի պարունակում այնպիսի նորմեր, որոնք կսահմանեին համագործակցության վարույթում նախաքննությանն ինքնուրույն ուղղություն տալու քննիչի վերոհիշյալ իրավունքի անարգել իրացման **սահմանափակումներ կամ բացառություններ**, ինչպես նաև համաձայնագրով նախատեսված՝ մեղադրյալի պարտավորությունների կատարումն ապահովելու քննիչի **պարտականություն**: Թեև քննիչը դիտարկվում է որպես քրեական վարույթի հանրային մասնակից՝ դրան հատուկ իրավունքների ու պարտականությունների ամբողջությամբ, այդուհանդերձ՝ Նախագծի 35-րդ հոդվածի ուժով վարույթի հանրային մասնակիցն օժտված է ինքնուրույնությամբ, դատավարական կարգավիճակին հատուկ որպիսի հատկանիշը քննիչի համար ամրագրված է նաև 41-րդ հոդվածով:

Նշված կարգավորումից բխում է, որ քննիչը, օգտվելով իր դատավարական ինքնուրույնությունից, սեփական հայեցողությամբ ու ընտրությամբ քննչական գործողություններ կատարելու իրավունքից, կարող է չկազմակերպել համագործակցության համաձայնագրում նախատեսված գործողությունները և դրանց փոխարեն կատարել այլ քննչական գործողություններ (*հատկապես այն դեպքերում, երբ քննիչը բացասական կարծիք էր արտահայտել միջնորդության կապակցությամբ*), որոնք ուղղված կլինեն համաձայնագրում նշված նպատակին հասնելուն: Գործնական կիրառության դեպքերի ուսումնասիրությունն ու տեսական մտե-

¹⁶ Божьев В.П., Трусов А.И. Процессуальная самостоятельность и независимость следователя: история и современность // Проблемы формирования социалистического правового государства: Труды Академии.– М.; Изд-во Акад. МВД СССР, 1991.– С. 118-124.

¹⁷ Хорьяков С.Н. Процессуальная самостоятельность следователя: дисс. ... канд. юрид. наук / С.Н. Хорьяков. М., 2007. С. 34.

ցումների վերլուծությունը ցույց են տալիս, որ, թեև մեղադրյալն ու նրա պաշտպանը համագործակցության վերաբերյալ համաձայնագիր կնքելում շահագրգռված անձինք են, այդուհանդերձ՝ որպես կանոն՝ համաձայնագիր կնքելու հիմնական նախաձեռնողը հենց քննիչն է (*որոշակի տեղեկություններ ունենալով մեղադրյալի՝ պարզման ենթակա հանգամանքների շուրջ տեղեկատվության տիրապետելու մասին՝ ի վերջո՝ քննիչն է փորձում համոզել նրան համագործակցության եղանակով քրեական վարույթն իրականացնող մարմնին տրամադրել այդ տեղեկատվությունը*):¹⁸ Նույնիսկ գործող քրեադատավարական օրենսդրության շրջանակում ձևավորված պրակտիկան վկայում է, որ մեղադրյալը, որպես կանոն, շահագրգիռ չէ քննությանն օժանդակելու նախաձեռնությունն իր ձեռքում պահելու և քննիչին տրամադրում է այն տեղեկությունները, որոնք վերջինս պահանջում կամ առաջարկում է ներկայացնել, և որոնք կարող են բավարար ճանաչվել նրան՝ որպես նախաքննությանն օժանդակող ճանաչելու համար (*որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք դիտելու նպատակով*): Նախագծով սահմանված համագործակցության վարույթն այդ իմաստով բացառություն չէ, և անհնար է անտեսել համագործակցության արդյունավետությունն առավելապես քննիչի մոտեցումներով, մասնագիտական հմտություններով ու կարողություններով պայմանավորված լինելու հանգամանքը: Այլ է իրավիճակը, երբ քննիչը համաձայն չէ մեղադրյալի հետ համագործակցելու դատախազի մտադրությանը կամ այն հանգամանքները, որոնք պետք է պարզվեն համագործակցության արդյունքով, մտադիր է պարզել ինքնուրույն: Այդպիսի դեպքերում կարող են առաջանալ մի շարք իրավիճակներ, որոնք միանշանակ բացասաբար կանդրադառնան այդ վարույթի վրա: Օրինակ՝

ա) Նախագծի 457-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի հիման վրա համաձայնագրում ընդգրկված՝ համագործակցության բնույթի և համագործակցության նպատակին հասնելու համար մեղադրյալի կողմից պարտավորվող գործողությունների բովանդակությունն ինքնին

քննիչի համար կարող է բավարար չափով տեղեկատվական լինել: Օրինակ՝ քննիչը կարող է ի սկզբանե տեղյակ չլինել համագործակցության ցանկություն հայտնած մեղադրյալի հետ համակատարողների առկայության մասին, մինչդեռ համաձայնագրում համակատարողների մերկացմանն ուղղված մեղադրյալի գործողությունների բնույթը և ուղղությունները կարող են նրան ընձեռել անհրաժեշտ տեղեկատվությունն այլ անձանց և քննչական այլ գործողությունների միջոցով հայտնաբերելու հնարավորություն: Կամ, նախքան համագործակցության համաձայնագիր կազմելը տեղյակ չլինելով հանցագործության չբացահայտված գործիքների առկայության մասին՝ դրանից հետո քննիչը կարող է ինքնուրույն կազմակերպել քննչական տարբեր գործողություններ և հայտնաբերել դրանք՝ դրանց օգտագործմամբ իրացնելով նաև այն նպատակը, որին հասնելու համար նախաձեռնվել էր համագործակցության վարույթը:

բ) Նախագծի 457-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նույն վարույթով մեկից ավելի մեղադրյալների կողմից համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիր կնքելու ցանկություն արտահայտելու դեպքում նրանցից յուրաքանչյուրը ներկայացնում է համագործակցության առանձին միջնորդություն: Մի քանի մեղադրյալի հետ համագործակցության համաձայնագիր կազմելուց հետո մեղադրյալներից մեկի կողմից պարտավորված գործողությունների կատարման ընթացքում քննիչը կարող է ստանալ ու ամրագրել նաև այն ապացույցները, որոնքմ հավանաբար, կարող էին ձեռք բերվել երկրորդ մեղադրյալի հետ համագործակցության շրջանակում՝ այդ կերպ ևս սպառելով վերջինիս հետ համագործակցելու անհրաժեշտությունը:

գ) Քննիչը կարող է ինքնուրույն կազմակերպել քննչական այնպիսի գործողություններ, որոնք ուղղված կլինեն Նախագծի 454-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ համագործակցության նպատակ համարվող ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտմանն ու դրանք կատարած անձանց պատասխանատվության անխուսափելիությունն

¹⁸ Досудебное соглашение о сотрудничестве. Анализ, практика, выводы. Монография, А.Ю.Кирсанов, Юнити-дана: Закон и право, 2012г, с. 44-45.

ապահովելուն: Բնականաբար, եթե քննիչն այդ հնարավորությունն ուներ, կամ դա տեսանելի էր նախքան համաձայնագիր կնքելը, այդ մասին կարող էր շեշտել նաև մեղադրյալի միջնորդության կապակցությամբ կազմվող գրավոր կարծիքում, ինչը դատախազի համար կունենար կողմնորոշիչ նշանակություն, սակայն այլ է իրավիճակը, երբ նա այդ հնարավորությունը տեսնում է համաձայնագիրը կնքելուց հետո: Այսպես. որոշակի տեղեկություններ ունենալով մեղադրյալի կողմից առաջարկվող ապացույցների մասին՝ քննիչը կարող է ինքնուրույն կատարել կոնկրետ գործողություններ և արձանագրել ու քրեական վարույթին ամրակցել այն ապացույցները, որոնք ենթադրաբար պետք է ձեռք բերվեին մեղադրյալի հետ համագործակցության շնորհիվ: Այլ կերպ ասած՝ քննիչը կարող է, օրինակ, բացահայտել ծանր հանցանք կատարած այն անձին, ում բացահայտման նպատակով կազմվել էր համագործակցության համաձայնագիրը, ընդ որում՝ դա անելով նախքան մեղադրյալի կողմից կոնկրետ գործողություններ կատարելը կամ ապացույցներ ներկայացնելը, իսկ դրանից հետո քննիչը, բնականաբար, կհրաժարվի նույն անձին բացահայտելու համար համագործակցող մեղադրյալից կրկնակի կամ թեկուզ լրացուցիչ ապացույցներ ստանալ այն պարզ պատճառով, որ այլևս բացակայում է այդ վարույթի՝ Նախագծով հոշակված նպատակը (*Նախագծի 454-րդ հոդվածի 1-ին մաս*): Ընդ որում՝ համագործակցելու պարտականություն չունեցող և ինքնուրույնությամբ օժտված քննիչին ոչինչ չի կարող խանգարել վարվելու նման կերպ:

Ակնհայտ է, որ այդպիսի մոտեցումն անթույլատրելի է, չի ապահովում համագործակցող մեղադրյալի՝ ստանձնած պարտականությունները կատարելու և օրենքի ուժով հակընդդեմ պարտավորությունների կատարում ակընկալելու երաշխիքները: Օրենսդրական հիշյալ կարգավորման պայմաններում համագործակցության համաձայնագրի արդյունավետությունը կարող է վերոհիշյալ պատճառաբանությամբ վտանգվել բացառապես այն պատճառով, որ քննիչը համաձայնագրի կողմ չէ ու չի ստանձնում **մեղադրյալի պարտավորությունների կատարումն ապահովելու պարտականություն**: Ներկայացված օրինակները մեկ անգամ ևս

փաստում են, որ համագործակցության վարույթի նպատակների իրացման արդյունավետությունն ու հաջողությունը բացառապես պայմանավորված են մեղադրյալի ու քննիչի առարկայական և հստակ փոխգործակցությամբ, ինչպիսի հարաբերությունները պետք է լինեն փոխադարձ իրավունքներ և պարտականություններ առաջացնող, ինչը հնարավոր է միայն քննիչի համար պարտականություններ սահմանելով և վերջինիս համաձայնագրի կողմ ճանաչելու եղանակով:

Այսպիսով՝ վերը ներկայացվածը թույլ է տալիս պնդել, որ համագործակցության վարույթում քննիչը պետք է օրենքի ուժով ստանձնի մեղադրյալի պարտավորությունների կատարումն ապահովելու պարտականություն, ինչը որոշակիորեն պետք է սահմանափակի նրա դատավարական ինքնուրույնությունը: Քննիչը պետք է ճանաչվի համագործակցության համաձայնագրի կողմ՝ դրա շրջանակում որոշակի իրավունքներ ու պարտականություններ ստանձնելու միջոցով համաձայնություն արտահայտելով նաև դատավարական ինքնուրույնության սահմանափակման կապակցությամբ: Այն դեպքում, երբ քննիչը նպատակահարմար չի գտնում դատավարական ինքնուրույնության մի մասից հրաժարվելը և համագործակցության վարույթին անցնելը, նախքան համաձայնագիր կնքելը նա պետք է ունենա համագործակցության անհրաժեշտությունը վիճարկելու հնարավորություն, որի մասին մանրամասն կխոսվի ստորև:

Քննարկվող հարցի համատեքստում անհասկանալի է նաև Նախագծի 457-րդ հոդվածի 5-րդ մասի տրամաբանությունը, որի համաձայն՝ համաձայնագրի օրինակները հանձնվում են միայն մեղադրյալին և պաշտպանին, այսինքն՝ համաձայնագրի տեքստը քննիչին հանձնելը նույնպես պարտադիր չէ: Հատկանշական է, սակայն, որ Նախագծի 458-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվել է համագործակցության մասին մինչդատական համաձայնագիր կազմելուց հետո տվյալ մեղադրյալի վերաբերյալ վարույթն անջատելու և անջատված վարույթի նյութերին համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիրը, մեղադրյալի միջնորդությունը, դրա վերաբերյալ քննիչի կարծիքը, միջնորդությունը բավարարելու մասին դատախազի որոշումը, ինչպես

նաև համագործակցության վերաբերյալ մինչ-դատական համաձայնագիրը կցելու պարտադիր պայման, մինչդեռ Նախագիծը չի սահմանում համաձայնագիր կնքելու միջնորդության քննարկման ընթացքում քրեական վարույթի նյութերը դատախազին փոխանցելու կամ հիշյալ նյութերը դատախազի կողմից քննիչին հանձնելու պայման պարունակող որևէ իրավադրույթ, իրավակարգավորման ինչպիսի եղանակը չի ապահովում նաև Նախագծի 458-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դատավարական պահանջի իրացման գործընթացի պարզությունն ու հստակությունը, թեև դատավարական ընթացակարգից ենթադրվում է, թե այդ փաստաթղթերը նախքան քննիչին հանձնելը գտնվում են հսկող դատախազի մոտ և քրեական վարույթի նյութերին կարող են կցվել միայն նրա կողմից քննիչին փոխանցվելուց հետո:

3. Արդյոք քննիչը պե՞տք է ունենա համագործակցության միջնորդության կապակցությամբ դատախազի կողմից ընդունված որոշման դեմ առարկություն ներկայացնելու և այդ որոշումը վիճարկելու իրավունք:

Համագործակցության վարույթը ենթադրում է մեղադրանքի կողմը ներկայացնող սուբյեկտի՝ դատախազի կողմից, հանրային շահի գերակայության գիտակցմամբ զուգորդված, փոխադարձ ընդունելի, արդարացված ու հիմնավորված զիջում և մեղադրյալի պատասխանատվության մեղմացման հրապարակային «խոստում», իսկ տվյալ հարցում քննիչի ու դատախազի միջև չկարգավորված տարաձայնության դրսևորումները կարող են որակագրկել և հեղինակագրկել այդ վարույթը, հետևաբար՝ դատավարական այդ երկու սուբյեկտի փոխհարաբերությունները հատկապես համագործակցության վարույթի շրջանակում պետք է լինեն կարգավորված ու հավասարակշռված:

Նախագծում համագործակցության վարույթը ընտրված է ոչ թե անգլոսաքսոնական, այլ՝ մայրցամաքային իրավական համակարգի կողմից ընդունված մոդելով: Այդպիսին են, օրի-

նակ, Ռուսաստանի Դաշնության, Ղազախստանի, Բելառուսի կողմից ընդունված տարբերակները: Ընդ որում՝ մայրցամաքային իրավական համակարգին հատուկ է համագործակցության միջնորդության քննարկման արդյունքով դատախազի կողմից ընդունված որոշումների սահմանափակ բողոքարկման կամ բողոքարկման անթույլատրելիության կանոնը: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում համագործակցության միջնորդությունը մերժելու մասին դատախազի որոշումը կարող է բողոքարկվել քննիչի, կասկածյալի, մեղադրյալի և պաշտպանի կողմից (*ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 317.2 հոդվածի 2-րդ մաս*):¹⁹ Միջնորդությունը բավարարելու մասին դատախազի որոշումը քննիչի կողմից բողոքարկելու առիթ հիշյալ օրենսդրությամբ չի կարող լինել, քանի որ դատախազի քննարկմանը կարող են ներկայացվել համագործակցության շուրջ միայն այն միջնորդությունները, որոնք քննիչի կողմից բավարարվել են, այսինքն՝ որոնց մասով քննիչը համաձայնություն էր տվել: Հատկանշական է, որ ՌԴ քրեական դատավարության օրենսդրությամբ համագործակցության վարույթ հարուցելու բացարձակ իրավունքը պատկանում է քննիչին, այսինքն՝ քննիչի կամարտահայտությամբ է որոշվում միջնորդությունն ընթացքավորելու հարցը, և եթե քննիչը միջնորդության կապակցությամբ բացասական կարծիք է արտահայտել, ապա վերջինս դատախազի քննարկմանը նույնիսկ չի ներկայացվում:

Բելառուսի քրեական դատավարության օրենսդրությունը համագործակցության միջնորդությունը մերժելու մասին դատախազի որոշումը դասում է բողոքարկման ոչ ենթակա ակտերի շարքը (*Բելառուսի քրեական դատավարության օրենսգրքի 468.7 հոդվածի 3-րդ մաս*)²⁰:

Մեկ այլ մոտեցում է պարունակում Ղազախստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքը, որի համաձայն՝ դատախազը, ով ստորագրել է համագործակցության համաձայնագիրը, պարտավոր է անհետաձգելիորեն միջոցներ ձեռնարկել՝ կազմա-

¹⁹ Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրք, 18.12.2001թ. N 174-Փ3 (01.01.2017թ. դրությամբ կատարված փոփոխություններով ու լրացումներով հանդերձ):

²⁰ Բելառուսի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրք, 16.07.1999թ., N°295-3 (20.04.2016թ. դրությամբ կատարված փոփոխություններով ու լրացումներով հանդերձ):

կերպելու համաձայնագրի առարկա ճանաչված հանցագործությունների և հանցագործների հայտնաբերումը (*Ղազախստանի քրեական դատավարության օրենսգրքի 621-րդ հոդվածի 1-ին մաս*):²¹ Նույն օրենսդրությամբ՝ դատախազն իրավասու է իր որոշմամբ ցանկացած քրեական գործ վերցնել իր վարույթ և անձամբ իրականացնել քննություն՝ այդ ընթացքում օգտվելով քննիչի լիազորություններից (*հոդված 58, 3-րդ մաս*): Ներկայացված դատավարական նորմերից պարզ է դառնում համագործակցության վարույթի հարուցման շուրջ քննիչի ու դատախազի միջև տարաձայնությունների դեպքում հարցի լուծման հնարավոր եղանակը:

Որպես կանոն՝ համագործակցության համաձայնագիր կարող է կնքվել միայն այն դեպքերում, երբ քրեական վարույթի շրջանակում սպառվել են այն հանգամանքները պարզելու բոլոր հնարավորությունները, որոնք ակնկալվում է լուսաբանել մեղադրյալի հետ համագործակցությամբ: Համագործակցության վարույթին անցնելու հարցում քննիչի ու հսկող դատախազի միջև առաջացող բոլոր տարաձայնությունները պետք է լուծվեն նախքան համագործակցության համաձայնագիր կազմելը, իսկ դրանից հետո կողմերը, այդ թվում՝ քննիչը, պետք է անշեղորեն կատարեն համաձայնագրով ստանձնած իրենց պարտականությունները, ինչպիսի պահանջը պետք է ամրագրված լինի նաև դատավարական օրենսգրքով: Համաձայնագրով նախատեսված պայմաններից շեղվելու և մեղադրանքի կողմի համար առաջացող պարտականությունները կատարելուց հրաժարվելու անթույլատրելիության պահանջը նաև պետք է որպես լրացուցիչ երաշխիք ծառայի համագործակցող մեղադրյալի իրավունքների պաշտպանության տեսանկյունից, քանի որ համագործակցության գնալու վերջինիս որոշման կայացումը զուգորդվում է որոշակի ռիսկերի, անվտանգության և այլ հանգամանքների հետ կապված հարցերի գնահատմամբ, և համաձայնագիր կնքելուց հետո քննիչի կամ դատախազի կամայական ու անորոշ վարքագիծը կարող է նվազեցնել այդ վարույթին ապավինելու հավանականությունը:

Համագործակցության վարույթի հարուցման հարցում դատախազի ու քննիչի միջև անհամաձայնությունները բոլոր դեպքերում ենթակա են քննարկման և լուծման դատախազի՝ որպես քրեական հետապնդումը տնօրինող, և քննիչի՝ որպես դատավարական ինքնուրույնությամբ օժտված սուբյեկտների իրավունքների հավասարակշռության պահպանմամբ: Նախագծի և ՀՀ Սահմանադրության համաձայն՝ հանրային հետապնդման գործերով քրեական հետապնդում հարուցելու բացառիկ իրավասությամբ օժտված դատախազը պետք է ունենա օրենքով սահմանված կարգով տնօրինելու ազատություն: Համագործակցության վարույթի հարուցման փուլում դատախազը պետք է ունենա նաև մեղադրյալի հետ համագործակցելու մասին որոշում ընդունելու իրավունքի «սեփականատերը»: Անհրաժեշտ է սակայն շեշտել, որ համագործակցության միջնորդության քննարկման փուլում դատախազը պետք է առաջնորդվի ոչ միայն կոնկրետ մեղադրյալի հետ համագործակցելու նպատակահարմարության առաջնահերթությամբ, այլև ծանրակշիռ դերակատարություն տա համագործակցության արդյունքով բացահայտման ենթակա հանցագործություններին ու հանցագործներին: Առաջին դեպքում գուցե և քննիչի միջամտությունը տեղին չէ, քանի որ, եթե դատախազը հրաժարվում է մեղադրյալի հետ համագործակցելուց՝ նրա անձի հանրային վտանգավորությունը հաշվի առնելով և նրա պատասխանատվության մեղմացումն անթույլատրելի ճանաչելու պատճառաբանությամբ, ապա դա՝ որպես քրեական հետապնդման իրավազորության բաղկացուցիչ մասը կազմող տարր, պետք է թողնվի դատախազի հայեցողությանը: Սակայն այլ է վիճակը, երբ քննարկման առարկա է դառնում երկրորդ պայմանը: Քննիչը՝ որպես ինքնուրույն և համակողմանի նախաքննություն վարելու պարտականությամբ օժտված վարույթի հանրային մասնակից, շահագրգիռ ու պարտավորված է բացահայտել բոլոր հանցագործությունները և բոլոր հանցագործներին: Գիտակցելով, որ ոչ բոլոր դեպքերում է հնարավոր լինում կատարել վերոգրյալը, օրենսդիրը Նախագծում

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 102 2017

²¹ Ղազախստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի, (26.07.2016թ. դրությամբ կատարված փոփոխություններով ու լրացումներով հանդերձ):

նախատեսել է նաև համագործակցության վարույթը՝ որոշակի զիջումների հաշվին հանցավորության դեմ պայքարում մեղադրյալների աջակցությունը ստանալու համար: Նկարագրվածից ակնհայտ է, որ դատավարական այն սուբյեկտը, որից պետք է հարցնել՝ ունի՞ նա նախաքննության համակողմանիությունը ապահովելու հարցում համագործակցելու ցանկություն հայտնած մեղադրյալի աջակցության կարիքը, թե՞ ոչ՝ քննիչն է:

Նախագծով առաջարկված տարբերակում համագործակցության վարույթի շուրջ դատախազի ու քննիչի միջև անհամաձայնությունը կարող է արտահայտվել հետևյալ երկու իրարություններում՝

ա) քննիչը համագործակցության միջնորդությունը մերժելու դիրքորոշում պարունակող գրավոր կարծիք էր ներկայացրել դատախազին, սակայն վերջինս բավարարել է միջնորդությունը,

բ) քննիչը համագործակցության միջնորդությունը բավարարելու մասին գրավոր կարծիք էր կազմել, սակայն, նախքան դատախազի կողմից համաձայնագիր կնքելը, ի հայտ են եկել այնպիսի նոր հանգամանքներ, որոնք չեզոքացնում են համագործակցելու անհրաժեշտությունը կամ դարձնում են դա առնվազն վաղաժամ (այսինքն՝ քննիչն ստացել է ակնկալվող ապացույցները ձեռք բերելու նոր հնարավորություն կամ քննություն կատարելու նոր ուղղություն կամ ձեռք է բերել հենց ակնկալվող ապացույցները):

Հիշյալ երկու իրավիճակում, եթե քննիչը՝ որպես դատավարական ինքնուրույն սուբյեկտ, համագործակցության անհրաժեշտություն չի զգում, իսկ դատախազը որոշում է ընդունել մեղադրյալի միջնորդությունը բավարարելու մասին (հավանականությունը նվազ է, սակայն տեսականորեն հնարավոր), ապա քննիչը պետք է ունենա, նախքան համաձայնագիր կնքելը, դատախազի որոշման դեմ նրա վերադասին առարկություն ներկայացնելու իրավունք: Ընդ ո-

րում՝ մինչ առարկության կապակցությամբ վերադաս դատախազի կողմից որոշում ընդունելը՝ հսկող դատախազը պետք է գրկված լինի համաձայնագիր կազմելու իրավունքից: Համագործակցության միջնորդությունը բավարարելու մասին դատախազի որոշման դեմ առարկելու իրավունքն իրացնելու արդյունքով վերադաս դատախազի կողմից որոշում ընդունվելուց հետո կամ այդ իրավունքից հրաժարվելու դեպքում քննիչը պետք է ներգրավվի դատախազի կողմից համաձայնագիրը կազմելու գործընթացում որպես կողմ՝ օրենքի ուժով ստանձնելով համաձայնագրի մյուս կողմի՝ մեղադրյալի պարտականությունների կատարումն ապահովելու պարտավորություն:

Այսպիսով, ամփոփելով սույն հոդվածում ներկայացված փաստարկներն ու պատճառաբանությունները՝ կարելի է առաջ քաշել հետևյալ եզրահանգումները.

ա) Քննիչը պետք է ճանաչվի համագործակցության համաձայնագրի կողմ, և նրա վրա պետք է դրվի համաձայնագրից բխող գործողությունները կազմակերպելու պարտականություն:

բ) Նախագծի 457-րդ հոդվածի 5-րդ մասում որպես համաձայնագիրն ստորագրող և դրա օրինակը ստացող սուբյեկտ պետք է նշվի նաև քննիչը:

գ) Նախագծի 458-րդ հոդվածի 2-րդ մասը պետք է պարունակի **հսկող դատախազի կողմից** համագործակցության միջնորդությունը, դրա վերաբերյալ քննիչի կարծիքը, միջնորդությունը բավարարելու մասին որոշումն անջատված վարույթի նյութերին կցելու պայման:

դ) Նախագիծը քննիչին պետք է ընձեռի համագործակցության միջնորդությունը բավարարելու մասին հսկող դատախազի որոշման դեմ վերադաս դատախազին առարկություն ներկայացնելու իրավունք՝ նախքան դրա կապակցությամբ վերադաս դատախազի կողմից որոշում ընդունելն արգելելով համագործակցության համաձայնագիր կնքելը:

ՀԱՅԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ Գլխավոր դատախազության պետական
շահերի պաշտպանության վարչության ավագ դատախազ,
Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի
դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու

**ՀԱԿԱՄՐՅԱԿՅԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ
ՕՐԵՆՍԱԳՐՔՈՎ ԱՐԳԵԼՎԱԾ ԱՐԱՐՔ**

Հայաստանի Հանրապետությունում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված քրեական օրենսգրքով, ի թիվս այլ հակաօրինական առարքների, առաջին անգամ որպես հանցագործություն ամրագրվեց «Հակամրցակցային գործունեությունը»: Հակամրցակցային գործունեության քրեականացման հարցը մշտապես եղել է ակտիվ քննարկումների առարկա, ինչի վերաբերյալ մինչ օրս չի ձևավորվել միասնական մոտեցում¹: Թեև նշված հանցագործությունն արդեն շուրջ 14 տարի տեղ է գտել քրեական օրենսգրքում, սակայն այդ նորմի կիրառությունը դեռևս շատ ցածր է: Ընդ որում՝ պատճառը պայմանավորված է ոչ այնքան տվյալ հանցագործության կատարման դեպքերի բացակայությամբ, որքան նշված հոդվածի ոչ ճիշտ ձևակերպմամբ, իրավակիրառ պրակտիկայի թերի զարգացմամբ, համապատասխան մասնագետների բացակայությամբ և այլ հարցերով: Սույն գիտական հոդվածում կփորձենք վեր հանել նշված խնդիրները, դրանցում ընկած պատճառները, դրանց վերացման ուղղությամբ կներկայացնենք մեր առաջարկները:

ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի համաձայն՝ հակամրցակցային գործունեություն է դիտարկվում ապօրինի մենաշնորհային գներն արհեստական բարձրացնելը կամ իջեցնելը կամ պահպանելը, ինչպես նաև մրցակցությունը սահմանափակելը նախնական համաձայնությամբ կամ համաձայնեցված գործողությունների միջոցով, ինչն ուղղված է շուկան տարածքային սկզբունքով բաժանելուն, այլ տնտեսավարող սուբյեկտների՝ շուկա մուտք գործելուն խոչընդոտելուն, տնտեսավարող այլ սուբյեկտներին

շուկայից դուրս մղելուն, խտրական գներ սահմանելուն կամ պահպանելուն:

Նշված ձևակերպումը ոչ միայն չի համապատասխանում տնտեսական մրցակցության ամենավտանգավոր երկու խախտման՝ գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնությունների բովանդակությանը, այլև պարունակում է ներքին հակասություններ և թերություններ:

ՀՀ Սահմանադրության (2005 թվականի խմբագրությամբ) 33.1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանված էր, որ շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը և անբարեխիղճ մրցակցությունն արգելվում են: 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրվեց, որ շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են:

Ստացվում է, որ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված են հակամրցակցային գործունեության դրսևորումներն, ու դրանց արգելքը, իսկ ՀՀ քրեական օրենսգրքն այս առումով չի համապատասխանեցվել Սահմանադրությանը, քանի որ գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բոլոր դրսևորումների համար չի նախատեսում քրեական պատասխանատվություն: Ինչ վերաբերում է անբարեխիղճ մրցակցության համար քրեական պատասխանատվություն սահմանելուն՝ հարկ է նշել, որ անբարեխիղճ մրցակցությունը, լինելով ավելի նվազ վտանգավորությամբ իրավախախտում, տեղ չի գտնում հակամրցակցային գործունեություն դիտարկվող և քրեական պա-

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 102 2017

¹ Wils W. P. Is Criminalization of EU Competition Law the Answer? // World Competition: Law and Economics Review 2005 Vol 28 No 2 P 117-159.

տասխանատվություն առաջացնող իրավախախտումների շարքում: Այնուամենայնիվ, անբարեխիղճ մրցակցության որոշ, հանրության համար առավել վտանգավոր մի քանի դրսևորումներ տեղ են գտել ՀՀ քրեական օրենսգրքում, ինչպիսիք են, օրինակ, ապրանքային նշանն ապօրինի օգտագործելը (հոդված 197), կեղծ գովազդը (հոդված 198), սպառողներին խաբելը (հոդված 212):

Գրականության մեջ տնտեսական մրցակցությունը բնութագրվում է որպես տնտեսվարող սուբյեկտների միջև մրցություն, երբ նրանց գործունեությամբ արդյունավետորեն սահմանափակվում է շուկայի մասնակցի կամ մասնակիցների կողմից ապրանքային շուկայի ընդհանուր պայմանների վրա միակողմանիորեն ազդելու հնարավորությունը²:

Մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումն այն դեպքն է, երբ ապրանքային շուկայի մեկ մասնակից միակողմանի ազդում է ապրանքային շուկայի ինքնաբերաբար ձևավորված պայմանների վրա՝ այդպիսով խաթարելով տնտեսական մրցակցությունը:

Հակամրցակցային համաձայնությունն այն դեպքն է, երբ մի քանի սուբյեկտ համաձայնությամբ ազդում են ապրանքային շուկայի վերը նկարագրված պայմանների վրա, ինչի դեպքում կրկին խաթարվում է տնտեսական մրցակցությունը:

Նշված իրավախախտումների նկարագրությունը տեղ է գտել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում, որն ընդունվել է 2000 թվականի նոյեմբերի 6-ին: Չարմանալիորեն ՀՀ քրեական օրենսգրքի նախագծման ընթացքում հաշվի չեն առնվել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում արդեն իսկ տեղ գտած հասկացությունները, ինչի հետևանքով միևնույն էությունն ունեցող իրավախախտումները տարբեր օրենքներում իրար չհամապատասխանող ձևակերպումներ են ստացել:

ՀՀ քրեական օրենսգրքով, ըստ էության, որպես գերիշխող դիրքի չարաշահման դրսևորում է դիտարկվում «ապօրինի մենաշնորհային գներն արհեստական բարձրացնելը կամ իջեցնելը կամ պահպանելը»: ՀՀ օրենսդրու-

թյամբ որևէ կերպ չի բացահայտվում, թե որն է մենաշնորհային գինը, որ դեպքում է համարվում ապօրինի, որն է գնի արհեստական բարձրացումը, իջեցումը կամ պահպանումը, ինչով է դա տարբերվում բնականոն գնային փոփոխություններից:

Նման պայմաններում ստացվում է մի իրավիճակ, որ նույնիսկ չարաշահման կոնկրետ հանգամանքներ հայտնաբերվելու դեպքում հնարավոր չի լինի դրանց գնահատական տալ, քանի որ տվյալ բլանկետային նորմի հղումը, ըստ էության, հասցե չունի: Ըստ էության՝ քրեական օրենսգրքի հեղինակները նշված ձևակերպմամբ ենթադրաբար նկատի են ունեցել այն դեպքը, երբ ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք զբաղեցնող տնտեսվարող սուբյեկտն անհիմն (շուկայական իրավիճակի թելադրանքով չպայմանավորված) բարձրացնում, իջեցնում կամ պահպանում է ապրանքի (ծառայության, աշխատանքի) գինը: Սակայն նույնիսկ նշված կերպով ձևակերպված լինելու դեպքում ևս «մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահում» իրավախախտումն ամբողջությամբ իր արտացոլումը չէր ստանա օրենքում: Ինդիքն այն է, որ գնային չարաշահումը հակամրցակցային գործողությունների ընդամենը մեկ դրվագն է: Բացի գնային չարաշահումներից՝ մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահում հնարավոր է թույլ տալ բազմաթիվ այլ եղանակներով, այդ թվում՝ պարտադրել շուկայի մյուս մասնակիցներին, այլ անձանց կատարելու գերիշխող դիրք ունեցող սուբյեկտին ձեռնտու գործողություններ կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություններից, դրսևորել խտրական վարքագիծ՝ շուկայի մասնակիցներին առաջարկելով իրարից կտրուկ տարբերվող պայմաններ, ստեղծել արհեստական պակասորդ, առաջարկել օրենսդրությանը հակասող պայմաններ և այլն:

ՀՀ քրեական օրենսգրքով, ըստ էության, որպես հակամրցակցային համաձայնության դրսևորում է դիտարկվում «մրցակցությունը սահմանափակելը նախնական համաձայնությամբ կամ համաձայնեցված գործողությունների միջոցով»: Նշված դեպքում, թեև ձևակերպումն ավելի ընդհանուր է, սակայն պարունա-

² К. Ю. Тотьев: Конкуреннтное право (правовое регулирование конкуренции). Учебник.– Москва, 2000 г., с. 20.

կում է որոշ բացեր, որոնք կոնկրետ դեպքերում կարող են խոչընդոտ հանդիսանալ հայտնաբերված հակամրցակցային համաձայնություններին գնահատական տալու համար: Օրինակ՝ խոսքն այն դեպքի մասին է, երբ հակամրցակցային համաձայնությունը տեղի է ունենում անգործությամբ, մասնավորապես՝ ապրանքային շուկայում փոքր տնտեսվարող սուբյեկտները շուկայական իրավիճակի թելադրանքով (օրինակ՝ փոխարժեքի տատանում) բարձրացնում են ապրանքի գները, իսկ խոշոր ընկերությունները համաձայնեցված վարքագծով (առանց նախնական համաձայնության) ցուցաբերում են անգործություն՝ գները պահելով նույն ցածր մակարդակի վրա:

«Քրեական օրենսգիրքը նախնական համաձայնությամբ կամ համաձայնեցված գործողությունների միջոցով մրցակցությունը սահմանափակելու դեպքում նախատեսել է հանցավոր արարքի սուբյեկտիվ կողմի հատկանիշ, որի առկայության դեպքում միայն խոսք կլինի հանցագործության մասին: Մասնավորապես՝ ամրագրված է, որ հակամրցակցային գործունեությունը պետք է ուղղված լինի «շուկան տարածքային սկզբունքով բաժանելուն, այլ տնտեսավարող սուբյեկտների՝ շուկա մուտք գործելուն խոչընդոտելուն, տնտեսավարող այլ սուբյեկտներին շուկայից դուրս մղելուն, խտրական գներ սահմանելուն կամ պահպանելուն»:

Ստացվում է, որ նշված 4 պայմանը չլինելու դեպքում հակամրցակցային համաձայնությունը ենթակա չէ քրեական պատասխանատվության:

Այս կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

Նշված պայմաններն առկա ձևակերպմամբ արդեն իսկ խնդրահարույց են: Օրինակ՝ խտրական գներ սահմանելը կամ պահպանելը ոչ մի դեպքում չեն կարող լինել տնտեսվարողի նպատակ, ցանկություն, չի կարող հակամրցակցային համաձայնությունն ուղղված լինել խտրական գներ սահմանելուն, քանի դա զուտ միջոց է նպատակին հասնելու համար:

Նշված պայմաններն սպառիչ կերպով սահմանելով՝ օրենսդիրը բացառել է այլ պայման-

ների դեպքում հակամրցակցային համաձայնությունները հանցագործություն համարելու հնարավորությունը: Օրինակ՝ հակամրցակցային համաձայնությունը կարող է ուղղված լինել ապրանքային շուկան ոչ թե տարածքային, այլ՝ ըստ ապրանքատեսակների, սպառողների շրջանակի բաժանելուն, գերշահույթ ստանալուն, գնումների, մրցույթների, աճուրդների շրջանակներում հաղթող ճանաչվելուն և այլն:

Գիտական և գործնական տեսանկյունից՝ մեծ կարևորություն ունի հակամրցակցային գործունեության սուբյեկտի, ինչպես նաև տվյալ արարքի պատճառով վրա հասնող հետևանքների վերաբերյալ հարցերի պարզումը:

Տնտեսական մրցակցության, այդ թվում՝ ապրանքային շուկայի մասնակիցներն առևտրային գործունեությամբ զբաղվող սուբյեկտներն են, իսկ ֆիզիկական անձինք տնտեսական մրցակցության խաթարման վրա կարողանում են ազդել միջնորդավորված՝ առևտրային կազմակերպությունների միջոցով: Այնուամենայնիվ, քրեական տեսանկյունից՝ մեր կարծիքով՝ պատասխանատվության պետք է ենթակա լինեն հենց ֆիզիկական անձինք, ովքեր իրենց գործողություններով, ընդունած որոշումներով, պայմանավորվածություններով կամ հանցավոր անգործությամբ խաթարում են տնտեսական մրցակցությունը: Տվյալ դեպքում որպես հանցագործության սուբյեկտ կարող են լինել անհատ ձեռնարկատերերը, իրավաբանական անձանց գործադիր-կարգադրիչ գործառույթ իրականացնող անձինք, նրանց ներկայացուցիչները, պաշտոնատար անձինք և այլն³:

Գործող օրենսդրության պայմաններում «Քրեական օրենսգիրքը միակ իրավական ակտն է, որ պատասխանատվություն է նախատեսում ֆիզիկական անձանց հակամրցակցային գործունեության համար: Հարկ է նշել, որ, թեև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով հակամրցակցային դրսևորումների համար սահմանված են խոշոր տուգանքներ իրավախախտ տնտեսվարող սուբյեկտների համար, սակայն, մեր կարծիքով՝ մեղավոր ֆիզիկական անձանց

³ ՀՀ քրեական իրավունք. Հատուկ Մաս: Խմբագրությամբ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ.Ս. Ղազիյանի, Երևան, 2004, էջ 413-414:

քրեական պատասխանատվության ենթարկելու անխուսափելիությունը կարող է մեծապես նպաստել նշված երևույթների կրճատմանը: Պատճառն այն է, որ շատ հաճախ տնտեսվարող սուբյեկտները հակամրցակցային գործունեությամբ ստանում են գերշահույթներ, իսկ նրանց ապօրինի վարքագիծը բացահայտվելու դեպքում տուգանքի չափը շատ դեպքերում կարող է բազմակի անգամ քիչ լինել ապօրինի ստացած շահույթից (եկամտից): Բացի այդ՝ հաշվի առնելով, որ հակամրցակցային գործողությունների բացահայտման և ապացուցման գործընթացը կարող է մեծ ժամանակահատված տևել, նման պայմաններում իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելը կարող է չարդարացված լինել՝ նկատի ունենալով, որ մեղավոր ֆիզիկական անձինք շատ դեպքերում կարող են արդեն չաշխատել տվյալ կազմակերպությունում և վերջինիս հետ առնչություն չունենալ⁴:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում ներդրված չէ նաև հակամրցակցային գործունեության համար ֆիզիկական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտ: Ֆիզիկական անձանց, այդ թվում՝ պետական մարմինների պաշտոնատար անձանց, հակամրցակցային գործունեության համար պատասխանատվության ինստիտուտը ներդրված է և ակտիվորեն կիրառվում է ԱՊՀ և եվրոպական բազմաթիվ երկրներում, ԵԱՏՄ պայմանագրով և այլն: Ներկայումս ՀՀ Ազգային ժողովում է գտնվում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով ևս առաջարկվում է վարչական պատասխանատվություն սահմանել հակամրցակցային գործունեության համար⁵:

Հարկ է նշել, որ հակամրցակցային գործունեության պատճառով ֆիզիկական անձանց համար պատասխանատվություն սահմանելու դեպքում առաջանում է նշված իրավախախտումներն իրենց վտանգավորությամբ դասա-

կարգելու անհրաժեշտություն (վարչական և քրեական պատասխանատվությունները սահմանազատելու նպատակով), ինչի համար որպես չափանիշ կարող է հանդես գալ իրավախախտման պատճառով վրա հասած հետևանքը, ինչը կիրառվում է բազմաթիվ իրավախախտումների դասակարգման նպատակով:

Այդ տեսանկյունից՝ ՀՀ քրեական օրենսգրքի ներկա կարգավորման պայմաններում քննարկվող հանցագործությունը նախատեսված է ձևական հանցակազմով. ավարտված է համարվում հակամրցակցային գործունեությունը կատարելու պահից⁶: Նշված կարգավորմամբ, մեր կարծիքով, չի հիմնավորվում տվյալ հանցագործության հանրային վտանգավորությունը, տնտեսության վրա ունեցած բացասական ազդեցությունը, ուստի անհրաժեշտ է սահմանել նյութական հանցակազմ: Որպես տվյալ իրավախախտման պարտադիր հետևանք՝ առաջարկվում է կիրառել քաղաքացիներին, կազմակերպություններին կամ պետությանը պատճառված խոշոր կամ առանձնապես խոշոր չափով վնասը կամ ապրանքային շուկայի մասնակցի ստացած խոշոր կամ առանձնապես խոշոր չափով շահույթը:

Որպես վնասի և շահույթի խոշոր չափ՝ առաջարկվում է սահմանել համապատասխանաբար նվազագույն աշխատավարձի հազարապատիկից հինգհազարապատիկը, իսկ առանձնապես խոշոր չափ՝ հինգհազարապատիկից ավելին:

Ինչ վերաբերում է տվյալ հանցագործության ծանրացնող հանգամանքներին՝ դրանք, մեր կարծիքով՝ մեծապես բնութագրում են տվյալ հանցագործության առավել վտանգավոր դրսևորումները, էական հակասություններ կամ բացեր չեն պարունակում: Այդ տեսանկյունից՝ առաջարկվում է որպես ծանրացուցիչ հանգամանք դիտարկել նաև առանձնապես խոշոր չափերով վնաս պատճառելը կամ առանձնապես խոշոր չափերով շահույթ ստանալը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ հակամրցակցային գործունեությունը որպես հանցագործու-

⁴ Битва за конкуренцию / Под ред. И.Ю. Артемьева/, М: ФАС России, 2009. С. 25-26.
⁵ Հավանություն է ստացել ՀՀ կառավարության 2016թ. հոկտեմբերի 6-ի արձանագրային որոշմամբ:
⁶ ՀՀ քրեական իրավունք. Հատուկ Մաս: Խմբագրությամբ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ.Ս. Ղազինյանի, Երևան, 2004, էջ 413:

թյուն անհրաժեշտ է սահմանել հետևյալ կերպ՝ նկատի ունենալով, որ նորմը բլանկետային է, որով սահմանված հասկացությունները նախատեսված են «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում.

«1. Մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը կամ հակամրցակցային համաձայնությունը, որի պատճառով քաղաքացիներին, կազմակերպություններին կամ պետությանը պատճառվել է խոշոր վնաս, կամ ապրանքային շուկայի մասնակիցը ստացել է խոշոր չափով շահույթ՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Նույն արարքները, որոնք կատարվել են՝

1) բռնություն գործադրելով կամ գործադրելու սպառնալիքով,

2) ուրիշի գույքը վնասելով կամ ոչնչացնելով կամ ուրիշի գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքով,

3) պաշտոնական դիրքն օգտագործելով,

4) կազմակերպված խմբի կողմից,

5) առանձնապես խոշոր չափով վնաս պատճառելով կամ առանձնապես խոշոր չափով շահույթ ստանալով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

3. Սույն հոդվածում խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև հինգհազարապատիկի չափով գումարը, իսկ առանձնապես խոշոր չափ՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը գերազանցող գումարը»:



ՔԱԳՐԱՏ ՂԱԶԻՆՅԱՆ

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԳՈՒ ԱԼՈՅԱՆ

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ, առաջին դասի խորհրդական, իրավաբանական գիտությունների թեկնածու

ԿԻՔԵՌՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՆՏԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կասկածից վեր է, որ արդի պայմաններում կիբեռհանցավորությունը պետությունների ազգային անվտանգության համար լուրջ սպառնալիք է: Տեղեկատվության ավտոմատ կառավարման և մշակման համակարգերի ներդրման, համակարգչային ծրագրերի միջոցով իրականացվող գործողություններին իրավական նշանակություն հաղորդելու հետևանքով՝ պարարտ հող ստեղծվեց հանցավոր նպատակներով դրանց օգտագործման համար, ինչի պատճառով պետության համար անհրաժեշտություն դարձավ ժամանակին համընթաց ուժեղացնել կիբեռհանցավորության դեմ պայքարի համակարգը՝ ապահովելով արդյունավետ միջոցներով և երաշխիքներով:

Օրինակ՝ Ուկրաինայի Նախագահը 2017 թվականի փետրվարի 3-ին հաստատել է կիբեռսպառնալիքների դեմ ուղղված Ազգային անվտանգության և պաշտպանության խորհրդրդի որոշումը, որը սահմանում է կիբեռանվտանգության անհրաժեշտ մակարդակի ապահովման, կիբեռհանցագործությունների, անօրինական քարոզչության, լրտեսության և կիբեռհարձակումների հայտնաբերման և դրանց դեմ արդյունավետ պայքարի հետևյալ հիմնական ուղղությունները.

- Նախաքննական մարմինների որոշումներով պարտավորեցնել ինտերնետ ծառայություններ մատուցող օպերատորներին մինչև 3 տարի ժամկետով իրականացնել էլեկտրոնային տվյալների պահպանություն.
- Նախաքննական մարմինների հարցումների հիման վրա պարտավորեցնել ինտերնետ ծառայություններ մատուցող օ-

պերատորներին տրամադրել համապատասխան տեղեկատվության հոսքերի վերաբերյալ տեղեկատվություն.

- Դատարանի որոշման հիման վրա արգելափակել վտանգավոր կամ խնդրահարույց բովանդակություն ունեցող տեղեկատվական ռեսուրսները.
- Օրենսդրորեն ամրագրել քրեական գործով վարույթում էլեկտրոնային ապացույցների արդյունավետ օգտագործման դատավարական կարգը.
- Խնդրահարույց վճարային համակարգերի արգելափակման համար ամրագրել անհրաժեշտ իրավական մեխանիզմներ:¹

Վերջին տասը տարիների ընթացքում Facebook, Twitter, Odnoklassniki, Youtube և սոցիալական հաղորդակցման մի շարք այլ համակարգերի ներդրմամբ մարդկանց ցանկությունները, մտքերը, գործողությունները կամ գաղափարները իրական ժամանակում ամբողջ աշխարհով կարելի է տարածել ընդամենը կոճակի մեկ հպումով: Այն ժամանակ, երբ համացանցը կամ դրա միջոցով կենսագործվող սոցիալական հաղորդակցման տարբեր համակարգերը որոշ մարդկանց ձեռքում արժեքավոր հարթակ են սեփական մտքերը և գաղափարները փոխանցելու համար, այլոց ձեռքին դա դարձել է վտանգավոր գործիք հանցավոր նպատակների իրականացման համար:²

Այս տեսանկյունից՝ հատկապես ուշագրավ է ՀՀ Նախագահի մրցանակակիր, «Կասպերսկու լաբորատորիայի» հիմնադիր Եվգենի Կասպերսկու կողմից արված դիտարկումներն առ

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 102 2017

¹ <http://www.lexology.com/library/detail.aspx?g=f223f03e-047e-4fd6-a0eb-3a11442fb519>

² <https://www.justice.gov/usao/priority-areas/cyber-crime/internet-stalking>:

այն, որ համակարգչային տեխնոլոգիաներ ստեղծելիս ի սկզբանե ուշադրություն չի դարձվել դրանց բավարար չափով անվտանգության ապահովմանը: Այդ պատճառով էլ հարյուր հազարավոր կիբեռհանցագործներ գրոհում են համակարգիչները՝ փչացնելով մեր կյանքը: Եթե 20 տարի առաջ հակավիրուսային համակարգերը համակարգիչներում դրվում էին «համենայն դեպս», և համակարգչային անվտանգությունն առանձնապես չէր կարևորվում, այժմ այդ մասնագիտությունը լուսանցքից եկել է կենտրոն:³

Կիբեռհանցավորությունն աչքի է ընկնում իր ներհատուկ իրավական հատկանիշներով, քանի որ ունի անդրազգային կազմակերպված հանցավորության բնույթ,⁴ և կատարման, շարունակման ու ավարտման վայրերը կարող են ընդգրկել անգամ մի քանի պետություն:⁵ Հանցավորության այս տեսակի դեմ արդյունավետ պայքարի համար մշակվել են մի շարք միջազգային-իրավական գործիքներ,⁶ որոնց թվում առանձնանում է Եվրոպայի խորհրդի «Կիբեռհանցագործությունների մասին» կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա)⁷, ըստ որի՝ կիբեռհանցագործությունները, որպես կանոն, դասակարգվում են 4 խմբի.

1. Առաջին խումբն են դասվում համակարգչային համակարգերի և համակարգչային տեղեկատվության գաղտնիության, ամբողջականության և հասանելիության դեմ ուղղված հանցագործությունները:

2. Երկրորդ խմբում են համակարգչային տեխնիկայի օգտագործմանն առնչվող հանցագործությունները, որոնց թիվն են դասվում համակարգչային տեխնոլոգիաների օգտագործմամբ կատարված կեղծիքն ու խարդախությունը: Ընդ որում՝ հարկ է նկատի ունենալ, որ կեղծիքի հիմնական թիրախը տեղեկատվության նույնականության խափանումն է՝ տար-

բեր նպատակներով որպես նույնական դիտարկելու կամ որպես այդպիսին օգտագործելու դիտավորությամբ:

3. Երրորդ խմբում են ընդգրկված մանկական պոռնոգրաֆիայի թողարկմանը, համակարգչային համակարգի միջոցով դրա տարածմանը, օգտագործմանը տրամադրելու և (կամ) դրա առաջարկի, ինչպես նաև՝ համակարգչի հիշողության մեջ մանկական պոռնոգրաֆիայի պահպանմանն առնչվող հանցագործությունները:

4. Չորրորդ խմբում են հեղինակային և հարակից իրավունքների խախտմանն առնչվող հանցագործությունները: Բացի այդ՝ հարկ է նշել, որ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության ուժով կիբեռհանցագործությունների թիվն է դասվել նաև ռասայական կամ այլ բնույթի բռնի գործողություններին դրդող, ազգային, կրոնական կամ էթնիկական պատկանելության վրա հիմնված առանձին անձի կամ անձանց խմբի նկատմամբ անհանդուրժողականություն կամ խտրականություն առաջացնող կամ քարոզող տեղեկատվության տարածումը:

Իրավաբանական գրականության մեջ տեսակետ է արտահայտվել առ այն, որ կիբեռհանցագործությունների թվում լայն իմաստով պետք է դասել բոլոր այն հանցագործությունները, որոնք ուղղված են քրեաիրավական պաշտպանության տակ գտնվող բազմատեսակ հասարակական հարաբերությունների դեմ և կարող են զուգորդվել համակարգչի կամ համակարգչային տարբեր սարքավորումների օգտագործմամբ, ինչպես օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածով նախատեսված՝ հեղինակային կամ հարակից իրավունքները խախտելը, ՀՀ քրեական օրենսգրքի 307-րդ հոդվածով նախատեսված՝ պետական գաղտնիք պարունակող փաստաթղթերի կամ համա-

³ <http://www.azg.am/AM/2015112009>:

⁴ Այդ մասին արձանագրվել է 2005 թվականի ՄԱԿ-ի 11-րդ նստաշրջանի արդյունքներով կազմված արձանագրության մեջ:

⁵ <http://www.jnews.am/cybercrime-in-Armenia%20>:

⁶ Կիբեռհանցագործություններ հասկացությունը սահմանվել է նաև 2001 թվականի հունիսի 1-ին Մինսկում ստորագրված «Համակարգչային տեղեկատվության ոլորտում հանցագործությունների դեմ պայքարում ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության մասին» միջպետական համաձայնագրով, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2002 թվականի փետրվարի 20-ին:

⁷ Ստորագրվել է 2001 թվականի նոյեմբերի 23-ին Բուդապեշտում, իսկ ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2006 թվականի մարտի 21-ին:

կարգչային տեղեկատվության հետ վարվելու կանոնները խախտելը և այլն:⁸

Մեր կարծիքով՝ նմանօրինակ մոտեցմամբ արհեստականորեն ընդլայնվում է կիբեռհանցագործությունների շրջանակը, քանի որ նույնիսկ այն դեպքում, երբ կոնկրետ հանցագործությունը կատարվում է համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ, որտեղ ընդամենը միջոց է հանցավորի նպատակների իրականացման համար, դա բնավ չի կարող պատճառ դառնալ հանցակազմի օբյեկտի փոփոխության համար:

Համակարգչային տեխնոլոգիաների բուռն զարգացումն իր հետ բերում է նաև համարժեք իրավական գործիքակազմի սահմանման անհրաժեշտություն, որից անմասն չեն նաև քրեաիրավական հարաբերությունները: Այդ համակարգը պետք է ամբողջությամբ արտացոլի ժամանակի պահանջները, որպիսի պայմաններում իրավակիրառական պրակտիկայի և ներպետական իրավական կարգավորման կառուցակարգերի համալիր համադրմամբ և վերլուծությամբ, այդտեղ առկա հնարավոր բացերի բացահայտմամբ, ինչպես նաև առաջադրված նոր մարտահրավերների հաշվառմամբ օրենսդիրը պետք է որդեգրի հանցակազմերի հատկանիշների և սուբյեկտային կազմի համարժեք իրավական կարգավորման և դրա հետևողական զարգացման մոտեցում:

Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով Կոնվենցիան, ի թիվս այլ հարցերի՝ ստանձնել է բնագավառի իրավական կարգավորման նկատմամբ կիրառվող մի խումբ պարտավորություններ, ինչպես օրինակ՝ ազգային օրենսդրությամբ քրեականացնել կոնվենցիայով սահմանված արարքները, կոնվենցիայի 2-11-րդ հոդվածներով նշված հանցագործությունների դեմ պայքարելու ընթացքում երաշխավորել մարդու իրավունքների և ազատությունների համապատասխան պաշտպանությունը՝ ներառյալ այն իրավունքները, որոնք բխում են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով, Քաղաքացիական և քա-

ղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով և մարդու իրավունքների մյուս կիրառելի միջազգային փաստաթղթերով ստանձնած պարտավորություններից:⁹

Կիբեռհանցագործություններին ՀՀ քրեական օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգրք) նվիրված է «Համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները» վերտառությամբ 24-րդ գլուխը, որտեղ նախատեսված են թվով 7 հանցակազմեր: Բացի այդ՝ Օրենսգրքում առկա են կիբեռհանցագործությունների այլ հանցակազմեր ևս: Մասնավորապես՝ Օրենսգրքի 181-րդ հոդվածով, որպես առանձին հանցակազմ, նախատեսված է համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարվող հափշտակությունը, իսկ 263-րդ հոդվածի 2-րդ մասով՝ համակարգչային համակարգի միջոցով մանկական պոռնոգրաֆիա ներկայացնելը կամ համակարգչային համակարգում կամ համակարգչային տվյալների պահպանման համակարգում մանկական պոռնոգրաֆիա պահպանելը:

Հիշյալ իրավական նորմերի վերլուծությունը վկայում է, որ որոշ դեպքերում Օրենսգրքով սահմանված իրավական կարգավորումն իր բովանդակային անհստակությամբ կամ ոչ լիարժեքությամբ չի ապահովում խնդրո առարկա հասարակական հարաբերությունների քրեաիրավական արդյունավետ պաշտպանությունը: Օրինակ՝ Օրենսգրքի 181-րդ հոդվածով օրենսդիրը որպես առանձին հանցագործություն է դիտարկում համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարված հափշտակությունը: Հիշյալ հոդվածը, սակայն, չի մանրամասնում հափշտակության տեսակները, ինչն իրավակիրառական պրակտիկայում, կարծում ենք, կարող է խնդրահարույց իրավիճակ ստեղծել նորմի իրավական որոշակիության և լիարժեք իրացման տեսանկյունից, քանի որ կատարված հափշտակության առավել ճշգրիտ որակումն ապահովելու համար իրավակիրառողի կողմից պետք է հաշվի առնվեն դրանցից յուրաքանչյուրին բնորոշ իրավական բնութագրիչները: Կամ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ

⁸ Տե՛ս Պալյան Հ.Ա. «Համակարգչային հանցավորության դեմ պայքարի հիմնախնդիրները».- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012.- էջ 18:

⁹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2005 թվականի հոկտեմբերի 4-ի ՍԴՈ-609 որոշումը:

հողվածը պատասխանատվություն է սահմանում՝ վնասաբեր ծրագրերով կրիչներ տարածելու համար, մինչդեռ արդի պայմաններում հնարավոր է վնասաբեր ծրագրեր տարածել նաև համացանցով, որպիսի հանգամանքը, ինքնին, խնդրահարույց է նորմի բովանդակային լիարժեքության տեսանկյունից:

Հարկ է նշել, որ ներկայումս քննարկման և ամփոփման փուլում գտնվող՝ ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ), ըստ էության, փորձ է կատարվում որակապես նոր մակարդակով կարգավորել և սահմանել կիբեռհանցագործությունների տեսակները: Օրինակ՝ ի տարբերություն Օրենսգրքի՝ Նախագծով առաջարկվում է գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումները, համակարգերը կամ այլ միջոցները վնասելու, ոչնչացնելու կամ շրջանցելու նպատակով տեխնիկական միջոցների, հատուկ հարմարեցված սարքավորումների կամ այլ առարկաների կամ միջոցների գործադրումը դիտարկել որպես հափշտակության հանցակազմերի որակյալ հատկանիշ՝ դրանով իսկ շեշտադրելով արարքի հանրային վտանգավորության աստիճանը:

Բացի այդ՝ ի տարբերության գործող իրավակարգավորման՝ Նախագծով բովանդակային առումով հստակեցվել է «Համակարգչային տեղեկատվությունը փոփոխելը» վերտառությամբ հանցակազմը, որը զերծ է մնացել կարգավորման առարկայից չբխող հատկանիշների ամրագրումից, ինչն իրավակիրառական պրակտիկայում ստեղծում էր բավականին խնդրահարույց իրավիճակ: Կամ՝ «Համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալը» վերտառությամբ հանցակազմում հստակեցվել է գործողությունների շղթան, ամրագրվել են հանցագործության անմիջական թիրախ հանդիսացող տեղեկատվության հատկանիշները, և կոնկրետացվել է դրա հավաքման նպատակը:

Ազգային օրենսդրության զարգացման հետ մեկտեղ՝ հրատապ է նաև միջազգային համա-

գործակցության ակտիվացման խնդիրը, մասնավորապես՝ միջազգային-իրավական կարգավորման առավել գործուն մեխանիզմների ներդրումը՝ նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ ժամանակակից պայմաններում կիբեռհանցագործությունների դեմ պայքարի միջոցների ինչպես զգալի մասը, այնպես էլ միջազգային բնույթի մյուս հանցագործությունները ենթակա են առանձին վերցրած պետությունների ներքին իրավասությանը:¹⁰

Դատախազների միջազգային ասոցիացիայի 22-րդ համաժողովին ունեցած ելույթում ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը, շեշտադրելով այս ոլորտում առկա խնդիրները, մասնավորապես՝ նշել է. «Սրանք առանցքային խնդիրներ են 21-րդ դարում, երբ հանցավորությունն այլևս սահմաններ չի ճանաչում, երբ, օրինակ՝ հանցագործությունների միջոցով ստացած եկամուտները բանկային օպերացիաների միջոցով փոխանցվում են այլ երկրներ, երբ երկրաչափական պրոգրեսիայով աճում է համացանցի միջոցով իրականացվող հանցագործությունների քանակը: Այս երևույթներն ունեն գլոբալ բնույթ և ներառում են անդրազգային տարրեր, ինչն առանցքային է դարձնում կիբեռհանցագործությունների հակազդման արդյունավետ միջոցների կիրառման առումով միջազգային համագործակցությունը»:¹¹

Ելնելով պետությունների համար կիբեռհանցավորության առաջադրած և ժամանակի ընթացքում էլ ավելի ուժգնացող մարտահրավերներից՝ կարծում ենք, որ կիբեռհանցավորության դեմ պայքարում միջազգային համագործակցության տեսանկյունից առաջնային նշանակություն է ձեռք բերում միջպետական մակարդակով տեղեկատվության փոխանակմանն առնչվող խնդիրների լուծումը: Այս տեսանկյունից՝ հատկապես հետաքրքրություն է ներկայացնում Կոնվենցիայի 32-րդ հոդվածով ամրագրված նորմը, ըստ որի՝ Կողմն առանց մյուս Կողմի թույլտվության կարող է.

ա) մուտք գործել հրապարակավ մատչելի (բաց աղբյուր), պահպանվող համակարգչային

¹⁰ Տե՛ս Գոյունյան Ա.Ս. «Տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը կարող է վտանգել նաև պետության ազգային անվտանգությունը».- Եր.: 2013թ.:

<http://www.pastinfo.am/hy/news/2013/01/23 /334086>

¹¹ [http://www.prosecutor.am/am/mn/6913/:](http://www.prosecutor.am/am/mn/6913/)

տվյալների մեջ՝ առանց հաշվի առնելու տվյալների՝ աշխարհագրական տեսանկյունից գտնվելու վայրը, կամ՝

բ) իր տարածքում գտնվող համակարգչային համակարգի միջոցով մտնել կամ ստանալ մյուս Կողմի տարածքում գտնվող՝ պահպանվող համակարգչային տվյալներ, եթե Կողմն ստացել է օրինական և կամավոր համաձայնություն այն անձի կողմից, ով համակարգչային համակարգի միջոցով մյուս Կողմին տվյալներ հայտնելու օրինական լիազորություն ունի:

Չնայած այն հանգամանքին, որ հիշյալ իրավանորմը պետք է կիրառվի քրեական գործով նախաքննական կամ դատաքննական վարույթներով հատուկ դեպքերում և Կոնվենցիայի 14-րդ հոդվածով ամրագրված շրջանակներում, իսկ Կոնվենցիայի կողմերը պետք է ստեղծեն փոխադարձ վստահության հատուկ մթնո-

լորտ և դրա շրջանակներում ապահովեն Կոնվենցիայի 15-րդ հոդվածով ամրագրված՝ օրինականության և իրավունքի գերակայության երաշխիքների անվերապահ իրացումը,¹² այդուհանդերձ՝ կարծում ենք, որ այս նորմի կիրառման շրջանակներում անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության տեսանկյունից առանձնակի կարևորություն են ներկայացնում Կոնվենցիայից բխող երաշխիքների ներպետական մակարդակով սահմանումը և համապատասխան ընթացակարգերի կանոնակարգումը, ինչը հնարավորություն կտա Կողմերի ներքին իրավասության ներքո հստակ կանոնակարգելու այդ գործընթացի բոլոր փուլերը և ապահովելու ամրագրված երաշխիքների արդյունավետ կենսագործումն իրավակիրառական պրակտիկայում:



¹² St' u T-CY Guidances Notes, Adopted by the 8th, 9th and 12th Plenary, Strasbourg, France, 8 December 2014: www.coe.int/cybercrime:

ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱԼ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, իրավաբանական գիտությունների թեկնածու

ԱՐՓԻՆԵ ՍԱՐԳՍՅԱԼ

ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության առաջատար մասնագետ, ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ

ԱՉԱՏԱԶՐԿՄԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՀԱՅԱԴՈՒԼԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱՎԱՐԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հացադուլն անձի կողմից գիտակցաբար և սեփական կամքով ցանկացած տեսակի սննդամթերքից և (կամ) հեղուկներից որոշակի ժամկետով կամ անժամկետ հրաժարվելն է՝ որպես բողոքի նշան: Գործնականում հացադուլն օգտագործվում է որպես «գործիք»՝ լաված լինելու իրավունքի իրացման նպատակով և լայն տարածում է գտել հատկապես ազատագրկման վայրերում պահվող անձանց շրջանում: Ազատագրկման վայրերում պահվող անձինք գտնվում են պետության պաշտպանության ներքո. պետությանն են վստահված նրանց առողջությունն ու կյանքը: Ուստի չենք սխալվի, եթե նշենք, որ նշված անձանց կողմից հացադուլի իրականացումը յուրօրինակ մարտահրավեր է՝ ուղղված պետության կողմից հացադուլ իրականացնող անձանց տրված իրավունքների և պաշտպանության ծավալի վերագնահատմանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ազատագրկման վայրերում գտնվող անձինք խոցելի են, միջազգային հանրության շրջանում բարձրացվում են մի շարք հարցեր, որոնք, մի կողմից, վերաբերում են հացադուլ իրականացնող անձի իրավունքներին, իսկ մյուս կողմից՝ հացադուլի իրականացման դեպքում պետության ստանձնած պոզիտիվ և նեգատիվ պարտավորություններին. **ինչ իրավունքներ ունի հացադուլ իրականացնող անձը, արդյոք անհրաժեշտ է հացադուլ իրականացնող անձի իրավունքներն առանձին կարգավորման առարկա դարձնել, ինչպիսի՞ պարտականություններ ունի պետությունը հացադուլ իրականացնող անձի նկատմամբ, ո՞ր դեպքերում պետությունը կարող է և պարտավոր է անձին տրամադրել բժշկական օգնություն և սպասարկում, պետությունը կարող է առանց անձի հա-**

մաձայնության իրականացնել արհեստական սնուցում կամ հարկադիր կերակրում, պետությունը կարող է միջամտել և դադարեցնել հացադուլի իրականացումը՝ իր կողմից ստանձնած պարտականությունների երաշխավորման նպատակով: Նշյալներն այն հույժ կարևոր հարցերն են, որոնց մենք կանդրադառնանք սույն աշխատանքի շրջանակներում:

ՀԱՅԱԴՈՒԼ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԻ ԿԱՄ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Հացադուլ իրականացնող անձանց և նրանց պաշտպանությանն ուղղակի անդրադարձ է կատարվում միայն որոշ միջազգային իրավական ակտերում: Այդուհանդերձ՝ հարկ է փաստել, որ մարդու իրավունքների պաշտպանության կոնվենցիոն մեխանիզմների գործունեությունն աջակցում է հացադուլ իրականացնող անձանց հիմնախնդիրների վերհանմանը, ինչպես նաև նրանց իրավունքների պաշտպանությանն ուղղված գործուն կառուցակարգերի ներդրմանը:

Իսկ ինչո՞վ են կարևորվում հացադուլ իրականացնող անձանց և նրանց պաշտպանությանն առնչվող կարգավորումները: Հարցին պատասխանելու համար բավական է միայն նշել, որ հացադուլի իրականացման գործընթացում պետության ցանկացած միջամտությունը կարող է բարձրացնել մարդու, տվյալ դեպքում՝ հացադուլ իրականացնող անձի իրավունքների հնարավոր խախտման հարցեր: Հատկանշական է, որ գործնականում պետությունները նման միջամտությունը հիմնավորում են բացառապես անձի կյանքին և առողջությանն սպառնացող հնարավոր վտանգի առկայությամբ¹, քանի որ

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 102 2017

¹ Տե՛ս, օրինակ՝ Nevmerzhitsky v. Ukraine (գանգառ թիվ 54825/00, 2005 թվականի ապրիլի 5-ի վճիռ):

հացադուլի կլինիկական ընթացքն ունենում է հետևյալ պատկերը. 3-րդ օրվանից հետո անձի՝ սովի զգացումն անցնում է, մինչև 15-րդ օրն առաջանում են թուլություն, հոգնածություն, գլխապտույտ, դող, մտավոր գործունեության դանդաղում, ծարավի զգացողության նվազում կամ կորուստ, բրադիկարդիա², հիպոտենզիա³, օրթոստազ⁴, մինչև 31-րդ օրը նկատվում են շլաշություն, երկտեսություն և ավարտվում ակնաշարժիչի կաթվածով, մինչև 40-րդ օրը՝ քնկոտություն, ճանաչողական բնույթի խախտումներ, կենտրոնացման և հիշողության կորուստ, ընդարմացում, գիտակցված որոշում կայացնելու ունակության բացակայություն, հետագայում առաջանում են տարբեր հյուսվածքների և օրգանների արնագեղում, լսողության կորուստ, Չեյն-Սթոքսի շնչառություն⁵, սրտի կաթված:

Պետության կողմից կատարվող միջամտությունները և դրանցով հետապնդվող նպատակների իրավաչափությունը գնահատելու համար անհրաժեշտ է կշեռքի մյուս նժարին դնել հացադուլ իրականացնող անձանց այն իրավունքները, որոնց խախտման ռիսկը պետությունը կարող է կրել միջամտության պատճառով:

Կյանքի իրավունք: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպա-

նության համակարգը նշանակություն չէր ունենա, եթե դրանում չընդգծվեր մարդու բնական և անօտարելի համարվող կյանքի իրավունքը: Այս իրավունքն արտացոլված է ինչպես Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (այսուհետ՝ Հռչակագիր)⁶ 3-րդ հոդվածում⁷, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի (այսուհետ՝ ՔՔԻՄԴ)⁸ 6-րդ հոդվածում⁹, այնպես էլ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ)¹⁰ 2-րդ հոդվածում¹¹:

Միջազգային փաստաթղթերով որդեգրված գաղափարախոսությանը համահունչ՝ Հայաստանի Հանրապետությունը Սահմանադրությամբ նույնպես ճանաչել է մարդու կյանքի իրավունքը: Սահմանադրության 24-րդ հոդվածի համաձայն՝ **յուրաքանչյուր ոք** ունի կյանքի իրավունք: Սահմանադրությամբ կյանքի իրավունքի ճանաչումը ենթադրում է պետության կողմից իրավական-կազմակերպական այնպիսի միջոցառումների ձեռնարկում, որոնք ի զորու են երաշխավորելու յուրաքանչյուր անձի կյանքի իրավունքը: Այլ կերպ ասած՝ պետությունն ստանձնում է պոզիտիվ պարտավորություն՝ ապահովելու անձի կյանքը, ինչպես նաև նեգատիվ պարտավորություն՝ ձեռնպահ մնա-

² Բրադիկարդիան (հուն. bradi – դանդաղ, cardia – սիրտ) սրտի ռիթմի խանգարման երևույթ է, որի դեպքում սրտի կծկումների հաճախությունը չափափակ մարդու դեպքում ընդհանուր առմամբ 55-ից պակաս է (տրմը՝ 70-75 կծկում): Պայմանավորված է սրտամկանի ավտոնոմ գործունեության խախտմամբ: Հիվանդության առաջացման պատճառ կարող են հանդիսանալ հիպոթիրեոզը, թերսնումը, դեղնախտը, նիկոտինային թունավորումները և այլն:

³ Զարկերակային հիպոտենզիան կամ հիպոտոնիան (հուն. hypo – ցածր, tensio – ճնշում) անոթներում, սնամեջ օրգաններում, օրգանիզմի խոռոչներում հիդրոստատիկ ճնշման անկումն է: Անոթի տեսակից կախված՝ կարող է լինել զարկերակային՝ հանգեցնելով ճնշման անկմանը զարկերակներում, երակային՝ հանգեցնելով ճնշման անկմանը երակներում, ներզանգային՝ ուղեղ ողնուղեղային հեղուկի նվազած սեկրեցիայով պայմանավորված:

⁴ Օրթոստազը (հուն. orthos – ուղիղ, statos – վիճակ) հեմոդինամիկայի լոկալ կամ ամբողջական փոփոխություն է՝ արյան քանակի հավասարաչափ բաշխում իրականացնելու ռեակցիաների անբավարար քանակով պայմանավորված: Ի հայտ է գալիս երկարատև հորիզոնական դիրքից ուղղահայաց դիրքի անցնելիս կամ մի շարք այլ դեպքերում, օրինակ՝ գլխապտույտ, թուլություն, գիտակցության մթազնում, կոլապս, ուշագնացություն:

⁵ Չեյն-Սթոքսի կամ պարբերական շնչառության դեպքում մակերեսային և հազվադեպ իրականացվող շնչառական շարժումները ձեռք են բերում ավելի խոր և հաճախակի բնույթ և 5-7 ներշնչման ակտից հետո նորից թուլանում ու դանդաղում են, ինչից հետո առաջանում է շնչառության ժամանակավոր կանգ, ընդ որում՝ նույն շրջանն անընդհատ կրկնվում է:

⁶ Տե՛ս Universal Declaration of Human Rights (adopted by the United Nations General Assembly on 10 December 1948 at the Palais de Chaillot in Paris, France).

⁷ Յուրաքանչյուր մարդ ունի կյանքի, ազատության, անձի անձեռնմխելիության իրավունք:

⁸ Տե՛ս International Covenant on Civil and Political Rights (adopted and opened for signature, ratification and accession by General Assembly resolution 2200A (XXI) of 16 December 1966).

⁹ Ապրելու իրավունքը յուրաքանչյուր մարդու անկապտելի իրավունքն է, վերջինս պահպանվում է օրենքով, և ոչ ոք չի կարելի քմահաճ ձևով զրկել կյանքից:

¹⁰ Տե՛ս Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms (ROME 4 November 1950).

¹¹ Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով:

լու անպիսի գործողությունների կատարումից, որոնք անձին կարող են զրկել կյանքից:

Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք: Անձի անձեռնմխելիության իրավունքը բացառում է որևէ արտաքին միջամտություն մարդու անհատական կենսագործունեությանը, ապահովում է ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիություն: Լայն իմաստով՝ անձնական անձեռնմխելիությունը մարդու ֆիզիկական (կյանք, առողջություն) և բարոյահոգևոր (այսինքն՝ պատիվ, արժանապատվություն) անձեռնմխելիությունն է, ինչի շնորհիվ բոլորը պարտավոր են չմիջամտել մարդու անհատական կենսագործունեությանը¹²:

Սահմանադրության 25-րդ հոդվածը, ճանաչելով այս իրավունքը, ամրագրում է, որ **յուրաքանչյուր ոք** ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք:

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի և պատժի արգելք: Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի արգելքը ժողովրդավարական հասարակության հիմնարար արժեքներից մեկն է: Դա բացարձակ է, և դրանից շեղում չի թուլատրվում՝ անձի վարքագծից անկախ: Jus cogens համարվող այս արգելքն ամրագրված է Հռչակագրի 5-րդ հոդվածում¹³, ՔՔԻՄԴ-ի 7-րդ հոդվածում¹⁴, Միավորված ազգերի կազմակերպության Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ կոնվենցիայում¹⁵, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի ենթարկվելուց բոլոր անձանց պաշտպանության մասին հռչակագրում¹⁶,

ինչպես նաև ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածում¹⁷: Միաժամանակ՝ ՔՔԻՄԴ-ի 10-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ազատությունից զրկված բոլոր անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և մարդկային անհատին հատուկ արժանապատվության հարգման իրավունք:

Քննարկվող արգելքը շոշափում է նաև «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրին¹⁸ իր 12-րդ հոդվածի շրջանակներում, որի համաձայն՝ նշյալ դաշնագրին մասնակցող պետությունները ճանաչում են յուրաքանչյուր մարդու ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունքը: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն այս առումով նշում է, որ խնդրո առարկա իրավունքը ներառում է խոշտանգումներից, առանց համաձայնության բժշկական օգնությունից և փորձերից զերծ մնալու իրավունքը և կիրառվում բոլոր, այդ թվում՝ կալանավորված և դատապարտված անձանց նկատմամբ¹⁹:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը ևս ամրագրում է խոշտանգման արգելքը: Սահմանադրության 26-րդ հոդվածով նախատեսվում է, որ **ոչ ոք** չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

Կարծիքի արտահայտման ազատություն:

Միջազգային պրակտիկայում հացադուլ իրականացնելու փաստն ինքնին համարվում է մարդու՝ ընդհանրապես, ազատագրկման վայրում գտնվող անձի կողմից՝ մասնավորապես, կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի իրացման միջոց: Այս իրավունքը ժողովրդավարական պետության անխզելի բաղադրիչներից է: Ըստ այդմ՝ կարծիքի ազատ արտահայտման իրավունքը շոշափվում

¹² Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. – Եր.: «Իրավունք», 2010, էջ 188-189:

¹³ Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման կամ դաժան, անմարդկային նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

¹⁴ Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ էլ դաժան, անմարդկային կամ իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

¹⁵ Տե՛ս Convention against Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment (New York, 10 December 1984).

¹⁶ Տե՛ս Declaration on the Protection of All Persons from Being Subjected to Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment (adopted by the General Assembly on 9 December 1975).

¹⁷ Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

¹⁸ Տե՛ս International Covenant on Economic, Social and Cultural Rights (adopted and opened for signature, ratification and accession by General Assembly resolution 2200A (XXI) of 16 December 1966).

¹⁹ Տե՛ս Committee on Economic, Social and Cultural Rights, General Comment No.14, U.N. Doc. E/C.12/2000/4 (Aug. 11, 2000), 8, 34.

է ՄԻԵԿ-ի 10¹-րդ²⁰, ՔՔԻՄԴ-ի 19-րդ²¹, ինչպես նաև Սահմանադրության 42-րդ հոդվածներում:

Ներկայացված փաստաթղթերի դրույթների համալիր ուսումնասիրությունից առնվազն պարզ է դառնում, որ միջազգային հանրությունը՝ ընդհանրապես, Հայաստանի Հանրապետությունը՝ մասնավորապես, խնդրո առարկա հիմնարար իրավունքների ճանաչման պայմաններում տարբերակում չի դնում ազատության մեջ գտնվող և ազատությունից զրկված անձանց միջև՝ հաշվի առնելով նշյալ իրավունքների հիմնարար բնույթը՝ ազատության մեջ գտնվող և ազատությունից զրկված անձինք դիտարկվում են միևնույն հարթության վրա: Ասվածն ամուր հիմք է տալիս պնդելու, որ **թվարկված փաստաթղթերով երաշխավորված հիմնարար իրավունքները հավասարապես վերաբերելի և կիրառելի են ազատագրված վայրերում գտնվող և հացադուլ իրականացնող անձանց նկատմամբ: Ըստ այդմ՝ պետությունն ստանձնում է պոզիտիվ և նեգատիվ պարտավորություններ հացադուլ իրականացնող անձանց նշված իրավունքների պաշտպանության հարցում և պարտավոր է նշված իրավունքները հաշվի առնել ցանկացած միջատություն կատարելու պարագայում:**

Այժմ անդրադառնանք այն փաստաթղթերին, որոնք ուղղակիորեն առնչվում են հացադուլ իրականացնող անձանց և նրանց կարգավիճակին. դրանք են՝ Առողջապահության միջազգային սանգիացիայի 1991 թվականի «Սննդի ընդունումից հրաժարված անձանց նկատմամբ բժիշկների վերաբերմունքի վերաբերյալ» Մալթայի²² և 1975 թվականի «Ձերբակալված կամ կալանավորված անձանց խոշտանգումների,

պատժի կամ այլ անմարդկային արժանապատվությունը նվաստացնող բուժման վերաբերյալ բժիշկների դիրքորոշման մասին» Տոկիոյի²³ հռչակագրերը, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված՝ Բանտերում առողջապահության էթիկական և կազմակերպական ասպեկտների վերաբերյալ թիվ R(98) 7 հանձնարարականը²⁴: Թեև վերջիններս միջազգային իրավունքի աղբյուրներ չեն և հանդես են գալիս մեղմ իրավունքի (soft law) դաշտում, սակայն գործնականում ունեն մեծ կիրառելիություն:

Թվարկված փաստաթղթերը հիմնականում կարգավորում են հացադուլի իրականացման և հացադուլ իրականացնող անձանց տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման հետ կապված հարաբերությունները: Եվ սա պատահական չէ. առողջության պահպանման իրավունքը մարդու բնական իրավունքն է, և պատժի կատարումը չի կարող սահմանափակել դա: Առողջության պահպանման իրավունքը հատկապես կարևորվում է հասարակությունից մեկուսացման պայմաններում:

Ներկայացված փաստաթղթերի համալիր վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դրանցում ամրագրված են հացադուլ իրականացնող անձանց հետևյալ իրավունքները.

1) իրեն հասկանալի լեզվով սննդամթերքից և (կամ) ջրից հրաժարվելու հետևանքով առողջական վիճակի հետագա վատացման ռիսկերի և այն քայլերի մասին տեղեկանալու իրավունք, որոնք պետք է ձեռնարկվեն հացադուլ իրականացնողի առողջական վիճակի չվատացման նպատակով.

²⁰ Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք:

²¹ Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի անարգել կերպով հավատարիմ մնալու իր կարծիքներին: Յուրաքանչյուր մարդ ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է, պետական սահմաններից անկախ, բանավոր, գրավոր կամ մամուլի միջոցով կամ էլ գեղարվեստական ձևով արտահայտված կամ մի այլ ձևով սեփական ընտրությամբ ամեն տեսակի տեղեկատվություն ու զաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը:

²² Տե՛ս WMA declaration of Malta on hunger strikers (adopted by the 43rd World Medical Assembly, St. Julians, Malta, November 1991 and editorially revised by the 44th World Medical Assembly, Marbella, Spain, September 1992 and revised by the 57th WMA General Assembly, Pilaesberg, South Africa, October 2006).

²³ Տե՛ս WMA declaration of Tokyo - guidelines for physicians concerning torture and other cruel, inhuman or degrading treatment or punishment in relation to detention and imprisonment (adopted by the 29th World Medical Assembly, Tokyo, Japan, October 1975 Editorially revised by the 170th WMA Council Session, Divonne-les-Bains, France, May 2005 and the 173rd WMA Council Session, Divonne-les-Bains, France, May 2006, Revised by the 67th WMA General Assembly, Taipei, Taiwan, October 2016).

²⁴ Տե՛ս Recommendation No. R(98) 7 of the Committee of Ministers to member states concerning the ethical and organizational aspects of health care in prison (adopted by the Committee of Ministers on 8 April 1998 at the 627th meeting of the Ministers' Deputies).

2) բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու վերաբերյալ իրազեկված համաձայնություն տալու և չտալու իրավունք:

3) իր առողջական վիճակի վերաբերյալ մեկ այլ անկախ բժշկի կարծիքն ստանալու իրավունք:

**ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ
ՀԱՅԱԴՈՒԼ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԻ ԿԱՍ
ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ
ՍԿԶՐՈՒՆՔԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՆՁՆԱԾ
ՊՈԶԻՏԻՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ՀԱՐԱՔԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ**

Հացադուլի կլինիկական ընթացքն ինքնին կարող է վտանգել հացադուլ իրականացնող անձի կյանքն ու առողջությունը: Սակայն, ինչպես նշեցինք՝ հացադուլ իրականացնող անձն իրավունք ունի հրաժարվելու բժշկական օգնություն և սպասարկում ստանալուց. առողջ գիտակցություն ունեցող յուրաքանչյուր հիվանդ կարող է հրաժարվել բուժումից կամ բժշկական այլ միջամտությունից: Այս եզրահանգման հիմքում ընկած է ինչպես «Առողջության իրավունքի մասին» խարտիայի²⁵ 5-րդ հոդվածը, որի համաձայն՝ նախքան որևէ բուժօգնություն սկսելը՝ անհրաժեշտ է ստանալ պացիենտի համաձայնությունը՝ բացառությամբ օրենքով ուղղակիորեն սահմանված անհետաձգելի դեպքերի, այնպես էլ Պացիենտների իրավունքների հռչակագրի²⁶ 3-րդ սկզբունքը, որն ամրագրում է առ այն, որ պացիենտն ունի ինքնորոշման, իրեն վերաբերող որոշումներ կայացնելու իրավունք: Բժիշկը պետք է պացիենտին տեղեկացնի նրա

կայացրած որոշումների հետևանքների մասին: Այս համատեքստում խնդրահարույց է այն իրավիճակը, երբ հիվանդի կողմից բժշկական օգնությունից և սպասարկումից հրաժարվելու փաստը կարող է խոչընդոտել պետության՝ ունիվերսալ և տարածաշրջանային կոնվենցիաներով ամրագրված՝ կյանքի իրավունքի ուժով ստանձնած պոզիտիվ պարտավորության կատարումը: Այս առումով՝ ՔՔԻՄԴ-ի թիվ 6 ընդհանուր մեկնաբանության 1-ին և 5-րդ կետերն ամրագրում են, որ կյանքի իրավունքը «չպետք է նեղ» կամ «սահմանափակ կերպով մեկնաբանվի», և դրա պաշտպանության համար «անհրաժեշտ է, որ պետությունները դրական միջոցառումներ ձեռնարկեն (...) կյանքի տևողությունը երկարացնելու համար»: Պետությունների կողմից ՔՔԻՄԴ-ով ճանաչված իրավունքների կենսագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցների մասին զեկույցներ ներկայացնելու իրավասություն ունեցող մարմինը՝ Մարդու իրավունքների կոմիտեն, իր հերթին, նշում է. «Պետության պարտականությունն է ապահովել ազատությունից զրկվածների կյանքի իրավունքը, և վերջիններս պարտավոր չեն պաշտպանություն խնդրել ... անդամ պետության գործն է տեղյակ լինել, որքան որ խելամիտ կերպով հնարավոր է՝ ազատությունից զրկման վայրերում պահվող անձանց առողջության մասին»²⁷: Բացի այդ՝ Մարդու իրավունքների կոմիտեն մի շարք առիթներով վերահաստատել է, որ ՔՔԻՄԴ-ի 10-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությանը հարգանքով վերաբերվելու պարտականությունը, ի թիվս այլ հիմնահարցերի, ներառում է ազատագրված ընթացքում համապատասխան բուժօգնության տրամադրումը²⁸:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 102 2017

²⁵ Տե՛ս Charter on the Right to Health (հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.uianet.org/sites/default/files/Charter_on_the_right_to_Health_EN.pdf (30.11.17)):
²⁶ Տե՛ս WMA declaration of Lisbon on the rights of the patient (adopted by the 34th World Medical Assembly, Lisbon, Portugal, September/October 1981 and editorially revised by the 171st WMA Council Session, Santiago, Chile, October 2005).
²⁷ Տե՛ս ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե, Լանցովան ընդդեմ Ռուսաստանի Դաշնության, դիմում թիվ (763/1997), (CCPR/C/74/763/1997): Տեսակետներն ընդունվել են 2002 թվականի մարտի 26-ին:
²⁸ Տե՛ս ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե (ՄԻԿ), Քեյլին ընդդեմ Ջամայկայի (253/1987), (CCPR/C/41/D/253/1987) ՔՔԻՄԴ կետ 5.7: Տեսակետներն ընդունվել են 1991 թվականի ապրիլի 8-ին. 10-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, երբ բանտարկյալի մեջ առաջացել են առողջական խնդիրներ հիմնական բուժօգնության բացակայության և այն փաստի հետևանքով, որ նրան թույլ են տվել խցից դուրս գալ օրական միայն 30 րոպեով: Տե՛ս նաև՝ Լինթոնն ընդդեմ Ջամայկայի (255/1987), (CCPR/C/46/D/255/1987) ՔՔԻՄԴ կետեր 2.7 և 8.5: Տեսակետներն ընդունվել են 1992 թվականի հոկտեմբերի 22-ին. անհաջող փախուստի փորձ կատարելիս ձեռք բերված վնասվածքների բուժման համար համապատասխան բուժօգնության տրամադրման մերժումը խախտել է 7-րդ հոդվածը և 10-րդ հոդվածի 1-ին մասը: Տե՛ս նաև, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե (ՄԻԿ), Բեյլեյն ընդդեմ Ջամայկայի (334/1988), (CCPR/C/47/D/334/1988) ՔՔԻՄԴ կետ 9.3; ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե (ՄԻԿ), Թոմասն ընդդեմ

Այսինքն՝ միջազգային նշյալ փաստաթուղթն ու մեխանիզմը պետությանը կարծես թե «պարտադրում են» ձեռնարկել ակտիվ գործողություններ՝ իր հսկողության ներքո գտնվող անձանց կյանքի և առողջության պահպանման նպատակով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտություն է առաջանում որոշել այն սահմանագիծը, որը հատելու դեպքում պետությունն իրավասու կլինի առանց անձի համաձայնության ձեռնարկելու ակտիվ գործողություններ՝ վերացնելով նրա կյանքին կամ առողջությանն սպառնացող վտանգը համապատասխան բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու միջոցով:

Ինչպես նշեցինք՝ յուրաքանչյուր ոք, այդ թվում՝ հացադուլ իրականացնող կալանավորված անձը կամ դատապարտյալը, ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք: Սահմանադրության 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Ըստ այդմ՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածն ամրագրում է այն դեպքերը, երբ կարելի է սահմանափակել անձի ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքը: Մասնավորապես՝ նշյալ հոդվածն ամրագրում է առ այն, որ առանց մարդու կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության **թույլատրվում է իրականացնել բժշկական օգնություն և սպասարկում մարդու կյանքին սպառնացող վտանգի, ինչպես նաև շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների դեպքերում՝** Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված

կարգով: Փաստորեն, հաշվի առնելով բժիշկների՝ պացիենտների լավագույն շահերին համապատասխան գործելու պարտականությունը՝ օրենսդիրը, որպես ցուցիչ հիմք ընդունելով մարդու կյանքին և առողջությանն սպառնացող վտանգը, առանձնացրել է այն երկու դեպքը, երբ պետությունը, հավասարակշռելով բժշկական միջամտության դեպքում սպասվող արդյունքը և պացիենտի սեփական կարծիքը, թույլ է տալիս բժշկին ակտիվորեն գործել:

Գործնականում մարդու իրավունքների հնարավոր խախտումները բացառելու նպատակով օրենսդրական վկայակոչված դրույթը հստակեցվել է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2009 թվականի հունվարի 26-ի «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի մասին» թիվ 1 պաշտոնական պարզաբանմամբ²⁹: Վերջինումն ամրագրվում է, որ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները մարդու կյանքին սպառնացող ցանկացած վտանգի, ինչպես նաև շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների առկայության դեպքում, առանց տվյալ կոնկրետ պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության, այդ համաձայնությունն ստանալու անհնարինության պատճառներից անկախ (օրինակ՝ հիվանդի անգիտակից վիճակում լինելու, կրոնական կամ այլ համոզմունքներից ելնելով բժշկական միջամտությունից հրաժարվելու), պետք է իրականացնեն անհրաժեշտ բժշկական միջամտություն(ներ), ընդ որում՝ անհրաժեշտ բժշկական միջամտություն(ներ) իրականացնելու մասին որոշումը կայացվում է բժշկական խորհրդակցության (կոնսիլիումի), իսկ դրա անհնարինության դեպքում՝ բժշկի կողմից:

Հարկ է նշել, որ սահմանադրական այս մոտեցումը համապատասխանում է ինչպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այ-

Ջամայկայի (321/1988), (CCPR/ C/49/D/321/1988)ՔՔԻՄԴ կետեր 9.2 և 11; ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե (ՄԻԿ), Միկա Միհան ընդդեմ Հասարակածային Գվինեայի (414/1990), (CCPR/C/51/D/414/1990) ՔՔԻՄԴ կետ 6.4: Տեսակետներն ընդունվել են 1994 թվականի հուլիսի 8-ին. Քոլին Ջոնսոնն ընդդեմ Ջամայկայի (653/1995), (CCPR/C/64/D/653/1995) ՔՔԻՄԴ կետ 8.1: Տեսակետներն ընդունվել են 1998 թվականի հոկտեմբերի 20-ին. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե (ՄԻԿ), Կալենգան ընդդեմ Ջամբիայի (326/1988), (CCPR/C/48/D/326/1988)ՔՔԻՄԴ կետ 6.5: Տեսակետներն ընդունվել են 1993 թվականի հուլիսի 27-ին:

²⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2009 թվականի հունվարի 26-ի «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի մասին» թիվ 1 պաշտոնական պարզաբանում, սկզբնաղբյուրը՝ ՀՀԳՏ 2009.02.16/6(324):

սուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքին, այնպես էլ Պացիենտների իրավունքների հռչակագրի 6-րդ սկզբունքին, որի համաձայն՝ պացիենտի կամքին հակառակ ախտորոշիչ գործողություններ կամ բուժում կարող է իրականացվել միայն բացառիկ դեպքերում, եթե ուղղակիորեն թույլատրված է օրենքով և համապատասխանում է բժշկական էթիկայի սկզբունքներին:

Պացիենտի լավագույն շահերից գործելու տեսանկյունից՝ պակաս կարևոր չէ նաև այն հարցը, թե հացադուլ իրականացնող կալանավորված անձի կամ դատապարտյալի նկատմամբ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու մասին որոշումն ո՞վ է կայացնելու: Այս առումով հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի վերոնշյալ պարզաբանմամբ արդարացիորեն նշվում է, որ նման որոշում կայացնելու հարցում նախապատվությունը տրվում է բժշկական խորհրդակցությանը՝ կոնսիլիումին, որի անհնարինության դեպքում է միայն, որ որոշում կայացնելու իրավունքը վերապահվում է բժշկին: **Կարծում ենք՝ «անհնարինություն» եզրույթը պետք է դիտարկել բացառապես այն դեպքերի համատեքստում, երբ բժշկական օգնության և սպասարկման տրամադրման հապաղումը կարող է վտանգել անձի կյանքը կամ առողջությունը: Այլ կերպ ասած՝ եթե առկա չէ անհապաղ միջամտության կարիք, ապա որոշումը պետք է կայացվի բժշկական խորհրդակցության (կոնսիլիումի) կողմից:**

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե գործնականում բժշկական օգնությունն ու սպասարկումը ինչպես կարող են դրսևորվել:

ԱՐՇԵՏԱԿԱՆ ՍՆՈՒՑՈՒՄ ԵՎ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԵՐԱԿՐՈՒՄ

Միջազգային փաստաթղթերի վերլուծությունից բխում է, որ գործնականում հացադուլ իրականացնող անձին տրվող բժշկական օգնությունն ու սպասարկումը հիմնականում դրսևորվում են արհեստական սնուցման և հարկադիր կերակրման միջոցով:

Այս համատեքստում անհրաժեշտ է հստակ

տարանջատել «արհեստական սնուցում» (artificial feeding) և «հարկադիր կերակրում» (force feeding) հասկացությունները: Չնայած նշյալ հասկացությունները շատերը դիտարկում են որպես հոմանիշներ, վերջիններս իմաստային առումով տարբերվում են³⁰: Տեղին է նշել, որ հարկադիր կերակրումը միշտ ենթադրում է արհեստական սնուցում, բայց արհեստական սնուցման ոչ բոլոր ձևերն են, որ հարկադիր են:

Այսպես՝ արհեստական սնուցումը հեղուկ հավելումներով կամ այլ միջոցներով հացադուլ իրականացնող անձին տրամադրվող բժշկական օգնությունն է: Ի տարբերություն արհեստական սնուցման՝ հարկադիր կերակրումն ակտիվ դիմադրություն ցույց տվող անձին կերակրելն է, որը հաճախ իրականացվում է ֆիզիկական կամ զսպման մեխանիկական միջոցների կիրառմամբ՝ անձին կերակրելով: Կերակրման այս տեսակը կարելի է դիտարկել երկու տեսանկյունով՝ իրավական և էթիկական:

ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքը վկայում է, որ հացադուլ իրականացնող անձի նկատմամբ իրականացվող հարկադիր կերակրումը կարող է հանգեցնել ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի (խոշտանգումների արգելում) հնարավոր խախտման: Այս համատեքստում անդրադառնալով խնդրո առարկայի վերաբերյալ առանցքային համարվող Նեվմերժիտկին ընդդեմ Ուկրաինայի գործին³¹ միանգամից նշենք, որ այդ գործով հացադուլի մեջ գտնվող գանգատարկուի նկատմամբ իրականացվել էր հարկադիր կերակրում: Ըստ ՄԻԵԴ-ի՝ եթե պարտադիր բժշկական միջամտությունը պայմանավորված է բժշկական սկզբունքների վրա հիմնված թերապևտիկ անհրաժեշտությամբ, ապա նման միջամտությունը չի կարող դիտարկվել որպես անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող: Այդուհանդերձ՝ հարկադիր կերակրումը ներառում է տարրեր, որոնք որոշակի հանգամանքներում կարող են դիտվել որպես ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի խախտում:

Խնդրո առարկա գործով ՄԻԵԴ-ը վերլուծության է ենթարկել հետևյալ հանգամանքները՝

- բժշկական միջամտության անհրաժեշտությունը.

³⁰ Ավելի մանրամասն տե՛ս Declaration of Malta, Glossary (հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.wma.net/wp-content/uploads/2016/11/wmj10.pdf> (30.11.17)):

³¹ Տե՛ս Nevmerzhtsky v. Ukraine (գանգատ թիվ 54825/00, 2005 թվականի ապրիլի 5-ի վճիռ):

- ընթացակարգային պատշաճ երաշխիքների առկայությունը.
- կիրառված ուժի աստիճանը:

Որպես արդյունք՝ դատարանը հաստատված չի համարում ուկրաինական կառավարության պնդումն առ այն, որ հարկադիր կերակրումը նպատակ է հետապնդել փրկել անձի կյանքը: Այլ կերպ ասած՝ չի հիմնավորվել հացադուլի մեջ գտնվող անձի նկատմամբ բժշկական միջամտության կիրառման անհրաժեշտությունը: Ընդ որում՝ պահպանված չեն եղել նաև ընթացակարգային պատշաճ երաշխիքները, քանի որ անձը գիտակցված հրաժարվել է սննդից: Ուստի քրեակատարողական հիմնարկի վարչակազմը հարկադիր կերակրումն իրագործել է՝ ոչ գանգատարկուի լավագույն շահերից ելնելով³²:

Ինչ վերաբերում է կիրառված ուժի աստիճանին՝ ՄԻԵԴ-ը համարում է, որ բռնի ուժով հարկադիր կերակրման համար կիրառված ձեռնաշղթաները, բերանը բացող սարքը և կերակրափողում սննդի համար տեղադրված ռետինե հատուկ խողովակը իրենց ամբողջությամբ կարող են ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի համատեքստում դիտարկվել որպես խոշտանգում, եթե առկա չէ բժշկական միջամտության անհրաժեշտությունը³³:

Այսպիսով՝ նշյալ հանգամանքներն իրենց ամբողջության մեջ բավարար համարելով՝ ՄԻԵԴ-ն արձանագրել է ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի խախտում:

Վերոգրյալը հարկադիր կերակրման իրավական կողմն էր:

Եթե հարցին նայենք բժշկական էթիկայի տեսանկյունից, ապա այս առումով Տոկիոյի հռչակագիրն ուղղակիորեն նախատեսում է, որ բուժող բժիշկներին էթիկական առումով արգելվում է մասնակցել հարկադիր կերակրմանը: Սակայն նրանք կարող են անձի համաձայնությամբ կամ, երբ անձն այլևս ընդունակ չէ տալ (կամ հրաժարվել) իրազեկված համաձայնություն, որոշել, որ անձի կլինիկական շահերից է բխում սկսել արհեստական սնուցումը: Նույն գաղափարախոսությունն է դրված նաև

բժշկական էթիկայի սկզբունքների հիմքում, որոնք վերաբերում են դատապարտյալներին և կալանավորված անձանց խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից պաշտպանելու հարցում բուժաշխատողների, մասնավորապես՝ բժիշկների դերին³⁴: Նշյալ սկզբունքներից 5-րդն ամրագրում է, որ բժշկական էթիկային հակասում է բուժաշխատողների, մասնավորապես՝ բժիշկների կողմից այն գործընթացին մասնակցությունը, որը զսպում է կալանավորված անձին կամ դատապարտյալին, եթե նման գործընթացը պայմանավորված չէ բժշկական չափանիշներով և չի բխում անձի ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանման անհրաժեշտությունից:

Վերոշարադրյալը ամուր հիմք է տալիս հետևյալ պնդումների համար.

1) պետությունը պետք է երաշխավորի հացադուլ իրականացնող անձանց նկատմամբ իր ստանձնած պոզիտիվ և նեգատիվ պարտավորությունների կատարման ապահովումը.

2) հացադուլ իրականացնող անձանց նկատմամբ պետության կողմից ստանձնած պոզիտիվ և նեգատիվ պարտավորությունների կատարումը պետք է հստակ կանոնակարգման ենթարկվի՝ հաշվի առնելով գործնականում հնարավոր խախտումների առաջացման ռիսկերը.

3) հացադուլ իրականացնող անձանց տրվող բժշկական օգնությունը և սպասարկումը պետք է հետապնդեն բացառապես անձի կյանքին և առողջությանն ուղղված վտանգը չեզոքացնելու նպատակ, այսինքն՝ անձի կյանքին և առողջությանն սպառնացող վտանգը պետք է լինի այն ցուցիչը, որը կդրդի պետությանը՝ ձեռնարկելու ակտիվ քայլեր.

4) հացադուլ իրականացնող անձին տրվող բժշկական օգնությունը և սպասարկումը պետք է իրականացվեն այնպիսի եղանակներով, որոնք չեն հանգեցնի խոշտանգման, դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի:

³² Տե՛ս վկայակոչված վճիռը, կետ 96:

³³ Տե՛ս վկայակոչված վճիռը, կետ 97:

³⁴ Տե՛ս Principles of Medical Ethics relevant to the Role of Health Personnel, particularly Physicians, in the Protection of Prisoners and Detainees against Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment (adopted by General Assembly resolution 37/194 of 18 December 1982).

ՀԱՅԿ ԿԵՍՈՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
իրավագիտության ամբիոնի ասպիրանտ,
ՀՀ Նախագահի աշխատակազմ, իրավաբանական
վարչության առաջատար մասնագետ

**ՈՐՈՇ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿՆԵՍՆՈՒԹՅԱՆ
ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Ժողովրդաիշխանության իրական երաշխավորվածության պայմաններում իշխանությունը պատկանում է ժողովրդին, ինչն իրականացվում է անմիջական և միջնորդավորված ձևերով, դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ժողովուրդն իրեն պատկանող իշխանությունը չի կարող ամբողջ ծավալով անմիջականորեն իրականացնել, այդ իսկ պատճառով դրա մի մասը, թերևս՝ զգալի մասը, իրականացնում է միջնորդավորված ձևով՝ պատվիրակելով հանրային իշխանության մարմիններին:

Ժողովրդաիշխանության արդյունավետ իրականացման նպատակով անհրաժեշտ է ժողովրդաիշխանության անմիջական և միջնորդավորված ձևերի այնպիսի համադրում, որի դեպքում ժողովուրդը, իրեն պատկանող իշխանության զգալի մասը պատվիրակելով հանրային իշխանության մարմիններին, դրանով հանդերձ՝ ունենա հանրային նշանակությամբ առանցքային կարևորություն ունեցող հարցերում անմիջականորեն որոշումներ ընդունելու կամ դրանց վերաբերյալ կարծիքն արտահայտելու լիազորության այնպիսի ծավալը, որն իրեն չզգա իշխանության իրականացումից «մեկուսացված» և «օտարված», այլ, ընդհակառակն՝ պետք է զգա, որ իշխանությունն իրապես պատկանում է իրեն, և ինքն է դրա միակ կրողը և պատասխանատուն:

Այս համատեքստում, 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության¹ լույսի ներքո հարկ է դիտարկել, թե անմիջական և միջնորդավորված ժողովրդաիշխանության ձևերի

միջև ապահովվել է արդյոք նշված համամասնությունը: ՀՀ-ում ժողովրդաիշխանությունը երաշխավորված է Սահմանադրության 2-րդ հոդվածով, ըստ որի՝ իշխանությունը պատկանում է ժողովրդին, ինչն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Սահմանադրության նշված հոդվածի վերլուծությունից բխում է հետևյալը՝ ա) ՀՀ-ում իշխանության միակ աղբյուրը ժողովուրդն է, բ) ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների միջոցով (անմիջական ժողովրդաիշխանություն), գ) ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով (միջնորդավորված ժողովրդաիշխանություն):

Ժողովրդաիշխանության էության բացահայտման տեսանկյունից անհրաժեշտ է դիտարկել նաև ՀՀ Սահմանադրական դատարանի 2010 թվականի 880 որոշումը, որի վերլուծությունից բխում է հետևյալը՝ ա) ժողովուրդն է գերագույն իշխանության աղբյուր և կրող, բ) ժողովուրդն է ձևավորում իշխանության ներկայացուցչական մարմիններ և իր լիազորությունները պարզապես կրում է դրանց, գ) ունի այդ իրավունքների սահմանադրորեն ամրագրված կարգավիճակ²:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 102 2017

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015 թվականի փոփոխություններով), ՀՀՊՏ 2015.12.21/ Հատուկ թողարկում. Հոդ. 1118, ընդունվել է 06.12.2015, հասանելի էր՝ <http://www.arlis.am/>
² Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 880 որոշում, ընդունվել է 23.04. 2010թ., սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2010.05.05/18(752), հասանելի էր՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=57852>

Այսպիսով՝ նշվածից բխում է, որ ժողովրդաիշխանությունը դրսևորվում է անմիջական և միջնորդավորված ձևերի միջոցով: Անմիջական ժողովրդաիշխանության դեպքում ժողովուրդը *հանրաքվեի* միջոցով ընդունում է հանրային նշանակությամբ առանցքային կարևորություն ունեցող հարցերի վերաբերյալ որոշումներ կամ իր կարծիքն է արտահայտում դրանց վերաբերյալ, իսկ *ընտրության* միջոցով ձևավորում է հանրային իշխանության ներկայացուցչական (որոշ պետություններում նաև գործադիր և դատական) մարմինները, որոնց էլ լիազորում է միջնորդավորված ձևով իրականացնել իրենց պատվիրակված լիազորությունները:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ անմիջական և միջնորդավորված ժողովրդաիշխանության դրսևորման ձևերի համադրված վերլուծությունից բխում է, որ նախատեսված կարգավորումները լայն առումով միտված են միջնորդավորված ժողովրդաիշխանության խթանմանը, իսկ անմիջական ժողովրդաիշխանության տեսանկյունից հիմնականում սահմանափակող բնույթ ունեն³: Նշվածը նախ և առաջ պայմանավորված է այն հանգամանքով, որ սահմանադրական փոփոխությունների արդյունքով նեղացվեց անմիջականորեն ընտրվող հանրային իշխանության մարմինների շրջանակը, մասնավորապես՝ պետական մակարդակում որպես այդպիսին միայն Ազգային ժողովն է, ինչի հետևանքով վերջինս դարձավ անմիջական լեգիտիմությամբ օժտված միակ մարմինը: Միջնորդավորված ժողովրդաիշխանության խթանմանը նպաստեց նաև այն, որ Հանրապետության Նախագահի ընտրության անմիջական ձևի փոխարեն նախատեսվեց միջնորդավորված ձև, որի արդյունքով Հանրապետության Նախագահն այլևս ընտրվում է Ազգային ժողովի կողմից: Այդպիսի մոտեցումն անմիջական ժողովրդաիշխա-

նության դրսևորման տեսանկյունից սահմանափակող բնույթ ունի:

ՀՀ-ում Հանրապետության Նախագահի միջնորդավորված ձևով ընտրության նախատեսումը երբեմն հիմնավորվում է կառավարման խորհրդարանական ձևի անցմամբ, սակայն միջազգային փորձի վերլուծությունից բխում է, որ խորհրդարանական կառավարման ձև ունեցող պետություններում այդ հարցի վերաբերյալ միասնական մոտեցումներ առկա չեն: Խորհրդարանական կառավարման ձև ունեցող պետություններում գործում են Հանրապետության Նախագահի ընտրության ինչպես անմիջական, այնպես էլ միջնորդավորված ձևերը՝ տարբեր դրսևորումներով, մասնավորապես՝ Հանրապետության Նախագահը՝ *ա) որոշ պետություններում ընտրվում է անմիջականորեն ժողովրդի կողմից⁴, բ) որոշ պետություններում ընտրվում է խորհրդարանի կողմից⁵, գ) կան պետություններ, որտեղ ընտրվում է միջնորդավորված ձևով ընտրական խորհրդի կողմից, որը բաղկացած է խորհրդարանի երկու պալատների և փարածքային (ռեզիդենտ) ներկայացուցիչներից⁶, դ) իսկ որոշ դեպքերում ոչ թե ընտրվում է, այլ նշանակվում է խորհրդարանի քաղաքական մեծամասնության կողմից⁷:*

ՀՀ-ում Հանրապետության Նախագահի միջնորդավորված ձևով ընտրության նախատեսումը՝ հաշվի առնելով Նախագահի ինստիտուտի վերաբերյալ ձևավորված հասարակական ընկալումները, իրականում հասարակությունում կարող է ստեղծել իշխանության իրականացումից, այսպես կոչված, «օտարվածության» զգացում, քանի որ, փաստացի, ժողովուրդը զրկվեց Հանրապետության Նախագահին անմիջականորեն ընտրելու հզոր լիազորությունից: Այդ պայմաններում անմիջական ժողովրդաիշխանության խթանման նպատակով կարելի է մտածել որոշակի այլընտրանքային լուծումներ գտնելու մասին, ինչը ժո-

³ Տե՛ս Գ.Բ. Դանիելյան, Վ.Ա. Այվազյան, Ա.Ա. Մանասյան, Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործական հետազոտություն), Երևան, «Հայրապետ» 2015թ., 24 էջ, հասանելի էր՝ <http://ysu.am/files/Book-Konst.pdf>

⁴ Տե՛ս Իռլանդիայի Սահմանադրության հոդված 12-րդ, Ֆիլիանդիայի Սահմանադրության հոդված 54-րդ:

⁵ Տե՛ս Չեխիայի Սահմանադրության հոդված 54-րդ, հասանելի էր՝ <https://www.constituteproject.org/search?lang=en>

⁶ Տե՛ս Գերմանիայի Սահմանադրության հոդված 54-րդ, Իտալիայի Սահմանադրության հոդված 83-րդ. հասանելի էր՝ <https://www.constituteproject.org/search?lang=en>

⁷ Տե՛ս Մալթայի Սահմանադրության 47-րդ հոդված. հասանելի էր՝ <https://www.constituteproject.org/search?lang=en>

ղովրդին թույլ կտա որոշակի ձևաչափով անմիջականորեն մասնակցություն ունենալ Հանրապետության Նախագահի ընտրության գործընթացին: Խորհրդարանական կառավարման ձև ունեցող եվրոպական պետությունների փորձի ուսումնասիրությունից եզրակացնում ենք, որ Հանրապետության Նախագահի ընտրության ոլորտում անմիջական ժողովրդաիշխանության խթանման տեսանկյունից դրական քայլ կլինի այն, որ Ազգային ժողովում Հանրապետության Նախագահի թեկնածու առաջադրելու իրավունք վերապահվի նաև ընտրական իրավունք ունեցող որոշակի խումբ քաղաքացիների⁸, ինչը կլինի որոշակի ձևաչափ այդ կարևորագույն հարցում անմիջականորեն ժողովրդի ձայնը լսելի դարձնելու համար: Այդ մոտեցումը հատուկ է խորհրդարանական կառավարման ձև ունեցող մի շարք պետությունների, օրինակ՝ Սլովակիայում⁹ և Ֆինլանդիայում¹⁰ համապատասխանաբար տասնհինգ հազար և քսան հազար ընտրական իրավունք ունեցող քաղաքացիներն իրավունք ունեն առաջադրել Հանրապետության Նախագահի թեկնածու¹¹:

Անմիջական ժողովրդաիշխանության դրսևորման հիմնական ձևերից մեկը հանրաքվեն է, որը հանրային նշանակությամբ կարևորագույն հարցերի վերաբերյալ ժողովրդի կողմից անմիջականորեն որոշումների ընդունման կամ դրանց վերաբերյալ հասարակական կարծիքը բացահայտելու միջոց է: Մասնավորապես՝ հանրաքվեի միջոցով ընդունվում և փոփոխություն է կատարվում Սահմանադրությունում, ընդունվում են օրենքներ, ինչպես նաև որոշում է ընդունվում վերապետական միջազգային կազմակերպություններին ՀՀ անդա-

մակցության և տարածքի փոփոխության վերաբերյալ:

Սակայն նշենք, որ ժողովրդի այդ իրավունքը բացարձակ չէ, քանի որ առկա են մի շարք հարցեր, որոնք չեն կարող դրվել հանրաքվեի, ինչի պատճառով դրանք անմիջական ժողովրդաիշխանության միջոցով որոշելու տիրույթից դուրս են մնում: Մասնավորապես՝ Սահմանադրության 204-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանրաքվեի չեն կարող դրվել այն օրենքների նախագծերը, որոնք վերաբերում են սահմանադրական օրենքների իրավակարգավորման առարկային, պետական բյուջեին, հարկերին, տուրքերին, այլ պարտադիր վճարներին, համաներմանը, պետության պաշտպանությանը և անվտանգությանը, միջազգային պայմանագրերին, ինչպես նաև Հանրաքվեի մասին օրենքով սահմանված այլ հարցերի:

Նշվածի համատեքստում անմիջական ժողովրդաիշխանության երաշխավորման տեսանկյունից ցանկանում ենք դիտարկել 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ Սահմանադրություն ընդունելու և դրանում փոփոխություն կատարելու վերաբերյալ նախատեսված կարգավորումը¹²: 2005թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ նշված լիազորությունը բացառապես վերապահված էր ժողովրդին, ինչն իրականացվում էր հանրաքվեի միջոցով, այսինքն՝ անմիջական ժողովրդաիշխանության արդյունք էր: Սակայն 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքով ժողովուրդն այդ «բացարձակ» իրավունքից զրկվեց, քանի որ Սահմանադրության մի շարք հոդվածներում փոփոխություն կատարելու լիազորություն վերա-

⁸ Ներկայումս, Սահմանադրության 125-րդ հոդված 3-րդ մասի համաձայն՝ այդպիսի լիազորություն ունի Ազգային ժողովի պատգամավորների մեկ քառորդը:

⁹ Տե՛ս Սլովակիայի Սահմանադրություն 103-րդ հոդվածի 3-րդ մաս, հասանելի էր՝ https://www.constituteproject.org/constitution/Slovakia_2014?lang=en

¹⁰ Տե՛ս Ֆինլանդիայի Սահմանադրություն 54-րդ հոդված, հասանելի էր՝ https://www.constituteproject.org/constitution/Finland_2011?lang=en

¹¹ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ տեղական մակարդակում ևս նկատվում է միջնորդավորված ժողովրդաիշխանության խթանման միտում: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածով նախատեսվել է նաև համայնքի ղեկավարի անուղղակի ձևով ընտրության հնարավորություն, ինչը տեղական մակարդակում նույնպես կհանգեցնի անմիջական ժողովրդաիշխանության սահմանափակման:

¹² Տե՛ս Шипилов А.Г., Идея народовластия в политической культуре современной России, Вестник Ленинградского государственного университета им. А.С. Пушкина, №4 / том 1 / 2009, էջ 221:

պահվեց նաև Ազգային ժողովին¹³: Նպատակ չունենալով անդրադառնալ կատարված փոփոխության բուն էությանը՝ այդուհանդերձ՝ փաստենք, որ այդպիսի մոտեցումը անմիջական ժողովրդաիշխանության դրսևորման տեսանկյունից նույնպես սահմանափակող բնույթ ունի և միտված է միջնորդավորված ժողովրդաիշխանության խթանմանը, քանի որ Սահմանադրությունում փոփոխություն այլևս կարող է կատարվել նաև միջնորդավորված ձևով՝ Ազգային ժողովի կողմից:

Նշենք, որ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ նախատեսվել են նաև որոշ կարգավորումներ, որոնք միտված են անմիջական ժողովրդաիշխանության որոշ դրսևորումների խթանմանը: Մասնավորապես՝ նախատեսվել է ժողովրդական նախաձեռնության ինստիտուտը, որը դրսևորվել է հետևյալ կերպ՝ ա) *ընտրական իրավունք ունեցող առնվազն հիսուն հազար քաղաքացի ունի Ազգային ժողովին քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք (109-րդ հոդվածի 6-րդ մաս), բ) Սահմանադրություն ընդունելու կամ փոփոխելու նախաձեռնության իրավունք ունեն նաև ընտրական իրավունք ունեցող երկու հարյուր հազար քաղաքացի (202-րդ հոդվածի 1-ին մաս), ժողովրդական նախաձեռնության հնարավորություն նախատեսված է նաև Սահմանադրության 204-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով:*

Առաջին հայացքից կարող է թվալ, թե ժողովրդական նախաձեռնության նշված մեխանիզմները կարող են նպաստել անմիջական ժողովրդաիշխանության խթանմանը, սակայն դրանց իրացման ընթացակարգերի վերլուծությունից բխում է, որ նախատեսված ընթացակարգերը բավականին բարդացված են, ինչը կասկածի տակ է դնում դրանց արդյունավետ

կենսագործման հնարավորությունը: Մասնավորապես՝ Ազգային ժողովին քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք վերապահվել է ընտրական իրավունք ունեցող առնվազն *հիսուն հազար* քաղաքացու: Իրականում այսպիսի հնարավորության առկայությունը կարող է գործուն հարթակ հանդիսանալ անմիջական ժողովրդաիշխանության դրսևորման և ժողովրդի ձայնը անմիջականորեն լսելի դարձնելու համար: Սակայն կարծում ենք, որ նախատեսված *հիսուն հազար* թիվը ՀՀ դեպքում բնակչության ընդհանուր թվաքանակի հարաբերակցության համամասնությամբ բավականին բարձր է, ինչը հիմնավորվում է նաև միջազգային փորձով, օրինակ՝ *Իտալիայում* ժողովրդական նախաձեռնության կարգով օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեն ընտրական իրավունք ունեցող *հիսուն հազար* քաղաքացին¹⁴. Իտալիան ունի վաթսուն երկու միլիոն բնակչություն, *Մակեդոնիայում* այդպիսի իրավունք ունեն տասը հազար քաղաքացին¹⁵. Մակեդոնիան ունի երկու միլիոն բնակչություն, իսկ *Ալբանիայում* քսան հազար քաղաքացին¹⁶. Ալբանիան ունի երեք և կես միլիոն բնակչություն: Հետևաբար՝ ժողովրդական նախաձեռնության նշված ինստիտուտները արդյունավետ կարող են կենսագործվել միայն այն պարագայում, երբ դրանց իրականացումն ընթացակարգային առումով դյուրացվի, և նշված կարգով Ազգային ժողով դիմելու լիազորություն ունեցող անձանց թվաքանակը որոշվի բնակչության թվի համամասնությամբ՝ հաշվի առնելով առկա միջազգային փորձը:

Ամփոփելով վերոգյալը՝ նշենք, որ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մի շարք կարգավորումներ, միտված լինելով միջնորդավորված

¹³ Սահմանադրության 202-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրության 1-3-րդ, 7-րդ, 10-րդ և 15-րդ գլուխից, Սահմանադրության 88-րդ հոդվածից, 89-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությունից, 90-րդ հոդվածի 1-ին մասից, 103-րդ հոդվածի 2-րդ մասից, 108-րդ, 115-րդ, 119-120-րդ, 123-125-րդ, 146-րդ, 149-րդ և 155-րդ հոդվածներից, 200-րդ հոդվածի 4-րդ մասից բացի՝ մյուս հոդվածներում փոփոխություն կատարելու լիազորությունը վերապահվել է նաև Ազգային ժողովին:

¹⁴ Տե՛ս Իտալիայի Սահմանադրություն 71-րդ հոդված, հասանելի էր՝ https://www.constituteproject.org/constitution/Italy_2012?lang=en

¹⁵ Տե՛ս Մակեդոնիայի Սահմանադրություն 71-րդ հոդված, հասանելի էր՝ https://www.constituteproject.org/constitution/Macedonia_2011?lang=en

¹⁶ Տե՛ս Ալբանիայի Սահմանադրություն 81-րդ հոդված, հասանելի էր՝ https://www.constituteproject.org/constitution/Albania_2012?lang=en

Ժողովրդաիշխանության խթանանը, անմիջական ժողովրդաիշխանության դրսևորումների տեսանկյունից սահմանափակող բնույթ ունեն: Միևնույն ժամանակ՝ անմիջական ժողովրդաիշխանության խթանմանն ուղղված՝ Սահմանադրությամբ նախատեսված մեխանիզմների (Ժողովրդական նախաձեռնության ինստիտուտ) օգտագործումն ընթացակարգային առումով բավականին բարդացված է: Կարծում ենք, որ սահմանադրական առկա կարգավորումների պայմաններում անմիջական ժողովրդաիշխանության դրսևորումների տեսանկյունից սահմանափակ մեխանիզմների առկայությունը ժամանակի ընթացքում կարող է հանգեցնել, այս-

պես կոչված, անմիջական ժողովրդաիշխանության դրսևորման ճգնաժամի՝ առաջացնելով տարբեր խնդիրներ՝ տարաբնույթ դրսևորումներով հանդերձ: Նշված անցանկալի հետևանքներից խուսափելու համար անհրաժեշտ են որոշակի գործուն մեխանիզմներ, որոնք որոշ չափով կնպաստեն անմիջական ժողովրդաիշխանության խթանմանը՝ ժողովրդին հնարավորություն տալով որոշ դեպքերում որոշակի ձևաչափով անմիջականորեն մասնակցություն ունենալու հանրային նշանակությամբ կարևորագույն հարցերի վերաբերյալ որոշումներ ընդունելու, ինչպես նաև դրանք նախաձեռնելու գործում:



ԼԻԼԻԹ ՂԱԶԱՆՉՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ Փաստաբանների պալատի անդամ,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի դոկտորանտ

**ԱՐԺԱՆԱԿԱՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՍՔ**

Մարդու արժանապատվության ճանաչումը՝ որպես համապարփակ և բացարձակ, պետության կողմից պաշտպանվող սահմանադրական արժեք, Հայաստանի Հանրապետությունում անձի իրավական դրության կարևորագույն բնութագիրն է: Միևնույն ժամանակ՝ «արժանապատվություն» հասկացությունը որպես սոցիալական կատեգորիա նախասահմանում է «անձի արժանապատվություն» սահմանադրական կատեգորիայի բովանդակության համապարփակությունն ու բազմիմաստությունը: Որպես սահմանադրական նախադրյալ (իրողություն)՝ անձի արժանապատվությունը հանդես է գալիս մարդու՝ իբրև կենսահոգեբանա-սոցիալական էության, անհրաժեշտ և անքակտելի որոշիչ հատկանիշ՝ կարգելով նրան որպես սոցիալական կենսագործունեության լիիրավ և իրավահավասար սուբյեկտ¹:

Իրավաբանական իմաստով՝ անձի արժանապատվությունն իրավունքի սուբյեկտ հանդիսացող անձի արժեքն ապահովվում է նրան ամրագրված համալիր սուբյեկտիվ իրավունքներով ու ազատություններով, որոնք կազմում են անձի իրավական կարգավիճակը: Այլ կերպ ասած՝ անձը միաժամանակ և՛ իրավունքի, և՛ արժանապատվության սուբյեկտ է: Ուստի անձի արժանապատվությունն իրավաբանական տեսանկյունից դառնում է միջճյուղային բարդ, համալիր իրավական ինստիտուտ, որի ենթահինստիտուտները կոչված են ապահովելու արժանապատվության զանազան կողմերը:

Ամբողջապես այդ իրավական ինստիտուտի առաքելությունն է՝ իրականության հարաբերություններում կենսագործել մարդու արժանիքները: Այսպիսով՝ իրավունքը և պետությունը վերածվում են մարդու արժանապատվությունն արտահայտող հասարակական հարաբերությունների ամբողջական համալիրը կարգավորող արդյունավետ միջոցների, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում մարդու արժանապատիվ գոյության պայմանների պահպանի և երաշխավորի: Այդ նպատակը հավասարապես ընդհանուր է և՛ հասարակության, և՛ պետության համար:

Արդի պետության և իրավունքի տեսությունում առանձնացվում են արժանապատվության պոզիտիվ և նեգատիվ գործոնները: Իրավասոցիալական և սոցիալ-երաշխիքային տեսանկյունից՝ անձի արժանապատվության պոզիտիվ մասը բնութագրում է արժանապատիվ կյանք երաշխավորող պայմանների ստեղծումը, հանդես է գալիս մարդու և քաղաքացու իրավունքներից և ազատություններից օգտվելու հետ կապված հարաբերությունների օրենսդրական կարգավորման սահմանադրաիրավական չափանիշ²: Ընդ որում՝ «արժանապատիվ կյանք» հասկացության ծավալի մեջ առավել հետևողականորեն շեշտադրվում է նյութական գործոնը՝ սպառման որոշակի միջոցներով, մատչելի սոցիալական բարիքներով համապատասխան ապահովվածությունը: Ավելին՝ այս պարագայում ևս երբեմն նկատվում է այդ բարիքի

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 102 2017

¹ Մանրամասն տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ /Ընդհանուր խմբագրությամբ՝ Հարությունյան Գ., Վաղարշյան Ա., Երևան, Իրավունք, 2010:

³ Մանրամասն տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ /Ընդհանուր խմբագրությամբ՝ Հարությունյան Գ., Վաղարշյան Ա., Երևան, Իրավունք, 2010:

առանձնահատուկ, նյութական տարրերին չհանգող հորինվածքային ամբողջականությունը, որը ներառում է նաև բարոյագիտական ապագոյաբանական մասը:

Անձի արժանապատվության նեգատիվ մասը ենթադրում է հանրային իշխանության կողմից կամայական միջամտություն անձի իրավական կարգավիճակին, ինչը դրսևորվում է անձի հիմնարար իրավունքների անհիմն սահմանափակմամբ կամ անձին դրանցից զրկմամբ: Տվյալ դեպքում անձի արժանապատվության նեգատիվ մասն անթույլատրելի է համարում վերոնշյալ գործողությունները: Ուստի արժանապատվության անթույլատրելի նսեմացում պետք է համարել, օրինակ, որոշակի կատեգորիայի անձանց կարգավիճակ ունեցողների համար (թոշակառուներ, զինծառայողներ, հաշմանդաններ և այլք) պետության կողմից նախկինում ճանաչված սոցիալական երաշխիքների ծավալի կամայական նվազեցումը:

Վերոգրյալից ակնհայտ է, որ արժանապատվությունը մարդկային հատկանիշ է, որը հավասարազոր է հարգվելու իրավունքին և ուրիշներին հարգելու պարտականությանը և որոշվում է ոչ միայն սուբյեկտի ինքնագնահատականով, այլ նաև մարդու օբյեկտիվ հատկանիշների համակցությամբ, որոնցով բնութագրվում է նրա վարկանիշը հասարակության մեջ (գիտելիքների մակարդակ, բարոյական տվյալներ, սոցիալապես օգտակար աշխատանք և այլն)³:

Արժանապատվության իրավունքը մարդու իրավունքների և ազատությունների հիմնական աղբյուրն է և իր արտացոլումն է գտել ինչպես միջազգային իրավական փաստաթղթերում, այնպես էլ ժողովրդավարական շատ երկրների սահմանադրություններում:

Այսպես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 1-ին հոդվածի համաձայն՝ բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Այլ կերպ ասած՝ անձը յուրաքանչյուր ոք է, ով օժտված է անքակտելի, այսինքն՝ անվերապահորեն ճանաչված և ճանաչելի արժանա-

պատվությամբ: Հաշվի առնելով նման պատկերացումը՝ պետությունը պարտավոր է, իրավաքաղաքական իմաստով, ոչ միայն բացառել անձնական ինքնավարության ոլորտին կամայական միջամտությունը, այլև յուրաքանչյուր մարդու համար ապահովել բազմակողմանի զարգացման հնարավորություններ, քանզի յուրաքանչյուր ոք արժանի է դրան:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ սահմանադրաիրավական բարեփոխումների հետևանքով պետությունն ստանձնել է մարդակենտրոն, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանման ուղին: Այսպես՝ մեր երկրի Հիմնական օրենքը հռչակում է մարդու արժանապատվության սկզբունքը, որն արտացոլված է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածում. «Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է»⁴:

Նկատենք, որ, Սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն. «Մարդու արժանապատվությունն անխախտելի է»⁵: Ակնհայտ է, որ ժողովրդավարական, իրավական պետությունում սահմանադրությունը մարդու արժանապատվությունն ամրագրում է ոչ միայն որպես հիմնական արժեհամակարգային սկզբունք, այլև մարդու սուբյեկտիվ իրավունք: Հայտնի է՝ իրական ժողովրդավարական, իրավական պետությունում երկրի Հիմնական օրենքը միշտ ունի մարդակենտրոն գաղափարը՝ իրավական կարգավորման առանցք դիտարկելով մարդուն, վերջինիս իրավական դրությունը կազմող հիմնական տարրերն ու արժանապատվությունը, իսկ պետության գոյությունն ինքնանպատակ չէ, այլ հաստատվում է հանուն մարդու, վերջինիս ծառայելու համար⁶: Հետևաբար՝ ակնհայտ է, որ մարդն իր հիմնական սուբյեկտիվ իրավունքների և ազատությունների, ինչպես նաև պարտականությունների կրող է դառնում իր արժանապատվության ուժով:

Իր հերթին՝ արժանապատվությունը անձի իրավական կարգավիճակի միջուկը հանդիսա-

³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք/ Պատ. խմբ. Այվազյան Ն.Ա., Երևան, 2008, էջ 201:

⁴ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (փոփ. 06.12.2015թ.), հոդվ.3, <http://www.president.am/hy/constitution2015/,/06.03.2017/>:

⁵ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (փոփ. 06.12.2015թ.), հոդվ.23, <http://www.president.am/hy/constitution2015/,/06.03.2017/>:

⁶ Մանրամասն տե՛ս Պողոսյան Վ., Սարգսյան Ն., Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, Երևան, Տիգրան Մեծ, 2016:

ցող իրավունքների և ազատությունների անբակտերի հիմքն է: Ուշագրավ է, որ, ի տարբերություն 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության, 2015թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքով արժանապատվության անխախտելիության դրույթն ամրագրվեց «Սահմանադրական կարգի հիմունքներ» գլխում, որպեսզի հստակեցվի մարդու արժանապատվության և հիմնական իրավունքների միջև ներդաշնակ կապը: Հետևաբար՝ գործում է հստակ բանաձև. «Առանց արժանապատվության գոյություն չունեն հիմնական իրավունքները, և առանց հիմնական իրավունքների գոյություն չունի արժանապատվությունը»: Անձի արժանապատվությունն, իրավաբանական գրականության մեջ սահմանվում է նաև ընդհանուր սոցիալական, էթնիկական բնույթով, որտեղ անձը բանականությամբ օժտված սոցիալական բարձրագույն արժեք (էակ)⁷ է:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ իրավաբանական գրականությունում «արժանապատվություն» հասկացության վերաբերյալ ներկայացված տարատեսակ մեկնաբանություններն ամբողջությամբ չեն բացահայտում անձի արժանապատվությունը՝ որպես իրավական հասկացություն: Ինչպիսիք են անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը, մասնավոր կյանքի անձեռնմխելիության, բնակարանի, խղճի և հավատի կրոնի ազատության իրավունքը և նույնիսկ կյանքի իրավունքը: Պատահական չէ, որ ՀՀ Սահմանադրությունում մարդու արժանապատվությունը նախորդում է անգամ կյանքի իրավունքին, քանզի տարածվում է ինչպես նախքան ծնունդը՝ կազմավորված մարդկային սաղմի վրա, (եթե անգամ հղիությունն արհես-

տականորեն ընդհատվել է), այնպես էլ գործում է մարդու մահից հետո: Այլ կերպ ասած՝ մարդու արժանապատվությունը նրա կյանքից և մահից անդին է, ինչի հետևանքով էլ առաջ է գալիս դրա իրավագիտական բնորոշման էական դժվարությունը՝ առանց փիլիսոփայական արժեքանական կամ նույնիսկ աստվածաբանական հնարքների գործադրման⁸:

Այսպիսով՝ անձի արժանապատվությունը՝ որպես իրավաբանական կատեգորիա, բացահայտվում է անձնական իրավունքներ և ազատություններ համակարգով, որոնք երաշխավորված են տվյալ պետության յուրաքանչյուր մարդու համար: Այնուամենայնիվ, մարդու արժանապատվության լիարժեք իրացման և պաշտպանության համար ամենակարևոր նախադրյալը անձի հնարավորությունների, մարդու իրավունքների, ազատությունների անարգելք իրագործումն է⁹:

Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է մասնակից պետությունների կողմից Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի դրույթների խախտմանը, որոնք հիմնականում վերաբերում են անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքին կամ պատժին (հոդված 3), ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի (հոդված 5) խախտմանը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը շարունակում է ընդգծել ազատության, արժանապատվության և անձնական անձեռնմխելիության իրավունքի կարևորումը ժողովրդական հասարակությունում: Օրինակ՝ Սյուսարեն ընդդեմ Ռուսաստանի գործով դատարանը վճռել է, որ վատ տեսողություն ունեցող կալանավորին ակնոցի տրամադրման մերժումը նսեմացրել է նրա արժանապատվությունը և պատճառել հոգեկան տառապանք¹⁰:

⁷ Бадирян Г.М. Проблематика прав личности в новейшей истории Армении: Вопросы теории и практики. Ер., Автр. изд. 2006. С. 163–164:

⁸ Մասնավորապես՝ տես Հարությունյան Գ. Գ., Սահմանադրական մշակույթ. Պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Երևան, Նժար, 2005:

⁹ Տես Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք/ Պատ. խմբ. Այվազյան Ն.Ա., Երևան, 2008, էջ 227-228:

¹⁰ Annual Rapport 2010 of the European Court of Human Rights, Concil of Europe, France, June 2011 p.7985,102107; Արժանապատվության իրավունքի խախտման վերաբերյալ մանրամասն տե՛ս Slyusarev v. Russia, app.no. 60333/00, 20/07/2010; Jalloh c. Germany, app.no. 54810/00, 11/07/2006; Kalashnikov v. Russia, app.no. 47095/99, 15/10/2002, <https://www.legaltools.org/doc/ccaf82/pdf/,/ 12.05.2017/>:

Ավելի վաղ՝ Դե Վիլդ, Օմսը և Վերսիպն ընդդեմ Բելգիայի գործով, որի դեպքում դիմողները կամովին հանձնվել էին ոստիկանությանը կալանքի վերցվելու նպատակով, Եվրոպական դատարանը վճռեց, որ ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը ժողովրդրդավարական հասարակությունում չափազանց կարևոր է, ոչ այնքան, որ դրա ընձեռած պաշտպանության օգուտներից անձը չի կարող զրկվել կամովին՝ դրանից հրաժարվելու պահին, այլ նաև դրանից հետո՝ պարբերաբար, մինչև ազատվելը կամ դատարանի կողմից որոշակի ժամկետով ազատագրվման դատապարտվելը: Կոնվենցիայի 5-րդ հոդվածի բուն նպատակն է՝ երաշխավորել անհատի ֆիզիկական ազատության պաշտպանությունը կամայական կալանքից¹¹: Ավելացնենք նաև, որ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» վերտառությամբ ՀՀ Սահմանադրության 2-րդ գլուխն սկսվում է մարդու արժանապատվության իրավունքի ամրագրմամբ, քանզի վերջինս մարդու իրավունքների և ազատությունների հիմքում ընկած, հիմնարար նշանակություն ունեցող անքակտելի իրավունքն է: Ավելին՝ մարդուն հռչակելով բարձրագույն արժեք՝ օրենսդիրը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը դիտարկում է որպես հանրային իշխանության պարտականություններ՝ միաժամանակ մատնանշելով, որ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք¹²:

Համամիտ ենք իրավագետների այն դիրքորոշմանը, որ 2015թ. խմբագրությամբ Սահմանադրություն 3-րդ հոդվածի 3-րդ մասը, հիմնական իրավունքների հասցեատեր սահմանելով հանրային իշխանությանը, սկզբունքորեն բացառում է իրավունքների ուղղակի կիրառությունը մասնավոր անձանց միջև իրավահարաբերություններում¹³: Ընդ որում՝ եթե հիմնական իրավունքներն ուղղակիորեն կիրառելի լինեն քաղաքացի-քաղաքացի հարաբերություններում, այսինքն՝ մի քաղաքացին վկայակոչի իր հիմնական իրավունքը մեկ այլ քաղաքացու հետ իրավահարաբերություններում, ապա նույնը կարող է անել նաև այդ քաղաքացին՝ իր հերթին վկայակոչելով իր հիմնական իրավունքները: Մասնավոր անձանց միջև հիմնական իրավունքների ուղղակի կիրառման հետևանքով՝ անձի հիմնական իրավունքները, որոնք իրականում ուղղված են պետության դեմ, կվերածվեն իր համաքաղաքացիների հանդեպ յուրաքանչյուր անձի պարտականությունների:

Դրանով ամբողջությամբ կիմաստագրվի հիմնական իրավունքի բուն էությունը. ազատության ընդլայնման փոխարեն՝ հիմնական իրավունքները կդառնան ազատությունը սահմանափակող գործիք¹⁴: Այնուամենայնիվ, անձի հիմնական իրավունքներն իրենց ներգործությունն են իրականացնում մասնավոր իրավունքի ոլորտում, երբ պետությունը պարտավոր է հավասարակշռել իրավահարաբերության մասնակիցների հիմնական իրավունքները ծագած կոլիզիայի դեպքում, եթե առկա չէ որևէ հիմնարար պատճառ նախապատվությունը տալու կողմերից որևէ մեկին:

Վերոգրյալից ակնհայտ է, որ ոչ թե իշխանությամբ իրավունքն է սահմանափակվում, այլ իրավունքով՝ իշխանությունը: Առաջին հերթին՝ հենց սա է իրավունքի գերակայության երաշխավորման իմաստը: Այն սահմանադրությունները, որոնք նման որոշակիությամբ մեթոդաբանական այս մոտեցումը չեն որդեգրել, թերի են ու էապես անկատար: Պետությունը՝ իր երեք իշխանություններով հանդերձ, ինչպես նաև տեղական ինքնակառավարումը, հանդես են գալիս որպես մարդու իրավունքների և ազատությունների իրականացման մեխանիզմ: Ուստի սահմանադրական բարեփոխումների գլխավոր ուղղությունը դիտվեց մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքների ամրապնդումը, այդ իրավունքների հնարավոր սահմանափակման շրջանակների հստակեցումը՝ միջազգային իրավունքի,

¹¹ De Wilde, Ooms et Versyp c/Belgique, 18/06/1971, <https://www.globaldetentionproject.org/wpcontent/uploads/2016/06/DeWildeOomsandVersypvBelgium1971.pdf/>,/12.05.2017/:

¹² Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (փոփ. 06.12.2015թ.), հոդվ. 3, [http://www.president.am/hy/constitution 2015/](http://www.president.am/hy/constitution%202015/),/06.03.2017/:

¹³ Պողոսյան Վ., Սարգսյան Ն., նշված աշխ., էջ 27:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 28:

մասնավորապես՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի դրույթներից ելնելով:

Ընդհանրապես՝ ժողովրդավարական, իրավական պետության Հիմնական օրենքը, ամրագրելով մեթոդաբանական որոշակի դիրքորոշում մարդու իրավունքների ճանաչման ու պաշտպանության նկատմամբ, կանխորոշում է օրենսդրորեն դրա նյութական բնույթը, կառուցակարգային ապահովումը, ինչպես նաև համակարգային երաշխավորումը: Սահմանադրությունն ինքը չպետք է իրավունքի գերակայության սկզբունքի ամբողջական ու լիարժեք գործադրման արգելակ դառնա: Օրենքը, իր հերթին, դառնում է անհատի ազատության, անվտանգության և սեփականության պաշտպանը, նրա իրավունքների իրացման երաշխավորն այն դեպքում, երբ իրավական է, իր հիմքում ունի իրավունքի գերակայության սկզբունքը¹⁵:

Սահմանադրական հիմնական պահանջը մարդու բնական ու անօտարելի իրավունքների գերակայության, առաջնայնության, ելակետային բնույթի ճանաչումն ու ամրագրումն է: Եթե

չկա այդ ճանաչումը, ապա անխուսափելիորեն առաջին պլան կարող է մղվել իշխանության իրավունքի թելադրող դերը, իսկ Սահմանադրությունը, տվյալ դեպքում, «սահման կղնի» ոչ թե իշխանության իրավունքի, այլ՝ մարդկանց ազատությունների վրա՝ դրանով իսկ ամրագրելով բռնապետության սկզբունքներ: Նման պարագայում պետությունը հանդես կգա ոչ թե որպես հասարակության պահանջներից բխող միջոցների երաշխավոր, այլ՝ որպես վերացական անհրաժեշտություն, որն սկսում է գործել ինքնավերարտադրման սկզբունքով: Այդպիսի պետությունում օրենքը, իր հերթին, վերածվում է բռնության գործադրման, իրավունքների անհիմն սահմանափակման ակտիվ գործիքի:

Վերոգրյալից ակնհայտ է, որ անձի իրավունքները և ազատությունները միահյուսված են անձի արժանապատվության հետ, և դրանց սահմանափակումը չպետք է ոտնահարի արժանապատվությունը: Միևնույն ժամանակ՝ ժողովրդավարական իրավական պետությունում անձի արժանապատվությունը ճանաչվում է ոչ միայն Սահմանադրական կարգի հիմունք, այլև անձի սուբյեկտիվ իրավունք:



¹⁵ Մասնավորապես՝ տե՛ս Պողոսյան Վ., Սարգսյան Ն., նշված աշխ.: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ /Ընդհ. խմբ.՝ Հարությունյան Գ., Վաղարշյան Ա., Երևան, Իրավունք, 2010:

ԳԵՎՈՐԳ ՎԻՐԱԲՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրոս

ԱՊՐԱՆՔԻ ՊԱՏԱՀԱԿԱՆ ԿՈՐՄՏԻ ԿԱՄ ՎՆԱՍՎԱԾՔԻ ՌԻՍԿԻ ԱՆՅՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐՆ ԱՄԱՊ՝ ԿՈՆՎԵՆՅՈՒՄՅԻ ԵՎ ԻՆԿՈՏԵՐՄՍԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Միջազգային առուվաճառքի շրջանառության մասնակիցները, այն է՝ մեկը մի դեպքում որպես վաճառող, իսկ մեկ ուրիշն էլ՝ գնորդ, ազատորեն մտնելով առևտրային հարաբերությունների մեջ, որպես կանոն՝ ձգտում են իրենց միջև կնքված առուվաճառքի պայմանագրի հիման վրա ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարմամբ իրականացնել որոշակի նպատակներ: Ուստի միանգամայն բնական է, որ այդ պարտավորությունների կատարման և նպատակների իրագործման ճանապարհին չափազանց կարևոր նշանակություն է ձեռք բերում միջազգային առևտրային հարաբերություններին բնորոշ առանձնահատկությունների ու բարդությունների հաշվառմամբ մի շարք հարցերի և, ամենից առաջ՝ վաճառողից գնորդին ապրանքի կորստի կամ վնասվածքի ռիսկի անցմանը վերաբերող խնդիրների իրավական կարգավորումը:

Եվ ահա՝ Կ.Մ. Շմիտգոֆը նախորդ դարի 90-ական թվականների սկզբներին, ամենայն հավանականությամբ, վերը նշված հանգամանքները հաշվի առնելով և խորհելով արտաքին տնտեսական գործարքների, ներառյալ ապրանքի կորստի կամ վնասվածքի ռիսկի (այսուհետ նաև՝ **Ռիսկ**) անցման իրավական կարգավորման վերաբերյալ առկա մոտեցումների, հայեցակարգերի շուրջ՝ արտահայտվել է հետևյալ կերպ. «Ապրանքների միջազգային առուվաճառքի գործարքների կարգավորումը հնարավոր է երկու տարբերակով. առաջին՝ **պրագմատիկ** կամ, որ նույն է՝ **գործնական (կիրառական)**, որը ներառում է ժամանակակից միջազգային առևտրային շրջանառությանը համա-

հունչ առանձին խումբ հանգամանքների մասնակի իրավական կարգավորումը, և երկրորդ՝ **դոգմատիկ** մոտեցումը, ինչը նշանակում է այդ նույն հարաբերությունների ընդհանուր կարգավորումը կոնվենցիաների (առաջին հերթին՝ 1980 թվականի Վիեննայի կոնվենցիայի), տիպային օրենքների և նմանատիպ բնույթի այլ փաստաթղթերի միջոցով՝ մշակվող իրավաբան-միջազգայնագետների կողմից»²:

Սակայն հեղինակի նշված դատողությունն ընթերցելուց հետո, բնականաբար, հարց է առաջանում՝ այդ դեպքում որտեղ մնաց կամ, ավելի ճիշտ՝ ճիշտ է, ըստ հեղինակի, «առանձին խումբ հանգամանքների» մասնակի կարգավորման պրագմատիկ տարբերակը կամ, այլ կերպ ասած՝ ինչն է վերջիններիս իրավական կարգավորման համար հիմք հանդիսացող աղբյուրը միջազգային ապրանքաշրջանառությունում: Թերևս՝ համոզված ենք, որ յուրաքանչյուրիս համար ամենևին էլ դժվար չի լինի ողջամտորեն ենթադրել, թե ինչպես Կ.Մ. Շմիտգոֆը, այնպես էլ այդ բնագավառի ուսումնասիրությամբ զբաղվող նրա հասակակիցներն առանձին խումբ հարցերի, իսկ մեզ համար՝ առաջնահերթ նշանակություն ունեցող Ռիսկի իրավական կարգավորումը, բարդ առևտրային պրակտիկային համահունչ, տեսնում էին մասնավոր ունիֆիկացիոն ակտերի և, առաջին հերթին՝ գրի առնվող սովորության ժողովածուների միջոցով, իսկ ահա այդ մասնավոր ունիֆիկացիոն ակտերի շարքից ԱՄԱՊ կոնվենցիային զուգահեռ ամենից առաջ արտաբերում էին համարժեք մեկ բառ, այն է՝ ԻՆԿՈՏԵՐՄՍ³ (այսուհետ նաև՝ **Կանոններ**), որի առաջնային խնդիր-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 102 2017

¹ Ապրանքների միջազգային առուվաճառքի պայմանագրերի մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիա ՀՀԱԳՆՊՏ 2011.01.14/12(20), <http://www.arlis.am>:

² Տե՛ս Шмиттофф К.М., Экспорт: право и практика международной торговли / Пер. с англ.– М.: Юрид. литература, 1993, էջ 283:

³ Տե՛ս այդ մասին Шмиттофф К.М., նշված տեղում:

ներից մեկը (ներառյալ գլխավոր նպատակը), դեռևս 1936 թվականից սկսած, անշուշտ, վաճառողից գնորդին ապրանքի կորստի կամ վնասվածքի ռիսկի անցմանը վերաբերող հարցերի շուրջ միջազգային առևտրային շրջանառությունում ձևավորված սովորույթների մեկնաբանություններն են՝ արտահայտված առանձին տերմինների տեսքով:

Իհարկե, դատողություն, որը, անկասկած, հղի է նոր հարցադրմամբ. իսկ ինչո՞ւ է իրավագիտական միտքն ամբողջ աշխարհում պատվում, չնայած և իրենց իրավաբանական բնույթով մեկը մյուսից տարբերվող, բայց, միևնույն ժամանակ՝ միմյանց լրացնող երկու փաստաթղթի, այն է՝ ԱՄԱՊ կոնվենցիայի և Ինկոտերմսի շուրջ ապրանքի կորստի կամ վնասվածքի ռիսկի անցման տեսանկյունից: Չտալ այս հարցադրման պատասխանը, այլ միայն առանձին աշխատանքների շրջանակներում անդրադառնալ ապրանքի կորստի կամ վնասվածքի ռիսկի անցմանը վերաբերող Կանոնների առանձին եզրույթների կամ ԱՄԱՊ կոնվենցիայի համապատասխան հոդվածների մեկնաբանություններին, գրեթե համոզված ենք, որ այդ քայլով միանգամայն կհեռվանանք սույն աշխատանքի հիմքում դրված գաղափարից, այն գաղափարից, որը, առաջին հերթին, ուղղված է բացահայտելու ռիսկի անցման տեսանկյունից Ինկոտերմսի և Կոնվենցիայի նշանակությունը միջազգային առևտրային շրջանառությունում: Իսկ այդ դեպքում ի՞նչ է պատասխանը բարձացված հարցադրման, կամ, թերևս, ավելի ճիշտ կլինի ասել՝ ի՞նչ է ելքը ստեղծված իրավիճակում:

Անժխտելի է այն իրողությունը, որ իրավաբանական դոկտրինայում «**ռիսկ**» կատեգորիայի ուսումնասիրությանը նվիրված են բազում աշխատություններ⁴, որոնց շրջանակներում հեղինակներից յուրաքանչյուրը փորձել է

հաջողությամբ լուծել իր առջև դրված համապատասխան խնդիրներ: Այս առումով բացառություն չենք նաև մենք (այդ դեպքում ի՞նչ է մեր խնդիրը): Ուստի, հաշվի առնելով իրերի դրությունը՝ առաջարկում ենք վերոգրյալում բարձրաձայնված հարցադրման տեսանկյունից անդրադառնալ վաճառողից գնորդին ապրանքի կորստի կամ վնասվածքի ռիսկի փոխանցմանը վերաբերող այն բոլոր հարցերին, որոնք մեզ հնարավորություն կընձեռնեն բացահայտելու մեկ շղթայի շրջանակներում ԱՄԱՊ կոնվենցիան և Ինկոտերմսը միմյանց կապող բոլոր օղակները: Այս հարցադրման պատասխանը տալու համար հաճախ իրավաբանական գրականության մեջ արտահայտում են նաև միտքն առ այն, որ ԱՄԱՊ կոնվենցիան իր արմատներով հասնում է Lex mercatoria և դիտվում վերջինիս աղբյուրներից մեկը՝ միջազգային առևտրային սովորույթին, ներառյալ Ինկոտերմսին զուգահեռ⁵: Սակայն այս պահին խնդիր չունենալով անդրադառնալու նմանատիպ բնույթի հարցերի քննարկմանը՝ նպատակահարմար ենք համարում դեռևս բավարարվել միայն մեր առջև ծառայած հարցերի պատասխանը տալով՝ հույս ունենալով, որ ապագայում դեռ հնարավորություն կընձեռվի անդրադառնալու նաև ԱՄԱՊ կոնվենցիա-Lex mercatori-Ինկոտերմս եռակողմ կառուցվածքի էությանը և իրավաբանական բնույթին:

Ունիֆիկացիոն նորմերի ստեղծումը, ժամանակ առ ժամանակ, ենթադրում է ազգային օրենսդրությունների միջև առկա հակասությունների փոխզիջում: Ունիֆիկացիոն գործընթացը պարզապես տարբեր իրավական համակարգերից առանձին կանոններ փոխառելու արհեստական գործողություն չէ՝ բոլորի կողմից միատեսակ կիրառվող իրավական նորմեր ստեղծելու համար: Ընդհակառակն՝ դա ենթադրում է նորի ստեղծումը, առկա խնդիրների

⁴ Տե՛ս, օրինակ՝ Ойгензихт В.А., Проблемы риска в гражданском праве (Часть общая): Душанбе 1972, Хаскельберг Б.Л., Риск случайной гибели проданных вещей по советскому гражданскому праву // Ученые записки: Томский государственный университет им. В.В. Куйбышева 1954, юрид. науки N 23, Танев В.М., Понятие «риск» в гражданском кодексе РФ //Актуальные проблемы гражданского права. М., 2000, Кабышев О.А., Предпринимательский риск: Правовые вопросы: Автореферат дисс. канд. юрид. наук. М.: 1996, Хмелевской И.Н., Проблемы риска в гражданском законодательстве. Дисс. канд. юрид. наук. М.: 2001, Кастрюлин Д.Ф., Переход риска случайной гибели или случайного повреждения товара по договору международной купли-продажи: Дисс. канд. юрид. наук: Саратов, 2003:

⁵ Տե՛ս Chukwumerue O., Choic of Law in International Commercial Arbitration. Westport: QuorumBooks, 1994, էջ 115, Канашевский В.А., Внешнеэкономические сделки: материально-правовое и коллизионное регулирования. Wolters Kluwer.: 2008, 251-257:

լուծման որոշումների որոնումը, որը, բնականաբար, նպաստում է ժամանակակից միջազգային առևտրի զարգացմանը⁶: Ավելին՝ այդ գործընթացը միջազգային մասնավոր իրավունքի դոկտրինայում մեծ թվով մասնագետների կողմից համարվում է «իրավաբանական մտածողության գլոբալիզացիայի ուղղությամբ կատարված էական քայլ, միջազգային ունիֆիկացիայի նոր փուլ»⁷: Այլ կերպ ասած՝ ինչպես նշվում է իրավաբանական գրականության մեջ՝ եթե բնական գիտություններն ուսումնասիրում են երևույթները, որոնք կարող են լինել արձանագրված և փոփոխված, ապա միջազգային մասնավոր ունիֆիկացիոն նորմեր ստեղծող իրավաբան-գիտնականները պետք է հաշվի առնեն տարբեր իրավական հայեցակարգեր, որոնց տարբեր եղանակներով վերագրել են պատմական, տնտեսական, սոցիալ-մշակութային մի շարք հանգամանքներ: Ուստի ԱՄԱՊ կոնվենցիայի և Ինկոտերմսի միջև գոյություն ունեցող սերտ կապը քննարկվող տեսանկյունից դիտարկելու դեպքում թույլ է տրվում ձևավորել հետևյալ դատողությունը⁸:

Յուրաքանչյուր ոք, ով երբևէ առնչվել կամ ներկայումս առնչվում է այս երկու փաստաթղթի հետ, միանգամայն համակարծիք կլինի իրավաբանական գրականության ուսումնասիրության վրա հիմնված մեր այն մոտեցմանը, որի համաձայն՝ ինչպես ԱՄԱՊ կոնվենցիայում, այնպես էլ Ինկոտերմսում, ընդ որում, վերջինիս առաջին իսկ խմբագրականից սկսած՝ փորձ է արվել վերը նշված տեսանկյունից խուսափել վերացական կոնցեպցիաներ որդեգրելուց⁹: Դա առավել վառ դրսևորվում է ռիսկի անցմանը վերաբերող հարցերը կարգավորելիս: Եվ Կոնվենցիան, և՛ Ինկոտերմսն ընթացել են այն միևնույն ուղղությամբ, ըստ որի՝ ինչպես Կանոնների բոլոր եզրույթները (A4-A5 կետերը), այնպես էլ Կոնվենցիայում տեղ գտած համապատասխան նորմերը (66-69 հոդվածներ) ել-

նում են վաճառողից գնորդին՝ մատակարարման պարտականությունը կատարելու պահին ապրանքի կորստի կամ վնասվածքի ռիսկի անցման գաղափարից, այն է՝ երբ մի դեպքում, օրինակ, ապրանքը հանձնվում է առաջին փոխադրողին, մեկ այլ դեպքում, երբ գնորդն է ապրանքն ընդունում: Այլ կերպ ասած՝ երկու փաստաթուղթն էլ նախապատվությունը տվել են մեկ ընդհանուր կանոնին, որի համաձայն՝ ռիսկի անցումը տեղի է ունենում ապրանքի փոխանցման հետ և ամենևին էլ կապված չէ այլ հանգամանքների, մասնավորապես՝ սեփականության իրավունքի փոխանցման կամ պայմանագրի կատարման հետ¹⁰: Հետևաբար՝ ոչ Ինկոտերմսը, ոչ ԱՄԱՊ կոնվենցիան չեն կարգավորում ապրանքի նկատմամբ սեփականության կամ այլ գույքային իրավունքների փոխանցմանը վերաբերող հարցեր. անկասկած՝ առավել նկատելի հանգամանքներ, քան այնպիսի գաղափար, ինչպիսին որ կարող է լինել սեփականության կամ ապրանքի նկատմամբ որևէ այլ տիտղոսի իրավունքը:

ԱՄԱՊ կոնվենցիայի ու Ինկոտերմսի միջև գոյություն ունեցող սերտ կապն առավել ցայտուն ձևով է դրսևորվում «թե ինչ էլ ասել՝ ապրանքի կորստի կամ վնասվածքի ռիսկ» ձևակերպումը քննարկվող երկու աղբյուրի տեսանկյունից դիտարկելու դեպքում: Իսկ եթե ավելի պարզ, ապա ինչ ենք հասկանում՝ ապրանքի կորստի կամ վնասվածքի ռիսկ ասելով: Ընդ որում՝ այս հարցի պարզաբանումն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն:

Ա.Ս. Կոմարովը, նշված խնդիրը դիտարկելով ԱՄԱՊ կոնվենցիայի և Ինկոտերմսի հարթությունից, արձանագրում է, որ այս փաստաթղթերից ոչ մեկում ուղղակի ձևով չի բացահայտվում ռիսկ հասկացությունը: «Այնուամենայնիվ,– ինչպես նշում է հեղինակը,– նկատելի է, որ վերջինիս մեկնաբանությունների

⁶ Տե՛ս Кастрялин Д.Ф., նշված աշխատությունը, էջ 86:

⁷ Տե՛ս Вилкова Н.Г., Международные коммерческие контракты: теория и практика унификации правового регулирования: М., 2001 էջ 36:

⁸ Տե՛ս Кастрялин Д.Ф., նշված տեղում, էջ 86:

⁹ Տե՛ս, օրինակ՝ von Hoffman B., Passing of risk in International Sales Goods // Pettar Sarcevic & Paul Volken eds. International Sale Goods: Dubrovnik Lectures. New York: Osean, 1986, էջ 298-299:

¹⁰ Տե՛ս Рамберг Ян, Комментарий к Инкотермс 2010: понимание и прак. Применение, Публикация ICCN 720, пер. с англ. Вилкова Н.Г., М.: 2011, էջ 61-62, 124, 143-144:

մեջ սկզբունքային տարբերություններ ինչպես տարբեր երկրների իրավական համակարգերում, այնպես էլ միջազգային առևտրային պրակտիկայում ի հայտ չեն գալիս»¹¹: Սակայն, թերևս՝ մեր մեջ, հարգարժան Ա.Ս. Կոմարովի այս դատողությունը բոլոր դեպքերում ողջամիտ հարց է ծնում: Եթե նույնիսկ մի պահ ընդունենք, որ սկզբունքորեն խնդիրներ առաջ չեն գալիս, այդ դեպքում որո՞նք են բոլորի կողմից, թեկուզ և՛ շատ չնչին տարբերություններով ընդունված ռիսկ հասկացության վերաբերյալ առկա մեկնաբանությունները կամ գոնե դրանցից մեկը, որն ստացել է առավել համընդհանուր ճանաչում:

Բարձրացված հարցադրման պատասխանը տալու համար, մեր խորհին համոզմամբ՝ ավելի ճիշտ կլինի ըստ արժանվույն գնահատել այս հարցի վերաբերյալ իրավագիտության մեջ նախորդների և, ամենից առաջ՝ Բ.Լ. Խասկելբերգի կատարած աշխատանքը: Ուստի միանգամայն նպատակահարմար կլինի ելնել առուվաճառքի պայմանագրի շրջանակներում ապրանքի կորստի կամ վնասվածքի վերաբերյալ վերջինիս կողմից տրված բնորոշումից, չնայած այն հանգամանքին, որ այդ սահմանումը տրվել է դեռևս խորհրդային ժամանակաշրջանում, սակայն բոլորովին էլ չի կոցրել իր արդիականությունը, և դրա վերաբերյալ ժամանակին նույնիսկ իր հիացմունքն է արտահայտել խորհրդային ժամանակաշրջանի իրավագիտության դասականներից մեկը, այն է՝ Օ.Ս. Իոֆֆեն¹²: Մասնավորապես՝ Բ.Լ. Խասկելբերգն իր թեկնածուական ատենախոսության մեջ ապրանքի կորստի կամ վնասվածքի ռիսկը բնորոշել է այսպես. «Իրի կորստի կամ վատացման ի հայտ գալու վտանգ, իսկ դրա հետ կապված նյութական վնասը ոչ թե թերությունների, այլ՝ արտաքին ուժի ներգործության կամ թեկուզ դրան ներհատուկ ներքին հատկանիշների

հետևանք է, սակայն չդասվող թերությունների շարքին՝ քաղաքացիաիրավական իմաստով»¹³: Իհարկե, սա բնորոշում էր, տրված այն ժամանակ, երբ դեռ միայն նշմարվում էին ԱՄԱՊ կոնվենցիայի առանձին սաղմերը, որը (սահմանումը), սակայն, հետագա սերունդների համար պետք է չափանմուշ հանդիսանար Կոնվենցիային համահունչ ապրանքի կորստի կամ վնասվածքի բնորոշումը ձևակերպելիս: Իսկ ինչ վերաբերում է Ինկոտերմսին՝ նշված սահմանումը վերջինիս համար դեռևս այն ժամանակ, ինչպես որ կոտեսենք ստորև, կարող էր լիովին համարվել ընդունելի:

Անշուշտ, ԱՄԱՊ կոնվենցիայի ի հայտ գալուց հետո, ինչպես որ Ի.Ս. Զիկինն էր ցանկանում տալ առևտրային սովորույթի նոր բնորոշում¹⁴, այնպես էլ այս բնագավառով հետաքրքրվող մյուս իրավագետները փորձում էին բացահայտել ռիսկ հասկացությունը, դրա բնույթը, որը ներհատուկ կլիներ ինչպես Կոնվենցիայի, այնպես էլ Ինկոտերմսի էությանն: Ի վերջո՝ ռիսկը բնորոշվեց շատ պարզ և լակոնիկ՝ **վաճառվող ապրանքի չպահպանվածություն (կորուստ կամ վնասվածք), որն ի հայտ է գալիս պարահական իրադարձությունների կամ անհաղթահարելի ուժի հետևանքով՝ առուվաճառքի պայմանագրի մասնակիցների գործողություններից անկախ**¹⁵:

Մեր կարծիքով՝ նշված սահմանումը, մի կողմից, նախորդի, այն է՝ Բ.Լ. Խասկելբերգի կողմից տրված բնորոշման (1950 թվական) վերամարմնավորումն էր 20-րդ դարի մայրամուտին, մյուս կողմից՝ Կոնվենցիայի 66-րդ հոդվածում տեղ գտած **«Եթե միայն կորուստը կամ վնասվածքը չեն առաջացել վաճառողի գործողությունների կամ բացթողումների հետևանքով»** ձևակերպման և Ինկոտերմսում օգտագործվող **«ապրանքի կորուստ կամ վնասվածքի ռիսկ»** արտահայտության մեկնաբան-

¹¹ Sեն Комаров А.С., Переход риска случайной гибели или повреждения товара: Внешняя торговля. N 4-5, 1992, էջ 41:
¹² Sեն Хаскельберг Б.Л., Гражданское право: Избранные труды. Томск, ОАО «Издательство» «Красное знамя», 2008, էջ 17-18:
¹³ Sեն Хаскельберг Б.Л., Переход права собственности по договору купли-продажи в советском гражданском праве: Дисс. канд. юрид. наук. Л.: 1950, էջ 389:
¹⁴ Sեն Зыкин И.С., Обычаи и обыкновения в международной торговле: понятие, применение, формирование, применимое право и типовые контракты. М.: 1983, էջ 13:
¹⁵ Sեն Венская конвенция о договорах международной купли-продажи товаров: Комментарий. Под ред. Комарова А.С., М.: 1994, էջ 157:

նումն էր դոկտորինալ մակարդակով և, միննույն ժամանակ՝ անցյալի ու ներկայի ամփոփումը մեկ նախադասության շրջանակներում: Իսկ թե դա ինչպես կարող է պատահել, ընդ որում՝ բուլղոսի չի բացառվում, որ կարող է հնչեցվել նաև նման հարցադրում, ականատես կլինենք ներքոշարադրյալում:

Նախ և առաջ՝ երբ Կոնվենցիայի 66-րդ հոդվածում, Ինկոտերմսի A5 և համապատասխանաբար B5 կետերում հղում է կատարվում ռիսկի անցմանը, օգտագործվում է «ապրանքի կորուստ կամ վնասվածք» արտահայտությունը: Վերջինս նշանակում է հենց ապրանքի փաստացի կորուստը կամ վնասվածքը, որը չի ներառում այնպիսի ռիսկեր, ինչպիսիք են, օրինակ, պայմանագրի հետաձգումը կամ չկատարումը տարբեր պատճառներով¹⁶:

Երկրորդ՝ ապրանքի կորուստի կամ վնասվածքի ռիսկի անցումը վաճառողից գնորդին վերաբերում է պատահական իրադարձություններին և չի շոշափում այն դեպքերը, երբ ապրանքը կորսվել կամ վնասվել է վաճառողի կամ գնորդի գործողությունների, օրինակ՝ ապրանքի ոչ ճիշտ փաթեթավորման կամ սխալ մակերևման հետևանքով¹⁷: Այդ իսկ պատճառով էլ, եթե նույնիսկ ապրանքի կորուստը կամ վնասվածքը տեղի է ունեցել ռիսկի անցումից հետո, վաճառողը բոլոր դեպքերում կարող է կրել պատասխանատվություն, եթե այդպիսի կորուստը կամ վնասվածքը ապրանքը պայմանագրի պայմաններին չհամապատասխան փոխանցելու հետևանք էր¹⁸: Այլ կերպ ասած՝ պատահական պետք է դիտել ապրանքի կորուստը կամ վնասվածքն այնպիսի հանգամանքների առկայության դեպքում, երբ անհնարին կլիներ կանխատեսել նույնիսկ իրավահարաբերության մաս-

նակիցների լիարժեք բարեխղճության առկայության դեպքում: Սակայն ապրանքի կորուստի կամ վնասվածքի հետևանքները պարզաբանելու դեպքում, ինչպես նշվում է իրավաբանական գրականության մեջ, դատարանը և արբիտրաժը յուրաքանչյուր կոնկրետ գործով ազատված չեն «արդյոք նման իրավիճակում առկա չի եղել կողմերի կամ կամ փոխադրողի մեղքը, և արդյոք կորուստը ունեցել է պատահական բնույթ» հարցադրումը հանգամանորեն պարզաբանելու պարտականությունից¹⁹:

Երրորդ՝ վաճառողից գնորդին ապրանքի կորուստի կամ վնասվածքի ռիսկի անցման տեսանկյունից՝ ԱՄԱՊ Կոնվենցիայի և Ինկոտերմսի միջև սերտ կապը դրսևորվում է «պարտավոր է արդյոք գնորդը վճարել գինը, չնայած ապրանքը կորսված կամ վնասված է» հարցադրման համատեքստում, որը գերմանական դոկտորինայում ստացել է, այսպես կոչված, «գնի ռիսկ» անվանումը (Preisgefahr)²⁰: Վերջինս (գնի ռիսկը) գնորդի կողմից ապրանքի գինը վճարելու պարտականությունից ազատվելու ընդհանուր կանոնից նախատեսված բացառություն է, որի էությունը դրսևորվում է հետևյալում. գնորդը պարտավոր է վճարել գնման գինը, չնայած վաճառողն այլևս պարտավոր չէ մատակարարել ապրանք²¹: «Գնի ռիսկի հայեցակարգը, – գրում է Ս.Մ. Շմիտտոֆը, – իր հստակ արտացոլումն է գտել 1964 թվականի Ապրանքների միջազգային առուվաճառքի մասին միասնական օրենքում, որի համաձայն՝ եթե ռիսկն անցել է գնորդին, ապա նա պարտավոր է վճարել գինը՝ չնայած ապրանքի կորուստին կամ վնասվածքին... Ռիսկի փոխանցման դրույթներն Ինկոտերմսում նույնպես հիմնված են համանման հայեցակարգի վրա, թեկուզ և չեն բու-

¹⁶ Sfn Комментарий к Инкотермс 2000. Толкование и практическое применение. Публикация МТП N 620. Пер. с англ., М.: 2001, էջ 75:

¹⁷ Sfn Кастрюлин Д.Ф., Переход риска случайной гибели или случайного повреждения товара по договору международной купли-продажи: Дисс. канд. юрид. наук: Саратов, 2003, էջ 17: Ramberg Jn, ICCGuidetoIncoterms 2010, էջ 89:

¹⁸ Sfn Germany 24 March 1999 District Court Flensburg In Case law on UNCISTRAL texts (CLOUT) abstract no. 377 // <http://cisgw3.law.pace.edu/cases/990324g2.html> 24.03.2017:

¹⁹ Sfn Крылова З.Г., О моменте перехода права собственности (права оперативного управления) по договору поставки // Вопросы Советского государства и права. Труды Иркутского университета имени А.А. Жданова. 1967. Том XLV. Вып. 8, часть 3, էջ 10:

²⁰ Sfn Shmittthoff S.M., The risk of Loss in Transit in International Sales // Clive S. Shmittthoff' Select Essays on International Law: Boston / Lomdon 1988, էջ 279-280:

²¹ Sfn Медкус Д., Отдельные виды обязательств в Германском уложении // Проблемы гражданского и предпринимательского права Германии. Пер. с нем. М.: 2001, էջ 81:

վանդակում ուղղակի հղում գնի վճարման վերաբերյալ»²², – դատողություն, որը ներկայումս նույնպես լիովին համապատասխանում է իրերի դրությանը:

Մասնավորապես՝ ինչպես որ Ինկոտերմս 2010-ը, ըստ որի՝ «ռիսկի ի հայտ գալու դեպքում, որի մասին խոսվում է 11 եզրույթներում, գնորդը պարտավոր է վճարել ապրանքի գինը, եթե նույնիսկ ապրանքն ստացվել է այնպիսի վիճակում, որը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, կամ ապրանքն ամբողջովին կորսվել է»²³, այնպես էլ ԱՄԱՊ կոնվենցիայի 66-րդ հոդվածը ելնում է նշված հայեցակարգից, այն է՝ եթե ռիսկն անցել է գնորդին, ապա վերջինս պարտավոր է վճարել ապրանքի դիմաց՝ չնայած վերջինիս կորստին կամ վնասվածքին²⁴: Ահա և սրանում էլ դրսևորվում է «գնի ռիսկի» ողջ էությունը քննարկվող երկու փաստաթղթում:

Չորրորդ՝ որպես օրենսդրական տեխնիկայի չափանմուշ՝ երկուսի դեպքում էլ պարզ և մատչելի լեզվի օգտագործումն է²⁵, որը վկայակոչում է այն առարկաներն ու իրադարձությունները, որոնց համար բոլոր լեզուներով գոյություն ունեն ընդհանուր բովանդակության բառեր: Այս հանգամանքն էլ հաշվի առնելով՝ իրավաբանական գրականության մեջ, ընդ որում՝ լիովին արդարացիորեն, նշվում է. **«Չպետք է օգտագործել երկիմաստ արտահայտություններ և, ամենից առաջ՝ իրավական նորմում պետք է հստակ շարադրվի, ինչպես դա արտացոլված է Կոնվենցիայում և Կանոնների բոլոր եզրույթներում, կողմերի կողմից պայմանագրի կարարման բոլոր փուլերը»**²⁶: Այլ կերպ ասած՝ վաճառողից գնորդին ապրանքի կորստի կամ վնասվածքի ռիսկի անցմանը վերաբերող խնդիրներին անդրադառնալիս ԱՄԱՊ

կոնվենցիան և Ինկոտերմսը մշակելիս բոլոր ջանքերը գործադրվել են նշված երկու փաստաթղթում օգտագործվող արտահայտությունների շուրջ առավելագույն չափով հնարավոր և ցանկալի համաձայնության հասնելու համար: Այդ կերպ հաջողվել է խուսափել միևնույն արտահայտությունների ձևակերպման համար տարատեսակ եզրույթներ օգտագործելուց: Ավելին՝ ինչպես նշում է Գ. Յու. Ֆեդոսևան՝ հնարավորության դեպքում Ինկոտեմս 2000²⁷, իհարկե, նաև 2010 ժողովածուները խմբագրելիս, օգտագործվել են Կոնվենցիայում տեղ գտած մի շարք ձևակերպումներ, ինչը, անշուշտ, հնարավորություն է ընձեռել խուսափելու, այսպես կոչված, «թաքնված կոլիզիաներից», ինչը միջազգային մասնավոր իրավունքում օգտագործվող հասկացություն է այնպիսի իրավիճակները պարզաբանելու համար, որոնց դեպքում տարբեր պետությունների ազգային օրենսդրություններում բովանդակվում են բառացի միմյանց համընկնող եզրույթներ՝ տարբեր բովանդակությամբ շնորհիվ²⁸:

Վերջին առանձնահատկությունը, որին կցանկանայինք անդրադառնալ ստորև՝ ապրանքի կորստի կամ վնասվածքի ռիսկի անցման տեսանկյունից, և որը դարձյալ ներհատուկ է և՛ ԱՄԱՊ կոնվենցիային, և՛ Ինկոտերմսին, դրսևորվում է, երբ խնդիրը (ռիսկի անցումը) դիտարկում ենք ըստ կնքվող առուվաճառքի պայմանագրի բնույթի, կամ, որ նույն է՝ վաճառողի կողմից ապրանքի մատակարարման իր պարտավորությունների կատարման ծավալի: Մասնավորապես՝ Կոնվենցիայի 66-69-րդ հոդվածների և Կանոնների 11 եզրույթների ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնել կնքվող պայմանագրերի հետևյալ խումբ դասակարգումը, որից ելնելով էլ որոշվում է

²² Sten Shmittthoff S.M., նշված աշխատությունը, էջ 280:

²³ Sten Рамберг Ян, Комментарий к Инкотермс 2010: понимание и прак. Применение, Публикация ICCN 720, пер. с англ. Вилкова Н.Г., М.: 2011, էջ 125:

²⁴ Sten Кастрюлин Д.Ф., Переход риска случайной гибели или случайного повреждения товара по договору международной купли-продажи: Дисс. канд. юрид. наук: Саратов, 2003, էջ 23:

²⁵ ԱՄԱՊ կոնվենցիայի առավելությունների, ներառյալ լեզվական ոճի մասին առավել մանրամասն տե՛ս Հայկյանց Ա.Մ., Ապրանքների միջազգային առուվաճառքի իրավական կարգավորումը, Եր.: «Ասողիկ», 2011թ., էջ 70-76:

²⁶ Sten RothP.M., The Passing of Risk // American Journal of Comparative Law. 1999, Vol. 27 N 3&2 (Spring/Summer), էջ 291-310:

²⁷ Sten Кастрюлин Д.Ф., Переход риска случайной гибели или случайного повреждения товара по договору международной купли-продажи: Дисс. канд. юрид. наук: Саратов. 2003 էջ 87:

²⁸ Sten Федосева Г.Ю., Международное частное право: Учебник. М.: 2000, էջ 111:

վաճառողից գնորդին ապրանքի կորստի կամ վնասվածքի ռիսկի անցման պահը: Ընդ որում՝ ցանկանում ենք նշել, որ այս դասակարգումը երկու փաստաթղթի համադրման արդյունքով կատարվում է Ինկոտերմսի և Կոնվենցիայի հիմքում դրված ռիսկի փոխանցման մեխանիզմներն առավել հասկանալի և մատչելի դարձնելու համար: Մասնավորապես՝

- ապրանքի փոխանցում նախատեսող առուվաճառքի պայմանագիր՝ առանց վաճառողի կողմից ապրանքը փոխադրելու պարտականության, ինչը համապատասխանում է ԱՄԱՊ կոնվենցիայի 69-րդ հոդվածի 1-ին մասին և Ինկոտերմս E կատեգորիայի EXW եզրույթին,
- առուվաճառքի պայմանագիր՝ ապրանքի առաքման կամ բեռնաբարձման հետ, որի համաձայն՝ վաճառողն ապրանքը պետք է հանձնի որոշակի վայրում: Այս դասակարգումը համարժեք է Կոնվենցիայի 67-րդ հոդվածին, ինչպես նաև Ինկոտերմսի F և C կատեգորիաներին, և՛
- առուվաճառքի պայմանագիր, որը նախատեսում է ապրանքը նշանակման վայր տեղ հասցնելու վաճառողի պարտականությունն: Այս դեպքում վաճառողը ոչ միայն պարտավոր է ապրանքն ուղարկել գնորդին, այլ նաև պատաս-

խանատու է ապրանքի նշանակման վայր ժամանելու համար²⁹. դասակարգում, որն ամբողջովին արտացոլում է Կոնվենցիայի 69-րդ հոդվածի 2-րդ մասում և Ինկոտերմսի D կատեգորիայի երեք եզրույթներում արտացոլված ներկայիս միջազգային առևտրային պրակտիկային համահունչ սովորության կանոնների առանձնահատկությունները:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոգրյալը, կարծում ենք՝ պետք է հաջողված համարել ինչպես **«ինչո՞ւ է իրավագիտական միտքն ամբողջ աշխարհում պտտվում, չնայած և իրենց իրավաբանական բնույթով մեկը մյուսից փարբերվող, բայց, միևնույն ժամանակ՝ միմյանց լրացնող երկու փաստաթղթի, այն է՝ ԱՄԱՊ կոնվենցիայի և Ինկոտերմսի շուրջ ապրանքի կորստի կամ վնասվածքի ռիսկի անցման տեսանկյունից»** հարցադրումն առանձնացնելու նպատակահարմարությունը, այնպես էլ վերոշարադրյալում այդ նույն հարցադրման քննարկման համար ելակետ ընդունված ենթահարցերը, որոնք հնարավորություն ընձեռեցին ապրանքի կորստի կամ վնասվածքի ռիսկի անցմանը վերաբերող հարցերը պարզաբանելու ԱՄԱՊ կոնվենցիայի և Ինկոտերմսի տեսանկյունից՝ հավաստելով վերջիններիս կարևորությունը միջազգային առևտրային շրջանառությունում:



²⁹ Նշված դասակարգման մասին տե՛ս Телицин В.М., Договор продажи товаров по англо-американскому праву. Автореферат дисс. канд. юрид. наук. М.: 1971 էջ 7-8: Buydaert M., The passing of risk in the International sale of goods. A comparison between the CISG and the Incoterms, G.: 2013, էջ 82-90:

ԶԱՐԻՆԵ ԱԶԻԶՅԱՆ

«ԱԿՔԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ՔԱՆԿ» ՓԲԸ

Բիզնես գործընթացների իրավական սպասարկման բաժնի պետ

ՀԱՋՈՐԴՈՂ ԳՐԱՎԻ ՆՈՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Հաջորդող գրավը լայնորեն կիրառվում է ֆինանսական կազմակերպությունների կողմից որպես պարտավորությունների կատարման ապահովման միջոց և Հայաստանի Հանրապետությունում հատկապես տարածում է ստացել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում 23 հուլիսի 2016թ. կատարված փոփոխություններից հետո, ինչի հետևանքով՝ ազատականացվեց հաջորդող գրավը. «Գրավ դրված գույքը կարող է դառնալ այլ գրավի առարկա (հաջորդող գրավ): Գրավ դրված գույքն այլ գրավի (հաջորդող գրավի) առարկա դարձնելու գրավատուի իրավունքը սահմանափակող համաձայնությունն առ ոչինչ է»:¹

Հաջորդող գրավի ազատականացումը խթանեց թե՛ ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրվող ֆինանսավորումների աճը և՛ թե՛ ֆինանսական կազմակերպությունների շահառուների՝ ֆինանսավորման գոյություն ունեցող լավագույն պայմաններով ֆինանսավորում ստանալու հնարավորությունը:

Ֆինանսական շուկայում ստեղծվել էր մի իրավիճակ, երբ ֆինանսական կազմակերպություններն իրենց հաճախորդներին չկորցնելու նպատակով սահմանափակում էին վերջիններիս իրավունքն իրենց սեփականություն հանդիսացող գույքը հաջորդող գրավի սկզբունքով այլ ֆինանսական կազմակերպությունում գրավադրելու համար՝ չտալով հաջորդող գրավի համաձայնություն, կամ հաջորդող գրավի համաձայնություն տալու համար կիրառում էին այնքան մեծ սակագներ, որ հաճախորդների համար այլևս շահեկան չէր լինում հաջորդող գրավի ապահովմամբ ֆինանսավորում ստանալ այլ ֆինանսական կազմակերպությունից,

որը, սակայն, անհամեմատ բարենպաստ պայմաններ էր առաջարկում:

Առաջացած խնդիրները լուծելու նպատակով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարվեցին որոշակի փոփոխություններ՝ հաջորդող գրավի կարգավորման հետ կապված:

Չնայած այն հանգամանքին, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կարելի էր հետադարձ ուժ նախատեսել հաջորդող գրավի ազատականացման նպատակով ընդունված օրենքին,² սակայն անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ կատարված փոփոխությունը հետադարձ ուժ չի նախատեսում և կարող է տարածվել միայն նոր ընդունված օրենքի իրավական ուժ ստանալուց՝ 23 հուլիսի 2016թ. հետո ծագած իրավահարաբերությունների վրա, իսկ մինչ այդ ամսաթիվը գրավադրված գույքերի հաջորդող գրավի պայմանագիր կնքելիս անհրաժեշտ է առաջնորդվել առաջնային գրավառուի հետ կնքված գրավի պայմանագրով սահմանված կարգավորումներով, որոնք, որպես կանոն, նախատեսում են, որ առանց առաջնային գրավառուի համաձայնության հաջորդող գրավի պայմանագրեր չեն կարող կնքվել:

1. Հաջորդող գրավի փոփոխված կարգավորումները Եվրոպայում և Ռուսաստանի Դաշնությունում

Եվրոպական առաջադեմ երկրներում, մասնավորապես՝ Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայի Հանրապետությունում, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնությունում, նույնպես 2013թ. սկսած, հաջորդող գրավի կարգավորումների հետ կապված փոփոխություններ են կատար-

¹ ՀՀ քաղաքացիական օրենսգրք, 236-րդ հոդված, 1-ին մաս:

² «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, 78-րդ հոդված, 3-րդ մաս:

վել: Սակայն հետաքրքրական է այն փաստը, որ վերը թվարկված բոլոր երկրներում հաջորդող գրավի հետ կապված ներդրված կարգավորումներն զգալիորեն տարբերվում են միմյանցից:

Եվրոպական երկրներում, հիմնականում՝ Մեծ Բրիտանիայում, մեծ թիվ են կազմում հաջորդող գրավի ապահովմամբ ֆինանսավորումների տրամադրման գործարքները: Այնտեղ առկա են մեծ թվով հատուկ մասնագիտացված կազմակերպություններ, որոնք խորհրդատվական ծառայություններ են մատուցում հաճախորդներին՝ հաջորդող գրավի սկզբունքով իրենց սեփականությունը գրավադրելով ֆինանսավորում ստանալու համար՝ հաշվարկելով դրա շնորհիվ հաճախորդների ծախսերի նվազեցման հնարավորությունը:³

Մեծ Բրիտանիայում հաջորդող գրավով ֆինանսավորման ստացման նպատակը պարտավորությունների կոնսոլիդացումն ու պայմանների բարելավումն է:⁴ Մեծ Բրիտանիայում հաջորդող գրավը նույնացվում է վերաֆինանսավորման հետ, այսինքն՝ գրավադրված գույքը այլ ֆինանսական կազմերպությունում գրավ դնելով և ֆինանսավորման ավելի բարենպաստ պայմաններ ստանալով՝ մարել նախորդ ֆինանսական կազմակերպության հանդեպ այդ նույն գույքի գրավով ապահովված պարտավորությունը: Մեծ Բրիտանիայում հաջորդող գրավը թույլատրվում է «Սեփականության մասին» Մեծ Բրիտանիայի օրենքով, որով հաջորդող գրավի կնքման որևէ սահմանափակում չի նախատեսվում:⁵

Ֆրանսիայի Հանրապետությունում կատարված փոփոխություններից հետո հաջորդող գրավի կարգավորումները, ըստ գրավի տեսակների, տարբերվում են. շարժական գույքի հաջորդող գրավը թույլատրվում է Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, և շարժական գույքի հաջորդող

գրավի կնքման որևէ սահմանափակումներ նախատեսված չեն:⁶ Իսկ ինչ վերաբերում է անշարժ գույքի հաջորդող գրավին՝ վերջինիս հետ կապված Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում նախատեսված կարգավորումների համաձայն՝ անշարժ գույքի հաջորդող գրավը թույլատրվում է միայն այն դեպքում, եթե նախատեսված է առաջնային գրավի պայմանագրով:⁷ Բացի այդ՝ հարկ է նշել, որ առաջնային գրավառուն նաև կարող է սահմանել, թե ինչ չափով տվյալ անշարժ գույքը կարող է դառնալ նոր վարկառուի համար որպես պարտավորությունների ապահովման միջոց:⁸

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ եվրոպական առաջադեմ երկրներում հաջորդող գրավը կիրառվում է ոչ թե միևնույն գույքի գրավով ապահովված մի շարք վարկային պարտավորություններով հաճախորդներին ծանրաբեռնելու համար, այլ ծառայում է որպես վերաֆինանսավորում ստանալու գործիք՝ առաջնային գրավառուի հանդեպ պարտավորությունները մարելու և այդ գույքի գրավով նոր ֆինանսավորում ստանալու միջոցով բարելավելով հաճախորդների ֆինանսավորման պայմանները:

Ռուսաստանի Դաշնությունում հաջորդող գրավի կնքման հետ կապված կարգավորումները վերաբերում են բոլոր տեսակի գրավներին և ավելի խորքային են կարգավորում հաջորդող գրավի կնքման հետևանքով առաջացող հնարավոր հետևանքները: Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքով թույլատրվում է հաջորդող գրավը, և որևէ սահմանափակումներ չեն նախատեսվում վերջինիս կնքման համար, սակայն կողմերին հնարավորություն է ընձեռվում պայմանավորվելու գրավադրման առաջնահերթության և դրա իրականացման պայմանների շուրջ:⁹ Սակայն նշենք, որ օրենսդրության նման կարգավորու-

³ <http://www.remortgage-search.com/guides/the-remortgage-process>

⁴ EU mortgage credit directive consultation - GOV.UK

⁵ Law of Property Act 1925, Part 3, article 86.

⁶ Code civil – Dernière modification le 02 mars 2017 – Document généré le 11 septembre 2017, article 2340.

⁷ Code civil – Dernière modification le 02 mars 2017 – Document généré le 11 septembre 2017, article 2422.

⁸ INC Document etude L'hyphothèque rechargeable – Corinne Lamoussiere-Pouvreau et Emmanuel Masset-Denevre.

⁹ Гражданский кодекс Российской Федерации (с изменениями, внесенными в соответствии с Федеральным законом от 07.02.2017 N 12-ФЗ), статья 342.

մը պրակտիկայում կարող է հանգեցնել հաջորդող գրավի կնքման արգելքի. առաջնային գրավառուն, օգտվելով այդ կարգավորումից, կարող է համաձայնեցնել, որ, նախքան հաջորդող գրավի կնքումը անհրաժեշտ է ստանալ առաջնային գրավառուի համաձայնությունը:¹⁰

2. Հաջորդող գրավի փոփոխված կարգավորումները ՀՀ-ում

Հայաստանի Հանրապետությունում հաջորդող գրավի ազատականացման շնորհիվ ֆինանսական կազմակերպություններն ակտիվորեն սկսեցին կիրառել հաջորդող գրավը՝ առանց առաջնային գրավառուի հանդիսացող ֆինանսական կազմակերպության համաձայնությունը ստանալու անհրաժեշտության մեկ ֆինանսական կազմակերպությունում գրավադրված գույքը այլ ֆինանսական կազմակերպությունում գրավադրելով: Սակայն կատարված փոփոխությունները, միևնույն ժամանակ, բազմաթիվ չկարգավորված հարցեր են պարունակում, որոնք հետագայում ֆինանսական կազմակերպությունների համար կարող են լուրջ խնդիր դառնալ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նոր կարգավորման համաձայն՝ հաջորդող գրավը կարող է կնքվել առանց առաջնային գրավառուի համաձայնության:

Առանց առաջնային գրավառուի համաձայնության հաջորդող գրավի սկզբունքով Հայաստանի Հանրապետությունում կնքվում են երկու տեսակի գործարքներ.

1. Առաջնային գրավով ապահովված պարտավորության կատարմամբ հաջորդող գրավ.

2. Միևնույն գույքի գրավով ապահովված մեկից ավելի պարտավորությունների ծագմամբ հաջորդող գրավ:

Թե՛ առաջին և թե՛ երկրորդ տեսակն ունի և՛ խնդիրներ, և՛ առավելություններ, որոնք բացահայտելու համար նախ և առաջ անհրաժեշտ է որոշակիացնել դրանցից յուրաքանչյուրի նշանակությունը, այնուհետև անդրադառնալ յուրաքանչյուրի խնդիրներին և առավելություններին:

2.1. Առաջնային գրավով ապահովված պարտավորության կատարմամբ հաջորդող գրավ.

Առաջնային գրավով ապահովված պարտավորության կատարմամբ հաջորդող գրավը ֆինանսական կազմակերպությունում գրավադրված գույքը հաջորդող գրավի սկզբունքով մեկ այլ ֆինանսական կազմակերպությունում գրավադրելու և վերջինիցս ավելի բարենպաստ պայմաններով ֆինանսավորում ստանալու միջոցով առաջին ֆինանսական կազմակերպությունում միևնույն գույքի գրավադրմամբ ապահովված պարտավորությունների կատարումն է:

Հաջորդող գրավի այս տեսակը, որպես ֆինանսավորում ստանալու գործիք, ամենատարածվածն է ֆինանսական շուկայում, քանի որ հաջորդող գրավի այս տեսակի կիրառմամբ ֆինանսական կազմակերպություններն իրավական ռիսկի առումով անհամեմատ պաշտպանված են: Եվ առաջնային, և՛ երկրորդային գրավառուի հանդիսացող ֆինանսական կազմակերպությունները հաջորդող գրավի այս տեսակի դեպքում կարողանում են գործող հնարավոր եղանակներով համեմատաբար զսպել իրենց իրավական ռիսկերը:

Մասնավորապես՝ երկրորդ գրավառուն, ֆինանսավորում տրամադրելով իր հաճախորդին, ֆինանսավորման գումարը հաճախորդին վճարելու փոխարեն՝ փոխանցում է առաջնային գրավառուի հանդիսացող ֆինանսական կազմակերպությանը, որպեսզի ամբողջությամբ մարվեն այն նույն գույքի գրավով ապահովված ֆինանսական պարտավորությունները, և այդ գույքի նկատմամբ տվյալ ֆինանսական կազմակերպության գրավի իրավունքը դադարի գործել: Այդ դեպքում գրավի առարկայի արժեքից երկրորդային բավարարման իրավունք ունեցող ֆինանսական կազմակերպությունը ձեռք է բերում գույքի արժեքից առաջնային բավարարման իրավունք՝ հանդիսանալով որպես առաջնային գրավառու:

Սակայն այս մեխանիզմը նույնպես ունի իր ռիսկերը, և միշտ չէ, որ դա կիրառելով՝ ֆինանսական կազմակերպությունները հասնում

¹⁰ ACC Resource Library. Top 10. Things to Know About the New Pledge Regulations in Russia-Eldar Mansurov and Svetlana Seregina.

են իրենց համար ցանկալի արդյունքին: Հանդիպում են դեպքեր, երբ երկրորդային գրավառուն, չկարողանալով ստանալ առաջնային գրավառուից տվյալ գույքի գրավով ապահովված պարտավորությունների չափի մասին հավաստի տեղեկատվություն՝ չի կարողանում ամբողջությամբ մարել առկա պարտավորությունները և, որպես արդյունք՝ առաջնային գրավառուի՝ տվյալ գույքի նկատմամբ գրավի իրավունքը չի դադարում:

Խնդրի լուծում

Վերը նշված խնդրի լուծման տարբերակ կարող է հանդիսանալ այն, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով հաջորդող գրավի կնքման համար երկրորդ և յուրաքանչյուր հաջորդող գրավառուների համար որպես պարտավորություն սահմանվի նախորդող բոլոր գրավառուներին հաջորդող գրավի կնքման մասին ծանուցում իրականացնել՝ միաժամանակ առաջին և բոլոր նախորդող գրավառուների համար որպես պարտավորություն սահմանելով ծանուցումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրերի ընթացքում երկրորդ և յուրաքանչյուր հաջորդող գրավառուներին տեղեկացնել այդ գույքի գրավով ապահովված պարտավորությունների չափի մասին:

Հակառակ դեպքում, ճիշտ է, ներկայիս կարգավորման պայմաններում հաջորդող գրավի կնքման համար առաջնային գրավառուի համաձայնությունը չի պահանջվում, սակայն ֆինանսական կազմակերպություններն իրենց հաճախորդներին չկորցնելու նպատակով նոր ֆինանսավորում իրականացնող կազմակերպությանը հրաժարվում են տրամադրել տեղեկատվություն այդ գույքի գրավով ապահովված պարտավորությունների չափի մասին, ինչը կարող է հանգեցնել այն արդյունքին, որ նոր ֆինանսավորող կազմակերպությունը, իր ռիսկերը հաշվի առնելով, գուցե հրաժարվի ֆինանսավորել հաճախորդին, ով ցանկանում է իր պարտքը տեղափոխել այլ ֆինանսական կազմակերպություն և սպասարկվել իր համար ավելի բարենպաստ պայմաններով:

Հաջորդող գրավի այս տեսակի առավելությունն այն է, որ հաճախորդները լրացուցիչ ֆինանսական պարտավորություններով չեն

ծանրաբեռնվում և պարզապես իրենց պարտավորություններն ամբողջությամբ տեղափոխում են մեկ այլ ֆինանսական կազմակերպություն, որն ավելի բարենպաստ պայմաններ է նրանց առաջարկում:

Ֆինանսական կազմակերպությունների համար հաջորդող գրավի այս տեսակը նույնպես որոշակի առավելություններ է ստեղծում, մասնավորապես՝ հետագայում միևնույն գույքի գրավով ապահովված պարտավորությունների չկատարման դեպքում առաջանում է գրավի առարկայի բռնագանձման անհրաժեշտություն, իսկ գրավի առարկայի բռնագանձումը մի քանի գրավառուի առկայության պարագայում նույնպես բազմաթիվ խնդիրներ է առաջացնում, մինչդեռ միակ գրավառու հանդիսանալու պարագայում ֆինանսական կազմակերպությունը կարողանում է անխոչընդոտ իրականացնել գրավի առարկայի բռնագանձումը:

2.2. Միևնույն գույքի գրավով ապահովված մեկից ավելի պարտավորությունների ծագմամբ հաջորդող գրավ.

Միևնույն գույքի գրավով ապահովված մեկից ավելի պարտավորությունների ծագմամբ հաջորդող գրավը ֆինանսական կազմակերպությունում գրավադրված գույքը հաջորդող գրավի սկզբունքով մեկ այլ ֆինանսական կազմակերպությունում գրավադրելու և վերջինիցս ֆինանսավորում ստանալու միջոցով նոր ֆինանսական պարտավորությունների առաջացումն է:

Հաջորդող գրավի այս տեսակը հատկապես տարածում է գտել վերջին շրջանում, երբ ֆինանսական կազմակերպությունները, հաջորդող գրավի կնքման ազատության շունչը զգալով, սկսեցին դա մեծ ծավալով կիրառել՝ առանց վեր հանելու հնարավոր խնդիրները, որոնք կարող են առաջանալ դրա կիրառման պատճառով:

Միևնույն գույքի գրավով ապահովված մեկից ավելի պարտավորությունների ծագմամբ հաջորդող գրավի այս տեսակը կիրառվում է հետևյալ դեպքերում.

- 1. Միևնույն ֆինանսական կազմակերպությունում միևնույն հաճախորդին միևնույն գույքի գրավով տարբեր ֆինանսական գործիքներ տրամադրելիս.**

2. Միևնույն ֆինանսական կազմակերպությունում **փարբեր հաճախորդների միևնույն գույքի գրավով տարբեր ֆինանսական գործիքներ տրամադրելիս:**
3. **Տարբեր ֆինանսական կազմակերպություններում միևնույն հաճախորդին միևնույն գույքի գրավով տարբեր ֆինանսական գործիքներ տրամադրելիս:**
4. **Տարբեր ֆինանսական կազմակերպություններում փարբեր հաճախորդներին միևնույն գույքի գրավով տարբեր ֆինանսական գործիքներ տրամադրելիս:**

Այս բոլոր դեպքերում էլ մի քանի ֆինանսական պարտավորությունների կատարումն ապահովված է լինում միևնույն գույքի գրավով, որը ոչ միայն պարտավորությունների կատարման ապահովման ռիսկ է պարունակում, այլև կարող է հանգեցնել մի շարք իրավական խնդիրների, եթե ապահովված պարտավորություններից մեկը կամ մի քանիսը ոչ պատշաճ կատարվեն, իսկ մյուսը կամ մնացածը պատշաճ կատարվեն:

Խնդիրներն առաջանում են **գրավի առարկան բռնագանձելիս**, մասնավորապես՝ **ինչպես միևնույն գույքի գրավով ապահովված պատշաճ կատարվող պարտավորությունների վաղաժամկետ վճարման պահանջ ներկայացնել հաճախորդին և բռնագանձել ոչ պատշաճ կատարվող պարտավորությունների կատարման ապահովման համար գրավադրված գույքը:**

Այս խնդրին հնարավոր լուծումներ առաջարկելու համար նախ և առաջ միևնույն գույքի գրավով ապահովված մեկից ավելի պարտավորությունների ծագմամբ հաջորդող գրավի վերը թվարկված բոլոր դեպքերը պետք է դիտարկել՝ համադրելով գործող իրավական կարգավորման հետ, և առաջարկել խնդրի լուծման արդյունավետ տարբերակ:

Միևնույն ֆինանսական կազմակերպությունում **միևնույն հաճախորդին** միևնույն գույքի գրավով տարբեր ֆինանսական գործիքների տրամադրման և **փարբեր** ֆինանսական կազմակերպություններում **միևնույն հաճախորդին** միևնույն գույքի գրավով տարբեր ֆինանսական գործիքների տրամադրման երկու դեպքում էլ ֆինանսական կազմակերպությունները

ֆինանսավորման պայմանագրերում, ելնելով պայմանագրերի ազատության սկզբունքից, կարող են պայմանագրային այնպիսի կարգավորում նախատեսել, որ եթե հաճախորդի ֆինանսական դրությունը վատանա, ապա ֆինանսական կազմակերպություններն իրավունք կունենան ֆինանսավորման վաղաժամկետ վճարման պահանջ ներկայացնելու հաճախորդին: Այս կարգավորումից օգտվելով՝ հետագայում ֆինանսական պարտավորություններից մեկի ոչ պատշաճ կատարման դեպքում ֆինանսական կազմակերպությունն իրավասու կլինի չկատարվող կամ ոչ պատշաճ կատարվող ֆինանսական պարտավորությունների վաղաժամկետ վճարման պահանջ ներկայացնելու, իսկ չվճարման դեպքում անխոչընդոտ բռնագանձելու այդ պարտավորությունների ապահովման միջոց հանդիսացող միևնույն գրավի առարկան և գրավի բռնագանձման շնորհիվ ստացված գումարը համապատասխանաբար ուղղելու չկատարված պարտավորությունների մարմանը:

Միևնույն ֆինանսական կազմակերպությունում **փարբեր հաճախորդների** միևնույն գույքի գրավով տարբեր ֆինանսական գործիքների տրամադրման և **փարբեր** ֆինանսական կազմակերպություններում **փարբեր հաճախորդների** միևնույն գույքի գրավով տարբեր ֆինանսական գործիքների տրամադրման երկու դեպքում էլ, եթե պարտավորություններից մեկը չի կատարվում կամ ոչ պատշաճ է կատարվում, իսկ մյուսը՝ պատշաճ, ապա այստեղ պայմանագրային նման կարգավորումը չի կարող խնդրի լուծման հնարավոր տարբերակ հանդիսանալ, քանի որ այս դեպքում ֆինանսավորում ստացող անձինք տարբեր անձինք են, և նրանցից մեկի ֆինանսական դրության վատացումը չի կարող որևէ ազդեցություն ունենալ մյուսի ֆինանսական դրության վրա:

Հետևաբար՝ այս իրավիճակում ֆինանսական կազմակերպությունն որևէ պայմանագրային հիմք չունի տրամադրված ֆինանսավորման վաղաժամկետ վճարման պահանջ ներկայացնել իր պարտավորությունները պատշաճ կատարող հաճախորդին:

Նշենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով որևէ կերպ կարգավորված չէ **միևնույն** ֆինանսական կազմակերպությունում **փարբեր հա-**

ճախորդների միևնույն գույքի գրավով տարբեր ֆինանսական գործիքների տրամադրման դեպքում հաճախորդներից որևիցե մեկի կողմից պարտավորությունների չկատարման պատճառով գրավի առարկայի իրացման գործընթացը:

Ինչ վերաբերում է **փարբեր** ֆինանսական կազմակերպություններում **փարբեր հաճախորդների** միևնույն գույքի գրավով տարբեր ֆինանսական գործիքների տրամադրման դեպքին՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով միայն առաջնային գրավառուի համար է նախատեսված որոշակի իրավական կարգավորում: Այդ կարգավորման համաձայն՝ առաջնային գրավառուին իրավունք է տրված երկրորդային գրավառուից վերջինիս հանդեպ պարտավորությունների չկատարման մասին ծանուցում ստանալուց հետո ընտրելու ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված հնարավորություններից որևիցե մեկը:¹¹ Այդ հնարավորություններից մեկը *գրավի առարկայի հետ կապված որևէ գործողություն չձեռնարկելն է*, ինչը նշանակում է, որ առաջնային գրավառուն կարող է նաև համաձայնություն չտալ առհասարակ գրավի առարկայի օտարմանը: Նախատեսված մյուս հնարավորությունը, որ կարող է կիրառել առաջնային գրավառուն, այն է՝ տալ համաձայնություն *գրավի առարկան երրորդ անձի օտարելու համար*, որի դեպքում էլ պահպանվում է վերջինիս գրավի իրավունքը այդ գույքի վրա, ինչն էլ կխոչընդոտի առհասարակ գրավի առարկայի իրացումը:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ ներկայիս իրավական կարգավորման պարագայում հաջորդող գրավառուների ճակատագիրը գտնվում է առաջնային գրավառուի ձեռքերում, և ստացվում է, որ առաջնային գրավառուն, բացի այն հանգամանքից, որ գույքի արժեքից նախապատվության կարգով պարտավորությունների բավարարման իրավունք ունի, նաև կարող է խոչընդոտել մյուս գրավառուներին՝ իրացնել իրենց իրավունքները:

Խնդրի լուծում

Անհրաժեշտ է առաջնային գրավառուի համար նույնպես սահմանել պարտավորություն՝ մյուս բոլոր գրավառուներին ծանուցել իր հանդեպ պարտավորությունների չկատարման մասին (գուցե առաջնային գրավառուի հանդեպ պարտավորությունները չեն կատարվում), իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով առաջնային գրավառուի համար նախատեսված իրավունքները կիրառությունից հանել: Փոխարենը՝ առաջարկում եմ սահմանել, որ, հաջորդող գրավով ապահովված պարտավորությունների չկատարման մասին ծանուցվելով՝ գրավառուները պարտավոր են իրենց հանդեպ առկա պարտավորությունների վաղաժամկետ մարման պահանջ ներկայացնել հաճախորդներին, իսկ պահանջը ներկայացնելուց հետո հաճախորդների կողմից պարտավորությունները չմարելու դեպքում՝ միասին բռնագանձել գրավի առարկան կամ գնել այդ գրավով ապահովված մյուս գրավառուի հանդեպ առկա պարտավորությունները:

Առաջարկում եմ նաև ծանուցումն ստանալուց հետո երկամսյա ժամկետում գրավառուների կողմից իրենց պարտավորությունները չկատարելու դեպքում որպես իրավական հետևանք նախատեսել հաջորդող գրավի նկատմամբ գրավառուի գրավի իրավունքի դադարումը:

Վերը նշված առաջարկությունները ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարելու դեպքում ֆինանսավորումների տրամադրման գործընթացում հաջորդող գրավը կդառնա ճկուն և ապահով գործիք ֆինանսական կազմակերպությունների համար, որոնք, այլևս որևէ իրավական ռիսկեր չունենալով, կսկսեն միասին համագործակցել և հնարավորություն տալ հաճախորդներին՝ իրենց պատկանող միակ գույքը հաջորդող գրավի սկզբունքով գրավադրելով՝ ստանալու ցանկալի ֆինանսավորումը:

¹¹ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, 236-րդ հոդված, 1-ին մաս:

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Փաստաբան, Հայ-ուսական համալսարանի հայցորդ

ՀԱՅԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՏԵՍԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԸ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը երաշխավորում է անձի խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանությունը:

Անձի իրավունքների ազատությունների, օրինական շահերի լրիվ և ամբողջական դատական պաշտպանության համար քաղաքացիական դատավարությունում նախատեսված են տարբեր դատավարական միջոցներ, այդ թվում՝ հայցի ապահովման ինստիտուտը, որի կարգավորման է ուղղված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ գլուխը:

Հայցի ապահովման դատավարական ինստիտուտի կարևորագույն նպատակն է ապահովել որոշակի երաշխիքներ հարուցված հայցով ապագա վճռի կատարումն ապահովելու և հայցվորի օրինական շահերը ցանկացած բացասական հետևանքներից պաշտպանելու համար: Հայցի ապահովման ինստիտուտը նպաստում է անձանց իրավունքների և օրինական շահերի լրիվ և ամբողջական դատական պաշտպանությանը, հանդիսանում դատական ակտերի փաստացի կատարման երաշխիքը: Այս ինստիտուտի կարևորությունն այն է, որ պաշտպանվում են անձի իրավունքները և օրինական շահերն այն դեպքում, երբ կա վտանգ, որ հակառակ դատավարական կողմը կարող է գործել անբարեխիղճ, ինչը կհանգեցնի դատարանի կողմից ապագայում կայացվող վճռի անկատար մնալուն, կամ կդժվարացնի վճռի կատարումը, կամ կվատացնի վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակը:

Հայցի ապահովման ինստիտուտը, անշուշտ, կապված է այլ անձանց իրավունքների սահմանափակման հետ, հետևաբար՝ հայցի ապահովման միջոցների կիրառումը պետք է կատարվի միայն համապատասխան օրինական հիմքերի առկայության դեպքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օ-

րենսգիրքը սահմանում է հայցի ապահովման կիրառման համար սպառիչ հիմքեր, դրանք են.

1. Հայցի ապահովման միջոցներ կիրառվում են, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել դատական ակտի կատարումը;

2. Հայցի ապահովման միջոցներ կիրառվում են, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է դժվարացնել դատական ակտի կատարումը;

3. Հայցի ապահովման միջոցներ կիրառվում են, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակի վատացմանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասի հիպոթեզը չի պարունակում պայմաններ, որոնք դատարանի համար կունենային ֆորմալ-իրավական նշանակություն «դատական ակտի անկատար մնալ» կամ «դատական ակտի կատարումը դժվարացնել» եզրույթները հասկանալու համար, ուստի դատարաններն ամեն գործով ղեկավարվում են գործի կոնկրետ հանգամանքներով և իրենց ներքին համոզմունքով:

Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդող կողմը պետք է նշի հայցի ապահովման միջոց կիրառելու պատճառները, այն, թե կոնկրետ ո՞ր հայցի ապահովման միջոցն է ենթակա կիրառման, ներկայացնի այդ միջոցի կիրառման անհրաժեշտության մասին հիմնավորումներ, ինչպես նաև նշի այլ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ կլինեն հայցի ապահովման միջոց կիրառելու համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չի սահմանում կոնկրետ ապացույցների տեսակները, որոնցով կարող է հիմնավորվել հայցի ապահովման միջոցի կիրառման անհրաժեշտության փաստը, ուստի դա կարող է հիմնավորվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով նա-

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 102 2017

խատեսված ցանկացած ապացույցի տեսակով: Միջնորդությունը հիմնավորող ապացույցներ կարող են լինել դիմողի գրավոր բացատրությունները, կողմերի միջև տեղի ունեցած մինչդատական նամակագրությունը, հաշվապահական տեղեկանքներ, պատասխանողի պարտքերը հիմնավորող փաստաթղթեր, լրատվական միջոցներից կամ Ինտերնետից պատասխանողի վերաբերյալ հոդվածներ¹: Ինչ վերաբերում է ապացուցման բեռին՝ անշուշտ, հայցի ապահովման միջոց կիրառելիս նման միջոցի կիրառման անհրաժեշտությունը պետք է հիմնավորի միջնորդող կողմը, քանի որ հակառակ կողմն օբյեկտիվ պատճառներով զրկված է իր դիրքորոշումը հայտնելու իրավունքից:

Դատավարագիտության մեջ գոյություն ունեն տարբեր տեսակետներ այն հարցի վերաբերյալ, թե ինչն է արդյոք հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդության ապացուցման առարկան:

Ըստ Վ.Վ. Յարկովի՝ հայցի ապահովման միջոցի կիրառման միջնորդության ապացուցման առարկա են՝ 1) վճռի կատարման դեմ ուղղված՝ պատասխանողի կամ երրորդ անձանց գործողությունների իրական կամ հնարավոր վտանգի առկայության հանգամանքը, 2) հայցի ապահովման միջոցների կիրառման համաչափությունը հայցի առարկայի հետ²:

Ըստ Ն.Ն. Տկաչեվայի՝ հայցի ապահովման միջոց կիրառելիս դատարանը պետք է գնահատման առարկա դարձնի հետևյալ հանգամանքները՝ 1) հայցի առարկան և հնարավոր գործը, ըստ էության լուծող ապագա դատական ակտը, 2) դատարանը պետք է համոզվի, որ հայցի բավարարման դեպքում հենց այդ հայցի ապահովման միջոցը չձեռնարկելը կդարձնի ապագա դատական ակտի կատարումն անհնար կամ կոժվարացնի կատարումը³:

Մ.Վ. Տրեուշնիկովը կարծում է, թե հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանը պետք է ուշադրության արժանացնի այն հանգամանքը, թե ինչքանով է հայցը հիմնավոր, և արդյոք արժանի են ուշադրության հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդող կողմի մտավախությունները հակառակ կողմի անբարեխղճության մեջ: Այս հանգամանքներից բացի, ըստ Ա.Վ. Ցիխոնցկիի՝ դատարանը հայցի ապահովման միջոցի կիրառելու անհրաժեշտությունը գնահատելիս պետք է ղեկավարվի նաև հայցի գնով⁴:

Ինչ վերաբերում է դատական պրակտիկային՝ հարկ է նշել, որ դատարանները ևս ցուցաբերում են տարբեր մոտեցումներ հայցի ապահովման միջոցի կիրառման որոշումներ կայացնելիս: ՀՀ Վճռաբեկ դատարանը, վերլուծելով հայցի ապահովման ինստիտուտը, նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածից բխում է, որ հայցի ապահովման միջոցների կիրառման անհրաժեշտությունը ծագում է, երբ այդ միջոցները չկիրառելը կարող է դարձնել անհնարին կամ վատացնել վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակը⁵: Այսպիսով՝ դատարանը վերլուծել է հայցի ապահովման ինստիտուտի իրավական նպատակը, սակայն չկա որևէ նախադեպ, որով կսահմանվեին այն չափանիշները, որոնց հիման վրա դատարանը պետք է գնահատի՝ արդյոք հայցի ապահովման միջոցների չկիրառումը կդարձնի դատական ակտի կատարումը անհնարին կամ կոժվարացնի դատական ակտի կատարումը կամ կարող է վատացնել վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակը: Այդ իսկ պատճառով դատարանները հաճախ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ որոշման մեջ տալիս են շարունային ձևակեր-

¹ Տեն Рыжаков А. П. Комментарии к Гражданскому кодексу Российской Федерации. Изд. 6, перераб. М., 2013. էջ 449:
² Комментарии к Арбитражному процессуальному кодексу Российской Федерации (постатейный)/ под. ред. В. В. Яркова. 3 изд., перераб. и доп. М., 2011. էջ 81:
³ Ткачева Н. Н. Проблемы обеспечения иска в гражданском судопроизводстве (по материалам практики). Саратов, 2004. էջ 35:
⁴ Гражданский процесс. Учебник, 2-е изд. прораб и доп./ Под ред. М. К. Треушников. М., 2007. էջ 103:
⁵ Տեն ՀՀ Վճռաբեկ դատարանի 27.04.2011 թ. թիվ ՎԴ/3511/05/10 որոշումը՝ ըստ հայցի Հովսեփ Արզումանյանի ընդդեմ Թամարա Աղաջանյանի, երրորդ անձինք «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի, ՀՀ ԱՆ ԴԱՎԿ Ծառայության Տավուշի մարզային բաժնի՝ ՀՀ Տավուշի մարզի Գեղահովիտ համայնքի մարզահամալիրի թաղամասում գտնվող 0,075 հա մակերեսով հողամասի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու և նշված հողամասի արգելանքը հանելու պահանջների մասին:

պումներ այն մասին, որ եթե նման միջոց չկիրառվի, ապա դա կհանգեցնի ապագա դատական վճռի չկատարմանը կամ դժվարացնի կատարումը՝ առանց հիմնավորելու այն շարժառիթները, որոնցով դատարանը հանգել է նման հետևության: Դատարանների նման մոտեցումը հակասում է ՀՀ քաղաքացիական դատավարության 144-րդ հոդվածի 2-րդ մասին, որի համաձայն՝ առանձին ակտի ձևով կայացված որոշման մեջ պետք է նշվեն... շարժառիթները, որոնցով դատարանը հանգել է հետևությունների...

Այս առումով՝ հետաքրքիր են Գերմանիայի օրենսդրությունը և դատական պրակտիկան: Հայցի ապահովման միջնորդությունների համար նախատեսված է հատուկ ապացուցման մեխանիզմ: Այս ընթացակարգի առանձնահատկությունն այն է, որ դիմողը չպետք է դատարանին ամբողջությամբ համոզի նշվող իրավաբանական փաստերի առկայությունը, այլ պետք է ապացուցի «բավարար» հիմքերի առկայությունը հայցի ապահովման միջոց կիրառելու համար: Հայցի ապահովման միջոցների կիրառման հիմքերը համարվում են ապացուցված, երբ դատարանը համոզված է ապացուցվող իրավաբանական փաստերի «գերակշռող հավանականության» առկայության մեջ: Այսինքն՝ դատարանը պետք է հանգի այն համոզման, որ դիմողի կողմից ներկայացված ապացույցներն ավելի շուտ վկայում են հայցի ապահովման միջոցներ կիրառելու անհրաժեշտության մասին, քան հակառակը⁶:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պրակտիկայում դժվար է ապացուցել այն, որ պատասխանողը կամ այլ դատավարության մասնակիցը, ում հանդեպ կիրառվում են հայցի ապահովման միջոցներ, կարող է ձեռնարկել այնպիսի գործողություններ, որոնք կստեղծեն իրական վտանգ ապագա վճռի կատարումը դժվարացնելու կամ առավել ևս անկատար մնալու համար, ապա, կարծում եմ՝ մեր դատարանները ևս պետք է առաջնորդվեն պատասխանողի կամ այլ դատավարության մասնակ-

ցի, ում հանդեպ կիրառվում են հայցի ապահովման միջոցները, «անբարեխղճության կանխավարկածով»:

Այսպիսով՝ վերլուծելով ՀՀ օրենսդրությունը և դատական պրակտիկան հայցի ապահովման միջոցների կիրառման իրավական հիմքերի վերաբերյալ, ինչպես նաև տարբեր դատավարագետների մոտեցումներն այս հարցի վերաբերյալ և միջազգային փորձը՝ եզրահանգում եմ, որ դատարանները հայցի ապահովման միջոցներ կիրառելիս պետք է հաշվի առնեն հետևյալ հանգամանքերը.

1. Հայցի ապահովման միջոցի կամ միջոցների կապը հայցի առարկայի հետ, այսինքն՝ դատարանը պետք է գնահատի՝ ինչքանով է արդարացված կոնկրետ այդ հայցի ապահովման միջոցի կամ միջոցների կիրառումը տվյալ քաղաքացիական գործի շրջանակներում, արդյոք այդ միջոցի կամ միջոցների կիրառումը կապահովի դատական ակտի կատարումը:

2. Հայցի ապահովման միջոցներ չձեռնարկելու դեպքում ինչքանով է հնարավոր ապագա դատական ակտի կատարման անհնար լինելը, կամ դատական ակտի կատարման դժվարանալը, կամ վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակի վատացումը:

3. Պետք է գնահատի նյութաիրավական պահանջի չափի և հայցի ապահովման միջոցի կիրառման հետևանքով կողմի կրած վնասների համաչափությունը: Այս սկզբունքը որպես այդպիսին թեև ամրագրված չէ օրենսդրորեն, այնուամենայնիվ, դատարանները հայցի ապահովման միջոց կիրառելիս պետք է դա անպայման հաշվի առնեն: Այս պարագայում, համաչափություն ասելով, պետք է հասկանալ հայցի ապահովման միջոցի չափի համապատասխանությունը հայցի նյութաիրավական պահանջի չափին: Համաչափությունը հնարավոր է գնահատել միայն գույքային պահանջի դեպքում, բայց դա չի նշանակում, թե ոչ գույքային հայցապահանջի դեպքում դատարանը չպետք է համադրի հայցապահանջի հայցի ապահովման միջոց չկիրառելու հետևանքով միջնորդող

⁶ Առավել մանրամասն տե՛ս Волченко О. Ю. Доказывание оснований принятия мер по обеспечению иска в гражданском процессуальном праве России и Германии// Труды института государства и права Российской академии наук. Статьи аспирантов и стажеров Института государства и права РАН.– М.: Институт государства и права РАН.– 2011, N2. Էջ 171:

կողմի հնարավոր իրավունքի խախտումներն այն վնասների կամ կորուստների հետ, որը կրելու այն անձը, ում հանդեպ կիրառվում են հայցի ապահովման միջոցները: Գերմանիայում այս սկզբունքն ամրագրված է օրենսդրորեն և կոչվում է «վեճի կողմերի շահերի հավասարակշռության սկզբունք»: ՀՀ Վճռաբեկ դատարանն իր թիվ ԵԿԴ/1807/02/13 27.11.2015թ. նախադեպային որոշմամբ անդրադարձել է հայցի ապահովման միջոցների կիրառման պարագայում ընդհանուր շահերի և մասնավոր անձի հիմնարար իրավունքների միջև հավասարակշռության պահպանման հարցին: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ հայցի ապահովման ինստիտուտի պարագայում ընդհանուր շահերի և մասնավոր անձի հիմնարար իրավունքների միջև հավասարակշռության պահպանման հարցի պարզումը յուրաքանչյուր դեպքում հարկ է իրականացնել՝ հաշվի առնելով ապահովման ենթակա հայցի տեսակը և առարկան, հայցագիծը, ձեռնարկված հայցի ապահովման եղանակը: Մասնավորապես՝ որքանով է պիտանի և անհրաժեշտ տվյալ հայցի ապահովման միջոցի կիրառումը նմանատիպ հայցապահանջներով, առկա է արդյոք ողջամիտ հարաբերակցություն հայցագնի և ձեռնարկված հայցի ապահովման ծավալի միջև և այլն⁷:

Կարծում եմ՝ հայցի ապահովման միջոցների համաչափության սկզբունքը հայցապահանջին անհրաժեշտ է հստակ ամրագրել օրենսդրորեն և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածը լրացնել 4-րդ մասով հետևյալ կերպ. «Հայցի ապահովման միջոցները պետք է համաչափ լինեն հայցապահանջին»: Այս սկզբունքի օրենսդրական ամրագրումը կնպաստի հայցի ապահովման միջոցների ճիշտ կիրառմանը և կբացառի այլ անձանց իրավունքների անհարկի և ոչ օրինական սահմանափակումը:

4. Դատարանը պետք է նախնական գնահատման արժանացնի հայցի հիմնավորվածության հարցը: Ակնհայտ անհիմն հայց ներկայացնելու դեպքում պետք է բացառվի հայցի ապահովման միջոցների կիրառումը:

5. Պետք է գնահատի պատասխանողի կամ այն կողմի, ում հանդեպ կիրառվում են հայցի ապահովման միջոցներ, գույքային վիճակը, վեճի առարկա հանդիսացող գույքի գտնվելու վայրը և վիճակը, այլ հանգամանքեր, որոնք թույլ կտան կանխատեսել պատասխանողի կամ այն անձի կողմից, ում հանդեպ կիրառվում են հայցի ապահովման միջոցներ, հնարավոր ձեռնարկվող գործողությունները՝ ուղղված հետագայում կայացվող դատական ակտի կատարման համար խոչընդոտներ ստեղծելուն:

Ամբողջացնելով վերոգրյալը՝ հարկավոր է նշել, որ դատարանը հայցի ապահովման միջոց կիրառելիս պետք է հիմնավորի հայցի ապահովման միջոցի կիրառման անհրաժեշտությունը, շարժառիթները, որոնցով դատարանը հանգել է նման հետևության, և ոչ թե սահմանափակվի շաբլոն ձևակերպումներով: Սա նաև առավելապես պայմանավորված է այն հանգամանքով, որ հայցի ապահովման միջոց կիրառելիս պատասխանողը զրկված է իր դիրքորոշումը և առարկությունները հայտնելու իրավունքից, ուստի դատարանը պետք է լինի առավել ուշադիր հայցի ապահովման միջոցներ կիրառելիս: Միայն նշված պայմանների պահպանման դեպքում հնարավոր կլինի հասնել հայցի ապահովման ինստիտուտի ճիշտ կիրառմանը, որը կնպաստի անձի խախտված իրավունքների և օրինական շահերի լրիվ և ամբողջական պաշտպանությանը՝ առանց ոտնահարելու այլ անձի իրավունքների և օրինական շահերը:

⁷ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 27.11.2015թ. թիվ ԵԿԴ/1807/02/13 որոշումը՝ ըստ հայցի Միեր Ավետիսյանի, Մոնիկա Քոլյանի, Արմեն Ստամբոլցյանի, Նունե Նասոյանի ընդդեմ «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ-ի, ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության՝ ավտոմեքենաները, բնակելի տունն ու հողամասը, դրամական միջոցներն արգելանքից հանելու պահանջի մասին:

ЛУСИНЕ ВАРДАНЯН

Кандидат юридических наук

БИОПРАВА ЧЕЛОВЕКА: ОБЩИЙ ВЗГЛЯД НА НОВЫЕ ПРАВА ЧЕЛОВЕКА

Философия постмодерна формировала новое отношение к телу человека: теперь тело является объектом «выражения» свободы человека без идеологически значимых ограничений. Модификация тела в постмодерне не есть этическая проблема, существует лишь «экзистенциальный риск», под которым понимается риск уничтожения порожденной Землей интеллектуальной жизни или существенного сокращения ее потенциала. Между тем, тело и сознание взаимосвязаны и, прежде всего, органически, и это исходит из позиций материалистической парадигмы современной науки. Это же указывается в философской антропологии и феноменологии. Более того, тело и сознание взаимообусловлены: изменяя тело, мы изменим сознание, что само по себе приведет к каскаду преобразований параметров всей цивилизации. А если «подтянуть» биологию человека до уровня развития новых техносоциальных реалий бытия Разума, то поменяется сознание, и появятся новые реалии, где опять биологии будет явно недостаточно. В.Ф.Чешко отмечает, что «изменение генетической основы носителей разумной жизни означало бы радикальный разрыв существующей культурной традиции, разрушение существующего социокультурного кода человека».¹ Такой разрыв равносителен генно-культурной катастрофе. И поэтому свобода модификации и распоряжения телом не может не быть ограничена.

В последнее время в качестве ограничителя морфологической свободы начинает рассмат-

риваться биоэтика – новая нормативная система защиты прав человека и новая совокупность универсальных принципов, в основе которых лежит самоценность человеческой жизни. Влияние биоэтики приводит к формированию нового научного образования в юриспруденции, для обозначения которого Р. Токарчик в юридический оборот вводит понятие биоюриспруденции.² Биоправо, по его мнению, лишь позитивное право, которое связано с правовым регулированием медицинского вмешательства, это непосредственно нормативное закрепление «био-прав» – прав, разработанных правовой соматологией, правовой танатологией и правовой перинатологией, а биоюриспруденция – наука о «биоправах» человека, «закон жизни человека».³ Весь смысл развития биоюриспруденции сводится к определению и разработке правовых механизмов регулирования биоэтических дилемм, поэтому она имеет имманентную связь с биоэтикой. А. Колачко рассматривает биоюриспруденцию как «младшую сестру» биоэтики.⁴ Сам Р.Токарчик также указывает: «Под влиянием биоэтики биоюриспруденция стремится развивать интеллектуальные основы для нормативной охраны любого вида жизни, а где это возможно и обоснованно, также улучшение его качества».⁵

Биоюриспруденция как теория «биоправ» человека структурно делится на правовую перинатологию, правовую соматологию и правовую танатологию. Как правило, они рассматриваются

¹ Чешко В.Ф. Перспективы человека в эпоху глобальной эволюционной сингулярности: трансгуманизм versus биоэтика?//<http://www.transhumanism-russia.ru/content/view/234/94/>

² Tokarczyk R. A. Biojurisprudencja: podstawy prawa dla XXI wieku / R. A. Tokarczyk. – Lublin: Wydawnictwo Uniwersytetu Marii Curie-Skłodowskiej. 2008. S. 109.

³ Tokarczyk R. A. Pojście Biojurisprudencje / Przepisy prawne narodzhennya, Zhittyayismerti. Bazy biojurisprudentsiï. – Lublin: Wydawnictwo Uniwersytetu Marii Curie-Skłodowskiej, 2012. P. 219.

⁴ Holmes J.C. Pojście Biojurisprudencje. – Przepisy prawne narodzhennya, Zhittyay i smerti. Bazy biojurisprudentsiï prof Ed. Tocarcius R. – Lyublin. 2012. P. 283.

⁵ Токарчик Р. ПРО НЕОБХІДНІСТЬ ТРАНСФОРМАЦІЇ КОНЦЕПЦІЇ ПРАВ ЛЮДИНИ У КОНЦЕПЦІЮ ПРАВ ЖИТТЯ/філософія права і загальна теорія права No 2/2012. С. 201.

в контексте биомедицины. А. Запороженко даже предлагает их объединить под новым понятием «правовая биомедицина».⁶ Это за его рамками оставляет проблемы, которые хотя и касаются жизни человека, но не имеют связи с биомедициной, а также проблемы, которые появляются в связи с вмешательством в естественные процессы человека или с искусственным воздействием на тело, однако не нацеленные на жизнь человека. Между тем, искусственное вмешательство в телесную субстанцию человека возможно не только в рамках биомедицины. Наряду с медико-правовым компонентом «биоправ» человека, который все более акцентируют в своих исследованиях ученые, существуют также валеолого-правовой и морфолого-правовой компоненты. Как известно, медицина занимается болезнями. Многие современные биотехнологии направлены на улучшение здоровья, а значит, относятся к валеологии, а не к медицине, ибо здоровый человек находится вне сферы медицины. Представляется, что биоправа человека должны включать все те права, которые дают человеку возможность в определенной мере искусственно воздействовать на свое тело.

Термин «перинатология» заимствован из медицинской сферы, где таковой в самом простом определении является разделом медицины, прицельно направленным на изучение периода жизни человека, начиная с 28 недель беременности (масса тела 1000 г) и включая первые семь дней после рождения.⁷ В медицинской литературе можно встретить определение перинатологии, которое указывает более широкой временной промежуток. Например, согласно Г. Крайг, перинатология – новая ветвь медицины, которая рассматривает рождение ребенка не как отдельные события, представленное точкой на оси времени, а как длительный процесс, начинающийся с зачатия и охватывающий весь пренатальный период, сами роды и первые месяцы после рождения.⁸ Однако, как видим, временной промежуток, который охватывается медицинской

перинатологией, в одном случае крайне короткий для правовых категорий, ибо, согласно данным все той же медицины, с 22 недель беременности ребенок может родиться жизнеспособным, во втором случае – слишком длинный, ибо охватывает период, когда, согласно действующей концепции права, уже имеется право на жизнь, и никакого вопроса относительно начала жизни быть не может. Можно прийти к выводу о том, что термин «перинатология» из медицинской лексики заимствован правоведами исключительно для того, чтобы обозначить начальную стадию жизни человека, однако содержание самого термина в юриспруденцию не перешло. Говоря о перинатологических правах человека, мы, скорее всего, имеем в виду дозволенную меру той био-власти, которая нам дана правом относительно своего будущего поколения. В сферу изучения правовой перинатологии входят вопросы о правах на евгенику (селективный аборт, генная модификация человека), аборт, проблемы неонатальной диагностики, применение вспомогательных репродуктивных технологий, проблемы паритета (либо приоритетности) прав матери над нерожденным ребенком, определения начального момента жизни человека, проблемы выбора пола и/или морфофизиологических особенностей будущего человека, проблемы распоряжения телом, тканями, клетками и иным биоматериалом абортированного (умершего) эмбриона и плода, вопросов распоряжения консервированными проэмбрионами и т. д. Актуальным является исследование в этой сфере вопроса признания правового статуса эмбриона и плода человека права быть рожденным.⁹ Биоэтика ограничивает реализацию био-власти и крайней автономии личности через признание за нерожденным человеческое достоинство, что является единственным путем ограничения неуместного прикладного применения биотехнологий, связанных с манипуляциями с геномом человека, использованием фетальных тканей и эмбриональным донорством. Человеческое достоинство в этой сфере становится

⁶ Запороженко А.О. Правовая танатология в системе общетеоретической юриспруденции // Национальный юридический журнал “Теория и практика”. 2014. С. 12.

⁷ Харимова Б.Т., Бобоева У.Р., Сатиболдиева Н.Р. Сестринское дело в неонатологии.– Ташкент. 2014. С. 5.

⁸ Крайг Г. Психология развития / Пер. с англ. 7-ое изд. СПб.: Питер. 2000.

⁹ Steinbock B. The life before birth: The Moral and Legal Status of Embryos and Fetuses, New York: 1992.

агентом нравственности, ибо, как указывает И.В.Силуянова, «новейшие биомедицинские технологии обнажают связь между достижениями биомедицины и падением ценности человеческой жизни».¹⁰ Для адекватного правового регулирования этого этапа жизни человека требуется разработка биоправ человека исключительно в биоэтическом дискурсе, во избежание чрезмерного и небезопасного расширения автономии человека. По нашему мнению, пеританатологические права в биоправе – это разработанные в контексте биоэтических принципов меры дозволенного вмешательства в процессы зарождения и развития жизни эмбриона и плода человека, его телесного бытия с целью дальнейшего развития и сохранения его жизни, достижения максимально возможного уровня его духовного и физического здоровья средствами и методами, не ставящими в опасность существование и целостность человека (индивида и биологического вида) как уникального биосоциодуховного существа, а равномеры дозволенного законом распоряжения его жизнью и биоматериалом эмбриона и плода человека в целях, не противоречащих морали, нравственности и духовности человека.

Второй структурный элемент биоюриспруденции Р. Токарчик называет биоюстерапией. Если обратиться к семантическому толкованию понятия «терапия», то это – «лечение внутренних болезней нехирургическим путем, а равно – отдел терапии, посвященный лечению внутренних болезней».¹¹ Однако, как уже отмечалось, воздействие на тело человека может быть осуществлено не только для лечебных целей и при наличии каких-либо заболеваний. «Среди правопритязаний личности, представляющей человечество на рубеже третьего тысячелетия от Рождества Христова, можно выделить и обособить группу таких, которые основываются на фундаментальной ми-

ровоззренческой уверенности в «праве» человека самостоятельно распоряжаться своим телом: осуществлять его «модернизацию», «реставрацию» и даже «фундаментальную реконструкцию», изменять функциональные возможности организма и расширять их технико-агрегатными либо медикаментозными средствами. Сюда же можно отнести право на смерть, изменение пола, гомосексуальные контакты, трансплантацию органов, употребление наркотиков или психотропных средств, право на искусственное репродуктивное, стерилизацию, аборт и (в уже зримой перспективе) клонирование, а затем – и на виртуальное моделирование, в смысле полного утверждения (дублирования) себя в неметрической форме объективного существования.¹² Как видим, многие из указанных прав не имеют цель лечения внутренних болезней. Они лишь дают правовую возможность модификации, внесения функциональных изменений либо отстранения нежелательных для личности функций. Эту часть биоюриспруденции правильнее назвать «правовой соматикой».¹³ Ее существенная особенность в том, что человек рассматривает возможности использования своего тела от «первого лица».

Зачастую, рассматривая правовую соматологию как часть биоюриспруденции, авторы сюда включают три составляющих: воспроизводство, реконструкцию, смерть. Так, О.Э. Старовойтова в правовую соматологию включает правовую танатологию, правовую трансплантологию органов и тканей человеческого тела, правовую регламентацию технологий, связанных с воспроизводством человеческого тела (репродуктивных технологий), то есть она включает в себя юридические аспекты науки о теле человека (его воспроизводство, коррекцию и смерть).¹⁴ Можно ли, однако, считать коррекцией или распоряжением телом эвтаназию?

¹⁰ Силуянова И.В. Руководство по этико-правовым основам медицинской деятельности: Учебное пособие.– М.: МЕД-пресс-информ. 2008. С. 59.

¹¹ Советский энциклопедический словарь/ Гл. ред. А.М. Прохоров.– 4-е изд.– М.: Советская энциклопедия. 1988. С. 1600.

¹² Крусс В. И. Соматические права человека в соотношении православной антропологии С. Л. Франка и философии экологического кризиса В. Хесле. С. 189.

¹³ Соматика – область знаний, которая занимается изучением сомы, а именно – с позиции ее восприятия изнутри (от первого лица). Термин впервые был использован Томасом Ханна в его статье, опубликованной в «Somatics: Magazine – Journal of the Bodily Arts and Sciences» (Vol V, #4, Spring-Summer 1986).

¹⁴ Старовойтова О.Е. Правовые проблемы танатологии: историко-теоретический аспект: автореф. дис. ... канд. юрид. наук СПб.: 2001. С.13.

По нашему мнению, эвтаназия представляет собой не распоряжение телом, а, скорее, распоряжение жизнью. В правовом аспекте человек не может «полностью» распоряжаться своим телом при жизни, не может «отказаться от тела». Указанные права нацелены не на уничтожение тела или субъекта права, а, скорее, на то, чтобы лицо, которое их реализует, смогло улучшить в некоторой степени качество своего тела и через это – качество своей жизни или здоровья. Поэтому правовая соматология не может включать правовую танатологию, а в случае установления правового статуса эмбриона – также правовую перинатологию, так как в этом случае речь идет о распоряжении не своим, а чужим телом.

Модификации тела – это изменения хирургического характера, производимые человеком в собственном теле без медицинских показаний, по социальным, религиозно-эстетическим соображениям: для подчеркивания своей индивидуальности, демонстрации своей принадлежности к определенной группе и т. д. В традиционных обществах основными функциями модификаций тела являются: маркирующая – обозначение возраста, гендера, социальной или этнической принадлежности носителя; ритуально-социализирующая; апотрическая – функция оберега; эстетическая.¹⁵ В современном обществе зачастую модификации тела маркируют новый, в том числе и социальный статус человека. Запретить такую модификацию не представляется верным, ибо в некоторой степени человек с их помощью пытается подчеркнуть свою индивидуальность. Но одновременно закон должен предотвращать превращение модификации в инструмент для деконструкции человека, и она не должна нарушать каких-либо функций человеческого организма. Нам представляется, что правовая соматика включает особую совокупность прав, которые можно назвать морфологическими – разработанных в контексте биоэтических принципов мер дозволенного искусственного вмешательства в психосоматическую целостность человека, с целью ее коррекции, восстановления или изменения для обеспечения максимально возможного уровня

его здоровья либо духовной и физической индивидуальности, в пределах, не ставящих в опасность существование человека (индивида и биологического вида) как уникального биосоциодуховного существа. Эти права должны позволять осуществлять реставрацию, коррекцию, модификацию тела в соответствии с законодательно установленными целями их реализации: лечебных, восстановительных либо декоративно-эстетических. Среди таковых могут быть право на «декоративно-эстетическую» модификацию, право на законную стерилизацию, право на смену внешнего облика (с учетом права на индивидуальность и права на уникальность третьих лиц), право на смену пола как способа лечения, право на морфологическую индивидуальность, право на восстановительное протезирование, скарификация. Исходя из психосоматического единства человека, сюда можно включить также право использования психотропных и наркотических веществ с целью лечения, а также право на использование моделирующих медикаментов, которые, имея высокую биологическую активность, приводят к внешним морфологическим и функциональным изменениям тела человека (например, анаболические стероиды, гормональные препараты) для спортивной, эстетической или лечебной коррекции. Представляется, что нецелесообразно в этом контексте рассматривать право на выбор сексуального партнера (в том, числе гомосексуального) потому, что эти контакты не имеют какой-либо связи с нарушением, коррекцией либо восстановлением биологической целостности человека.

Законодательное закрепление их исчерпывающего перечня поможет взять их реализацию под государственный контроль, более того, поможет установить разумные пределы такой реализации на основе баланса между реализацией права и сохранением человеческого общества в целом. Представляется, что в систему правовой соматики, кроме морфологических прав, должны входить также права, которые связаны с прижизненным распоряжением органами, тканями и клетками собственного тела, право на трансплантацию, право на предоставление функцио-

¹⁵ Гринько И.А. Искусственные изменения тела в системе социокультурных символов традиционных обществ//Дис... канд. ист. наук.– М.: 2007. С.154.

нальных возможностей собственного тела в безвозмездное пользование (например, при суррогатном материнстве), право на криоконсервацию клеток и тканей, право на участие в клинических и неклинических исследованиях, экспериментах и опытах, право на контрацепцию, право на законное терапевтическое клонирование, право на немоделированное поведение (в связи с разработкой когнитивных технологий моделирования поведения и программирования сознания). Последнее право можно указать в числе прав, входящих в правовую соматику исключительно из-за наличия диалектической связи сознания с телом. Законодательное закрепление правовой соматики должно быть осуществлено исключительно на основе принципов биоэтики, что означает качественное различие между соматическими правами и правами, включенными в правовую соматику.

В рамках биоюриспруденции третьим элементом является биоюстанатология. Танатология – многопрофильная наука о смерти, объединяющая различные сферы знаний в этой области, предметом которой является понятие смерти, изучение ее причин, процесса и проявлений. Значимость танатологии для правовой мысли актуализировалось с развитием биотехнологий, которые позволили оказывать реанимационные мероприятия, а в некоторых случаях – временно отсрочить неизбежную смерть. Правовая танатология также имеет ряд проблем, от однозначных решений которых зависит дальнейшее развитие биоправа. Само определение правовой танатологии различными авторами раскрывается по-разному. Так, М.А. Дамирли указывает, что правовая танатология – новое направление медико-правовых научных исследований в рамках биоюриспруденции, направленных на исследования конечного этапа жизни человека, процессы умирания и определенного промежутка времени, в течение которого смерть человека имеет определенные биосоциальные и правовые последствия.¹⁶ А.О. Запороженко указывает, что «правовую танатологию необходимо рассматривать

как самостоятельное направление в современном правоведении в рамках общетеоретической юриспруденции... Под правовой танатологией следует понимать совокупность научных знаний, направленных на исследование конечного этапа жизни человека, процессов умирания и определенного промежутка времени, в течение которого смерть человека имеет определенные биосоциальные последствия».¹⁷ Именно включение биосоциальных или правовых последствий в определение правовой танатологии расширяет предмет данного направления настолько, что сюда можно включить даже вопросы, которые хотя и связаны с юридическим фактом смерти, однако никоим образом не относятся к биоюриспруденции. Например, А.О. Запороженко делит танатологические права на два блока и в качестве, так сказать, «серединового компонента» указывает еще одну – крионику. Если обобщить мнение, то, по выводам исследователя, танатологические права делятся на права умирающего и права умершего.¹⁸ А, значит, логически можно прийти к выводу, что сюда можно отнести все вопросы, так или иначе связанные с юридическим фактом смерти человека: например, вопросы завещания, момента его открытия (и речь не идет о так называемых биологических завещаниях), защиты чести умершего и т. д. Однако анализ представленных автором танатологических прав все же выявляет одну весьма важную характеристику этих прав: центральной идеей этих прав является тело человека. Они либо связаны с возможностью (невозможностью) причинения или ускорения смерти (например, эвтаназия, самоубийство и т. д.) либо – с возможностью (невозможностью) распоряжения телом в целом, его органами, тканями, клетками уже умершего человека, отношением к умершему телу (право на постмортальное донорство, право на сохранение целостности, право быть похороненным или кремированным, право на крионику, право на уважение человеческого достоинства (речь идет о человеческих останках и человеческом зародыше)). Однако эта связь с телом никоим образом не отражается в определении пра-

¹⁶ Дамирли М.А. Сравнительное правоведение: статус, предмет и система. Одесса, Феникс. 2013. С. 174.

¹⁷ Запороженко А.О. Правовая танатология как научное направление / Актуальні проблеми держави і права. 2014. С. 437.

¹⁸ Там же.

вовой танатологии, предложенном А.О.Запорожченко. Р.Токарчик к биоюстанатологии относит «правовое регулирование конца человеческой жизни, его смерти и, по аналогии, смерти иных видов живых существ. Причем в биоюриспруденции существует много дефиниций смерти: биологическая, клиническая, социологическая и смерть мозга. Каждая из дефиниций поднимает множество вопросов, главным образом, относительно того, кто, когда, где и в каких условиях и целях решает вопрос о смерти человека».¹⁹ В таком понимании правовая танатология изучает проблемы, связанные с вопросами причинения или ускорения смерти, права на аборт, суицида, эвтаназии, убийства на войне, смертной казни, определения момента смерти, признания или непризнания права на смерть, определение самого понятия смерти и ее критериев, проблемы правовой регламентации предсмертного (около-смертного) состояния человека. Конечно, в правовой танатологии как части биоправа человека речь должна идти и о процессе смерти человека, однако и здесь нет указания на связь этих прав непосредственно с телом человека. *Танатологические права* – разработанные на основе принципов биоэтики биоправа человека, предоставляющие меру дозволенного искусственного вмешательства в естественный процесс умирания, околосмертных состояний и смерти, а равно-меру дозволенного безвозмездного распоряжения своим телом и иными биологическими ресурсами *post mortem*, в целях, не противоречащих морали, нравственности и духовности человека. Это права, через реализацию которых происходит искусственное вмешательство в умирающий человеческий организм с целью облегчения неминуемой смерти, права, через которые умирающий распоряжается своим телом, органами, тканями, клетками, то есть биоматериалом *post mortem*. Вопросы о возможности причинения смерти или распоряжения телом умершего с позиции био-права должны регулироваться на основе аксиологического аспекта жизни человека и исходя из принципов биоэтики. Танатологическими

можно назвать право на паллиативный уход и паллиативную медицинскую помощь, право на посмертное донорство, право на постмортальную целостность тела, право на крионику, право быть кремированным или похороненным, право на достойное отношение к телу после смерти, право отказа от реанимационных процедур или медицинского вмешательства, право на облегчение околосмертных страданий в том числе – введением в обратимую кому. Заметим, что право на эвтаназию и право на суицид с нашей точки зрения не рассматриваются как часть танатологических прав, так как в контексте биоправа они не могут существовать, ибо противоречат жизни как аксиологической величины.

Итак, биоправа человека – разработанный на основе принципов уважения свободы, человеческого достоинства, интегрити и уязвимости комплекс прав человека, предоставляющих меру дозволенного искусственного вмешательства в психосматику человека, в естественные процессы его жизни и смерти, меру дозволенного распоряжения своими биологическими ресурсами с целью сохранения жизни, достижения максимально возможного уровня духовного и физического здоровья, иных целей, не противоречащих морали, нравственности и духовности человека и не ставящих в опасность существование человека (индивида и биологического вида) как уникального биосоциодуховного существа. Необходимым шагом для адекватного правового регулирования комплекса прав, предоставляющего возможность безопасного использования биотехнологий, является их развитие лишь в контексте биоэтических принципов. Биоэтика спасает право от превращения в инструмент деструкции человека и его превращения в товар, становится балансом между абсолютным индивидуализмом современного человека и общественным благом в виде сохранения генетической, психофизической, духовной целостности человека, его выживания как биологического вида, его биосоциокультурного окружения, защищает человека от него же.

¹⁹ R. Tokarczyk, Prawa narodzin, życia i śmierci, Zakamycze. 2006. S. 20–21.

ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱԼ

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Հայաստանի Հանրապետության պետական
կառավարման ակադեմիայի դոկտորանտ

**ՄԻԳՐԱՅԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՆՐԱ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Մարդկանց ազատ տեղաշարժի բնորոշ դրսևորումն է բնակչության միգրացիան: Իր ծավալուն ընդգրկմամբ՝ միգրացիան արդի պայմաններում դարձել է համաշխարհային հանրությանն առավել հուզող հիմնահարցերից մեկը:

Գլոբալիզացիան, աշխարհի բնակչության զանգվածային արտագաղթը մի երկրից մյուսը հիմնովին փոխեցին մարդկանց պատկերացումներն իրենց բնակության երկրների զարգացման, հեռանկարների և սեփական ապագայի վերաբերյալ: Առաջնային խնդիր դարձավ առանձին պետությունների և ժողովուրդների համագործակցության այնպիսի մեխանիզմների մշակումը, որոնց հիմքում մարդասիրական բնույթն է և մարդու իրավունքների պաշտպանությունը:

Կյանքը ցույց տվեց, որ նման ընդգրկումն ծրագրերի իրականացումը հնարավոր է միայն պետական կառույցների և հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային կառույցների սերտ համագործակցության պայմաններում: Նման առաքելության համակարգումն իր վրա վերցրեց Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (այսուհետ՝ ՄՄԿ):

ՄՄԿ-ն ստեղծվել է 1951 թվականին, և նրա առաջին նպատակներից է եղել փախստականների և միգրանտների տեղափոխումը վերաբնակեցման նպատակով:¹

Ժամանակային ամենակարճ հատվածում, ընդամենը մի քանի տարում, միգրացիայի ոլորտի առաջատար կազմակերպությանն անդամագրվեցին 156 պետություն: Միաժամանակ՝ 10 պետության համար սահմանվեց դիտորդի կարգավիճակ:

ՄՄԿ-ն աշխատում է միգրացիայի կառավարման չորս լայն ոլորտում՝ ա) միգրացիա և զարգացում, բ) միգրացիայի խթանում, գ) միգրացիայի կարգավորում և դ) հարկադիր միգրացիա: ՄՄԿ-ի՝ այս ուղղություններով իրականացվող գործունեությունը ներառում է տրամախաչվող ոլորտներ. միջազգային միգրացիոն իրավունքի խթանում, քաղաքականության հարցերի շուրջ քննարկումներ և ուղղորդում, միգրանտների իրավունքների պաշտպանություն, միգրանտների առողջապահություն և այլն:²

ՄՄԿ-ի սահմանադրության³ (կանոնադրության) 27-րդ հոդվածում ամրագրված է, որ նա ունի ամբողջական իրավական իրավասուբյեկտություն և այնպիսի իրավունակության մակարդակ, որն անհրաժեշտ է իր գործառույթներն ու նպատակներն իրականացնելու համար, մասնավորապես՝ պետական օրենսդրությանը համապատասխան ունակ է՝ ա) կնքել պայմանագրեր, բ) ձեռք բերել և օգտագործել շարժական և անշարժ գույքը (սեփականությունը), գ) ստանալ և ծախսել պետական և մասնավոր ֆինանսական միջոցներ, դ) հետապնդվել դատական կարգով (դատարանում հանդես գալ որպես պատասխանող կամ հայցվոր): Վերոգրյալ դրույթներից բացի՝ ՄՄԿ-ի սահմանադրության (կանոնադրության) 28-րդ հոդվածում ամրագրված է, որ ՄՄԿ-ն օգտվում է այնպիսի արտոնություններից և իմունիտետից, որոնք անհրաժեշտ են իր գործառույթներն ու նպատակներն իրականացնելու համար, միևնույն ժամանակ նշելով, որ այդ արտոնությունների և իմունիտետի իրավական շրջանակները որոշ-

¹ А. Похлебаева. Правовой статус международной организации по миграции. Белорусский журнал международного права и международных отношений 2002 – №4, с. 18. http://elib.bsu.by/bitstream/123456789/29214/1/2002_4_JILIR_pokhlebaeva_r.pdf

² <http://www.un.am/hy/agency/IOM>

³ http://moscow.iom.int/russian/documents/IOM_Constitution_in%20Russian.pdf

վում են ՄՄԿ-ի և պետությունների միջև կնքված համաձայնագրերի հիման վրա:

Վերոգրյալի վերլուծությունից կարող ենք փաստել, որ ՄՄԿ-ն իր իրավական կարգավիճակով միջազգային միջպետական (կառավարական) կազմակերպություն է, որը միջազգային հանրային իրավունքին համահունչ իրավահարաբերությունների մեջ է մտնում այլ պետությունների և միջազգային կառավարական կազմակերպությունների հետ իրավահավասար պայմաններով:

ՄՄԿ-ի կարգավորիչ գործառույթն այն է, որ նրա բանաձևերն անդամ պետությունների համար ունեն խորհրդատվական բնույթ, և միևնույն ժամանակ՝ այդ բանաձևերը ՄՄԿ-ի անդամ պետությունների միգրացիոն քաղաքականության մշակման համար կողմնորոշիչ փաստաթղթեր են:⁴

Հստակեցված են ՄՄԿ-ի Հայաստանյան առաքելության գործունեության հիմնարար ուղղությունը, այն է՝ միգրացիայի գործընթացը կանոնավոր և մարդասիրական սկզբունքներով կառավարելու գործում Հայաստանի իրավասու մարմիններին և ոչ կառավարական կազմակերպություններին համակողմանի աջակցությունը: Միգրացիայի հարցում ՄՄԿ-ի գործունեության կարևոր ուղղություններից է միջազգային համագործակցության խթանումը, որը նկատի ունի միգրացիայի խնդիրների լուծման գործնականում արդարացված միջոցառումների մշակումը և միջազգային հանրության ուշադրությանը ներկայացնելը:

Պարզորոշ է, որ ՄՄԿ-ն իր գործունեությամբ ոչ միայն աջակցում է երկրների բնակչությանը, այլև այս կամ այլ կերպ «ներխուժում է պետությունների ներքին կյանքի ոլորտները»: Սակայն ՄՄԿ-ն նման գործունեությունն իրականացնում է տվյալ երկրի օրենքների սահմաններում: Տարիների փորձը ցույց է տալիս, որ միգրանտների իրավունքների և շահերի պաշտպանության հարցում որևիցե երկրում հակասություններ չեն առաջացել ՄՄԿ-ի և պետական իշխանությունների միջև:

Հայաստանի Հանրապետությունը ՄՄԿ-

ին անդամակցում է 1993 թվականից, երբ ՀՀ կառավարությունը ստորագրեց մի շարք փաստաթղթեր՝ արտոնելով ՄՄԿ-ի գործունեությունը ՀՀ-ում: ՀՀ-ում ՄՄԿ-ի գործունեության հետ առնչվող փաստաթղթերից առավել կարևորներն են հանրապետության կառավարության կողմից 1994 թվականին ստորագրած «Արտոնությունների և **անձեռնմխելիության** վերաբերյալ համագործակցության պայմանագիրը», 2001 թվականին վավերացված՝ «Փոխըմբռնման հուշագիրը»:

1993 թվականին Երևանում հիմնադրած իր ներկայացուցչության միջոցով ՄՄԿ-ը սերտորեն համագործակցում է ՀՀ կառավարության և ոչ կառավարական կազմակերպությունների հետ: Նման գործելակերպը ՄՄԿ-ին հնարավորություն է տալիս Հայաստանում մի շարք հեռանկարային ծրագրերի իրականացման համար: Իրականացվող ծրագրերից առաջնահերթայինը հանրապետությունում հավանական միգրանտների շրջանում խորհրդատվության կազմակերպումն է: Նույնքան կարևոր են ՄՄԿ-ի կողմից Հայաստանում միգրացիայի իրավիճակի համակողմանի ուսումնասիրությունը և հետազոտության արդյունքների առանձին ժողովածուով հրապարակումը: ՄՄԿ-ն իրականացնում է ոչ միայն խորհրդատվական առաքելություն, այլև հաճախ նյութական աջակցություն է ցուցաբերում: Նույն կերպ հայրենադարձները ՄՄԿ-ից աջակցություն են ստանում աշխատանքային խնդիրների լուծման գործում:

1997 թվականից սկսած՝ ՄՄԿ-ն Հայաստանում փոքր վարկերի տրամադրման միջոցով օգնում է Հայրենիք վերադարձողներին, ինչպես նաև փախստականներին և տեղահանված մարդկանց դառնալ ինքնաբավ: 2014 թվականի դրությամբ՝ Հայաստանում ավելի քան 2700 մարդ անցել է ՄՄԿ-ի Հայաստանյան առաքելության կազմակերպած **միկրոբիզնեսի** կառավարման և բիզնեսի ծրագրման ուսուցում: Այդ նպատակի իրականացման համար ՄՄԿ-ը հայրենադարձներին տրամադրել է 8,8 **միլլիոն** ԱՄՆ դոլար ընդհանուր գումարի 9650 վարկ: Տրամադրված գումարը նպաստել է 4800

⁴ А. Похлебаева. Правовой статус международной организации по миграции. Белорусский журнал международного права и международных отношений 2002 – №4, с. 17. http://elib.bsu.by/bitstream/123456789/29214/1/2002_4_JILIR_pokhlebaeva_r.pdf

շահառուի, այդ թվում՝ վարկառուների և նրանց աշխատողների կյանքի բարելավմանը⁵:

ՄՄԿ-ը երկարաժամկետ օգնություն է տրամադրում հայրենադարձներին: 2000-2012 թվականներին նյութական աջակցություն է տրամադրվել 6179 միգրանտի, ովքեր Հայաստան են վերադարձել հիմնականում եվրոպական պետություններից⁶:

ՄՄԿ-ի տեսադաշտում է նաև միգրանտների առողջապահական խնդիրների ապահովումը: ՄՄԿ-ի այս ոլորտի գործունեության ռազմավարությունը ներառում է. ա) միգրանտների առողջական վիճակի մշտադիտարկում, բ) միգրանտների առողջապահության ոլորտի նպաստավոր քաղաքականության և իրավական դաշտի ձևավորում, գ) միգրանտների համար նախատեսվող առողջապահական համակարգի հզորացում, դ) միգրացիոն առողջապահության ոլորտում համագործակցության, ցանցերի և միջազգային նախաձեռնությունների դյուրացում⁷:

Փորձը ցույց է տալիս, որ հիմնավորապես մշակված ծրագրերը և դրանց նյութական ապահովվածությունը ոչ միշտ են ապահովում ցանկալի արդյունքներ: Դեռևս հայ հասարակության մեջ չի ձևավորվել **միմյանց** հանդեպ և հայրենիք վերադարձածների նկատմամբ պատշաճ ուշադրություն և հոգատար վերաբերմունք:

Թեկուզ և ոչ սպասվելիք (ամբողջական) ծավալով, այնուամենայնիվ, ՄՄԿ-ի հոգատարությունը միգրանտների և նրանց ընտանիքի անդամների առողջական վիճակի բարելավման համար, դրական նշանակություն ունեցավ առողջապահության ոլորտի զարգացման համար, միաժամանակ՝ նպաստեց այդ ոլորտում տեղ գտած բացասական երևույթների վերացմանը:

ՄՄԿ-ի գործունեության առանցքային ուղղություններից է միգրացիայի ոլորտում ներգրավված մասնագետների որակային հատկանիշների բարձրացումը: Դա իրականացվում է մասնագետների համար դասընթացների, խորհրդատվությունների կազմակերպման, մե-

թոդական ուղեցույցների մշակման և այլ միջոցներով: Այդ նպատակի իրականացման համար ՄՄԿ-ի Հայաստանյան առաքելությունը հաճախ դասընթացների վարման համար հրավիրում է տարբեր երկրների առաջատար մասնագետների:

ՄՄԿ-ի Հայաստանյան առաքելության գործունեության կարևոր ուղղություններից է իր կողմից հայերենով միգրացիայի ոլորտի տերմինների բառարանի հրատարակումը: Բառարանը դարձել է հայ մասնագետների աշխատանքային ուղեցույցը:

ՄՄԿ-ի գործուն մասնակցությամբ 2013 թվականին հրավիրվեց միգրացիայի գործընթացների կանոնակարգման հարցերով ՄՄԿ-ի համընդհանուր վեհաժողովը: Ընդունված որոշումները կողմնորոշիչ նշանակություն ունեցան միգրացիայի ոլորտում պետությունների քաղաքականության հստակեցման գործում:

2013 թվականի սեպտեմբերին ՄՄԿ-ի աջակցությամբ Հայաստանն ստորագրեց «Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության միջազգային կոնվենցիան»: Անդամակցելով կոնվենցիային՝ Հայաստանը պարտավորություն ստանձնեց կենսագործելու այդտեղ ամրագրված դրույթները: Հայաստանում գործուն քայլեր կատարվեցին մարդու իրավունքների և ազատությունների ամրապնդման ասպարեզում:

ՄՄԿ-ի գործունեության կարևոր ուղղություններից է նաև տարբեր երկրների իշխանություններին աջակցելը միգրացիայի վերաբերյալ օրենսդրության հստակեցման ասպարեզում: Այսպես՝ ՄՄԿ-ի աջակցությամբ մշակվեց և գործողության մեջ դրվեց «Հայաստանի միգրացիոն օրենսդրության ներդաշնակեցումը միջազգային չափանիշներին» օրենսդրական նորմը: Փաստորեն, դա դարձավ միգրացիայի ոլորտի ՀՀ ազգային ծրագիր:

ՄՄԿ-ի Հայաստանյան գրասենյակը դրական գործունեություն է ծավալում նաև այնպիսի յուրահատուկ ոլորտում, ինչպիսին հանրապետության սահմանների ապահովումը և ան-

⁵ Տե՛ս <http://www.un.am/hy/agency/iom>, 11/13

⁶ Տե՛ս <http://www.un.am/hy/agency/iom>, 9/13

⁷ Տե՛ս <http://www.un.am/hy/agency/iom>, 10/13

ձեռնմխելիության ամրապնդումն է: ՄՄԿ-ն աջակցել է Հայաստանում սահմանների կառավարման բարեփոխումների գործընթացի իրականացմանը: Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության համագործակցությամբ երկրի սահմանային անցման բոլոր հսկիչ կետերում ներդրվել է էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ:

ՄՄԿ-ն իր աջակցությունն է բերել նաև ՀՀ ոստիկանության կենտրոնական ստորաբաժանումները և Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանն Ինտերպոլի «1-24/7» տեղեկատվական շտեմարանին միացնելու գործում:

ՄՄԿ-ի բազմաբնույթ գործունեության կարևոր ուղղություններից է «Անձնագրերի ստուգման կարգը» ձեռնարկի հրապարակումը: Հրատարակված ձեռնարկը ՀՀ ոստիկանության համար ուղեցույց է ծառայում Հայաստանում անօրինական միգրացիայի կանխարգելման աշխատանքների կազմակերպման համար:

Նշանակալից է նաև ՄՄԿ-ի գործունեությունը Հայաստանի աշխատուժի տեղաշարժի կարգավորման, մեկնածուներին արտերկրներում առանց բարդությունների ինտեգրման և ցանկություն հայտնաձևների վերադարձի կազմակերպման համար: Միգրանտների կողմից դրակառուցված է ընկալվում ՄՄԿ-ի կազմակերպած խորհրդատվությունը: Խորհրդատվությունը կազմակերպվում է երկու՝ միմյանց սերտորեն առնչվող խմբերի շրջանում, այն է. ա) միգրանտների հետ աշխատանքներ կազմակերպող մասնագետների որակավորման բարձրացում, բ) աշխատուժի տեղաշարժում ներգրավված մարդկանց ոլորտի խնդիրներին և սպասվելիք արգելքներին համակողմանի ծանոթացում:

ՄՄԿ-ի կողմից ներկայացված «Հայաստանում աշխատանքային միգրացիայի կառավարման կարիքների գնահատումը» զեկույցը հստակեցրեց ոլորտի կարգավորման հիմնական ուղենիշները: Զեկույցն ունեցավ ոչ միայն գործ-

նական նշանակություն, այլև խթանեց միգրացիայի վերաբերյալ օրենսդրական նոր դրույթների մշակումը: Այսպես՝ ընդունվեց «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքը, որը հետագայում հստակեցվեց՝ «Հայաստանի Հանրապետության 2013-2018 թթ. զբաղվածության ռազմավարությունը»:

Բնակչության շրջանում միգրացիայի վերաբերյալ համակողմանի տեղեկատվության զգալի աշխատանք է կատարում Հայաստանում միգրացիոն ռեսուրսների կենտրոնը (այսուհետ՝ ՄՌԿ): Տվյալ կազմակերպությունը հիմնվել է ՄՄԿ-ի Հայաստանի առաքելության և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության գործակալության համատեղ ջանքերով:

